

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց,  
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14

# Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ



# Մաշտոցի Արձագանգ

ՓԵ տարի  
**2008**

Տարեկան ժողովածու

## Բովանդակություն

- Ինքնանորոգման առիթ Շաղիկ Պոյաճեան
- Խօսք Հովիւի եւ հոգաբարձութեան Տէր Գառնիկ քհնյ. Գոյունեան
- Շնորհաւորագիր Ղեւոնդ Աբղ. Բենդէզեան  
Վարիշ Տնօրէն՝  
Հայաստանեայց Եկեղեցւոյ  
Կիրակնօրեայ Դպրոցներու
- Մեր խօսքը Տնօրէն եւ ուսուցչական կազմ
- **www.sourphagop.org** ը թիւերով
- Հակիրճ տեղեկութիւններ 2007-2008 Տարեշրջանի մասին
- Ձեռնարկներ եւ արտադասարանային աշխատանքներ ժամանակագրական շարքով

Խմբագրական

## Ինքնանորոգման առիթ

2008 թուականի Յունիս ամսուան ժամանումով վերջ կը գտնէ «Մաշտոցի Արձագանգ»-ի հրատարակման տասնըփինգերորդ տարին ու լոյս կը տեսնէ մեր տարեկան ժողովածուն: Այս հրատարակութիւնը կու գայ ամփոփել ամբողջ տարուան մը աշխատանքը, մէկտեղելով ամսական տասը թիւեր, նոյն ատեն հանրութեան ներկայացնելով Կիրակնօրեայ դպրոցի տարեկան տեղեկատուն, ինչպէս նաեւ այլ բացառիկ գրութիւններ ու յօդուածներ:

Հաւատարիմ մնալով իր սկզբնական եւ գլխաւոր կոչումին, «Մաշտոցի Արձագանգ»-ը շարունակեց հանրութեան հրամցուիլ իբրեւ ժողովրդական ամսաթերթ, գլխաւոր նիւթ ունենալով Հայաստանեայց եկեղեցույ տօներն ու անոր յարակից նիւթեր, Սուրբ Գիրքի հետ ծանօթացումը, ինչպէս նաեւ մանկապատանեկան կրօնական գիտելիքներն ու ընթերցումները: Յարգուեցաւ խմբագրական կազմին կողմէ հաստատուած ամսական դրութիւնը, ու կանոնաւորութեամբ լոյս տեսան մեր տասը թիւերէն իւրաքանչիւրը: Անոնց սփրումը ե՛ւս կատարուեցաւ նոյնքան կանոնաւորութեամբ ու արձանագրեց հաստատ ան: Մարտահրաւերներու տասնըփինգերորդ տարի մըն է որ կ'աւարտի այս ամիս: Զանազան դժուարութիւններու առջեւ կը գտնուի խմբագրական կազմս իւրաքանչիւր ամիս, եւ այդ դժուարութեանց յաղթահարման միակ լուծումը կը հանդիսանայ մեր հաւատարիմ ընթերցողներուն հանդէպ մեր նուիրումը: Փոխադարձ հաւատարմութեան արժէքով մը մղուած, «Մաշտոցի Արձագանգ»-ը կը յաջողի հրատարակուիլ կանոնաւորապէս զանազան տեսակի սահմանափակումներով հանդերձ:

Մարտահրաւերները սակայն կը մնան միշտ ներկայ եւ ամառնային արձակուրդը կը նկատենք ըլլալ ո՛չ միայն հանգիստի ու դադարի արդար առիթ, այլ նաեւ եւ մանաւա՛նդ յարգի եւ շինիչ ինքնաքննարկման շրջան: Նոր գաղափարներու յղացման եղանակն է ամառը, վերակազմակերպութեան, յաջորդ տարուան հրատարակութիւններու հասցէին նախապատրաստութիւններու եւ որոշումներու:

Այս տարի, մեր մտածումները պարտին կեդրոնանալ երկու յատուկ մարտահրաւեր- հարցականներու շուրջ որոնք ամբողջ տարուան ընթացքին ներկայ մնացին մեր աշխատանքի կողքին ու արժանի են այժմ իւրայատուկ ուշադրութեան: Անոնք են նիւթերու վերանորոգում եւ յօդուածագիր

գործակիցներու խմբակի զարգացում: Ի՞նչ նիւթեր պիտի արծարծուին յաջորդ տարի մեր էջերէն ներս, ի՞նչ նիւթերու տեղ պիտի տրուի մեր ամսաթերթին մէջ: Ի՞նչ նոր ոճ կամ ներկայացման ձեւ կարելի է կիրառել վերանորոգելու ու բարեփոխելու համար թէ՛ մեր նիւթերը եւ թէ՛ անոնց ներկայացման ձեւը: Իսկ ովքե՞ր կարող են մեզի օգտակար դառնալ իրենց գաղափարներով, գրութիւններով կամ այլ կարգի ներդրումով:

Երկու ամիսներու վրայ երկարող ամառնային դադարը կը յուսանք լիապէս օգտագործել իբրեւ առիթ այսպիսի հարցականներու ուսումնասիրման համար: Կը մնանք յոյսով որ հարցադրումները ամբողջացան գոհացուցիչ պատասխաններով եւ լուծումներով ու մենք զիրար վերստին ընթեռնենք, սիրելիներ, վերանորոգուած եռանդով եւ խանդավառութեամբ:

Բարի արձակուրդ ձեր բոլորին եւ անգամ մը եւս, շնորհակալութիւն ձեր հաւատարմութեան ու կանոնաւոր հետեւողականութեան համար:

Շաղիկ Պոյաճեան

## Խօսք Հովիտի եւ Հոգաբարձութեան

Երկուշաբթի, 12 Մայիս, 2008

Մոնթրէալ

Սիրելի Տնօրէնութիւն, Ուսուցչական Կազմ, Աշակերտ-Աշակերտուհիներ  
Եւ Ծնողքներ,  
Աստ,

Սիրելիք,

Այս տարի մեր համայնքին 50-ամեակն է: Յիսուն տարիներ առաջ Մոնթրէալի Սէն Զօթիք թաղամասին մէջ սկսաւ անիկա: Եւ առաջին օրէն, ազգային երազները իր հորիզոնին՝ նպատակադրեց կրօնական եւ կրթական առաքելութեան նուիրել ինքզինք:

1959 Սեպտեմբերին կը սկսէր Ծաբաթօրեայ մեր դպրոցը: Եւ նկատի ունենալով, որ այն օրերու Գործադիր Մարմինին (այսպէս կը կոչուէր Հոգաբարձութիւնը) ծրագիրն էր Կրօնքի դասաւանդութեան համար Կիրակին ունենալ, ուստի կրօնքը կը դասաւանդուէր նախքան եկեղեցական արարողութիւնը, որպէսզի աշակերտ-աշակերտուհիները իրենց ծնողներուն հետ եկեղեցի մտնէին, եւ մասնակցէին: Այսպէս պիտի զարգանար Հայեցի Դաստիարակութիւնը՝ մինչեւ 1962-1963-ի տարեշրջանին աւարտը: Յաջորդ տարեշրջանին, Կիրակնօրեայ կրօնքի դասաւանդութիւնը պիտի ներառուէր Ծաբաթօրեայի կրթական ծրագրին մէջ, եւ Կիրակնօրեայ ուսուցումը դադրէր: Զուտ կրօնական Կիրակնօրեայ կրթարանի երազը համայնքէս ներս պիտի իրականանար 1980-ի Սեպտեմբերին: Ու այն թուականէն ստիւն Ս. Յակոբի Կիրակնօրեան իր ծառայութիւնը շարունակականօրէն կը բերէ եւ պիտի բերէ՝ Աստուծոյ փառքին, եւ մեր մատղաշ սերունդի հոգեւոր պայծառացման համար: Մեծ զոհողութեամբ է, որ Տնօրէնութիւն եւ Ուսուցչական Կազմ այս ծառայութիւնը անսակարկ կը կատարեն: Բիւր յարգանք իրենց նուիրումին:

Ինչպէս տեղեակ էք, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2008 թուականը «Քրիստոնէական Դաստիարակութեան Տարի» հռչակեց: Իր Կոնդակին մէջ Կիրակնօրեաներուն առնչութեամբ հետեւեալը գրած է Վեհափառը. «Կիրակնօրեայ վարժարաններու ներկայ ցանցը անհրաժեշտօրէն կարիքը ունի վերաշխուժացման: Այս մարզէն

Ուրա աշակերտութեան թիւի նուազում եւ ընդհանուր հետաքրքրութեան պակաս մը կը նշմարենք: Կիրակնօրեայ վարժարանին դերը անփոխարինելի է, որպէս ամբողջացուցիչ ընտանիքի ու դպրոցի կողմէ ջամբուող Կրօնական դաստիարակութեան: Մեր սպասումն է, որ մեր թեմերը վերակազմակերպումի ենթարկեն եկեղեցիներու ու դպրոցներու կողքին գործող Կիրակնօրեայ վարժարանները: Մեր հայրական ջերմ թելադրանքն է, որ մեր ծնողները իրենց զաւակները եւ դպրոցները իրենց աշակերտները առաջնորդեն Կիրակնօրեայ վարժարան»: Հայրապետի սպասումին դրականօրէն եւ գործնապէս պատասխանելով՝ այս 50-ամեայ համայնքին ներքին ուժը վերանորոգած պիտի ըլլանք:

Հովիւ Եւ Հոգաբարձութիւն  
Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցու

**Շ Ն Ո Ր Հ Ա Ի Ո Ր Ա Պ Ի Ր**  
**ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻՆ**  
**ՍՈՆԹՐԵԱԼ - ԳԱՆԱՏԱ**

Մեծ ուրախութեամբ ստացայ ձեր ղրկած նամակը, ուր կը յայտնէք Գանատայի, Մոնթրեալ քաղաքի Ս. Յակոբ եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցին 28-րդ, անոր պարբերաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին 15-րդ եւ կայքէջին 7-րդ տարեդարձերուն նշման մասին:

Վստահաբար դիւրին չեղաւ այս ճամբան ձեզի համար, ինչպէս դիւրին չեղաւ մեր հայրերուն համար, որոնք տեսիլքը իրենց աչքերուն, նոր սերունդի դաստիարակութեան ի խնդիր, ամէն ջանք ի գործ դրին, հայ դպրոցի կողքին, Կիրակնօրեայ Վարժարաններով կրօնական դաստիարակութիւն ջանքելու հայ մանուկին:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան ամէնէն կենսական երեսներէն մէկն է այս, որ իր հաստատումէն մինչեւ այսօր Ս. Աթոռոյս բոլոր հայրապետներուն խնամքին ու հոգածութեան առարկան դարձած է: Այս է նաեւ Ս. Աթոռոյս արժանընտիր Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատուէրը բոլորիս, որուն առաւել մղում տուաւ Նորին Սուրբ Օծութիւնը, 2008 տարին հռչակելով «Քրիստոնէական Դաստիարակութեան Տարի»:

Քրիստոսի մտածողութեան եւ իր ուսուցումներուն ու երկնատուր պատգամներուն մէջ, յատուկ շեշտ մը կայ, դրուած մանուկներուն վրայ: Մանուկը, Յիսուսի հայեցողութեամբ այն տիպարն է, որուն նմանելով միայն կրնանք ժառանգել Աստուծոյ Արքայութիւնը (հմմտ Ստ 18. 3): Անոր հոգին այն պարարտ հողն է, ուր իյնալով սերմնացանին բարի սերմերը, կը միաձուլուին անոր անմեղ հոգիին հետ, մէկի տեղ երեսուն, վաթսուն եւ հարիւր արդիւնք կու տան:

Ահաւասիկ 28 տարիներ անցան այն օրէն, երբ Գանատայի Հայոց Թեմի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ այգեստանին մէջ, Կիրակնօրեայ մեր Վարժարանը ծաղկեցաւ: Այս Կիրակնօրեային միջոցաւ, Քրիստոսի սիրոյ եւ քրիստոնէական դաստիարակութեան բարի սերմերը սկսան աճիլ մատղաշ սրտերու մէջ, ուր անընդհատ ջրտուք կը կատարուի նուիրեալ անձերու կողմէ, որպէսզի հայ եկեղեցւոյ հաւատքը աճի:

Սրտանց կը շնորհաւորեմ ձեզ, այս երեք ամեակներու արժանաւորապէս նշման առիթով, որ յաջողութիւն մըն է, անկասկած, Կիրակնօրեայ մեր Մեծ Ընտանիքին համար: Կը շնորհաւորեմ դպրոցին տեսչութիւնը, ուսուցչական կազմը եւ աշակերտութիւնը, ինչպէս նաեւ, «Մաշտոցի Արձագանգ» պարբերաթերթին եւ կայքէջին խմբագրական կազմերը:

Այս պահուն, աղօթքս ձեր աղօթքին կը միացնեմ, եւ անուշաբոյր խունկի նման զայն կը բարձրացնեմ առ Աստուած, որպէսզի օրինէ եւ պահէ Հայաստանեայց եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարանները եւ մանաւանդ Սոնթրալի Ս. Յակոբ եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարանը: Թող Աստուած իր երկնառատ պարգեւներով հարստացնէ նաեւ ձեր բոլորը, քրիստոնէական շունչով ու մեր հայրերու սուրբ հաւատքով վերանորոգէ ձեր կեանքը, որպէսզի Աստուածաշունչի պատգամներով ու մեր եկեղեցւոյ սուրբ աւանդութեամբ լեցուած յառաջ երթաք, ի պայծառութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ, եւ ի յաւերժացումն ազգիս հայոց:

Աղօթարար  
Ղեւոնդ Աղ. Բենուզեան  
Վարիչ Տնօրէն Կիրակնօրեայ Դպրոցներու



## ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ եւ աւարտել մեր 28րդ տարեշրջանը: Այս տարի նաեւ 15րդ տարեդարձն է մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ անցեալ Սուրբ Յակոբի տօնի օրը՝ Դեկտեմբեր 2007 ին տօնեցինք մեր Կայքէջին՝ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org) ին, 7րդ տարեդարձը:

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»

Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքերը, որոնք Հայաստանեայց եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն են, կը մնան հիմը մեր եկեղեցւոյ պայծառութեան: Այն եկեղեցիները որոնց մանուկները արգելքներ ունին երթալու Յիսուսի, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին (vision), նամանաւանդ Հիւսիսային Ամերիկայի մէջ:

### [www.sourphagop.org](http://www.sourphagop.org) –ը 7 տարեկան:

Մեր այս տարուան դպրոցական տարեշրջանի ընթացքին մեր կայքէջը, [www.sourphagop.org](http://www.sourphagop.org) ը տօնեց իր 7-ամեակը եւ շարունակեց ծաւալիլ: Հասաւ 110 երկիրներու 1,724 քաղաքները, եւ ամսական դրութեամբ ունեցաւ 6,000-է աւելի այցելութիւններ: Մեր կայքէջին ամենէն մեծ արժէքը անոր 99% տոկոսով Արեւմտահայերէնով ըլլալը եւ կամաւոր խմբակի մը անսակարկ աշխատանքին շնորհիւ գոյութիւն ունենալն է: Մարդուժի եւ պիտճէի սահմանափակ մեր կարողութիւնները նկատի առնելով մեր կատարած գործը օրինակ պէտք է հանդիսանայ ուրիշ անհատներու եւ հաստատութիւններու որոնք հայապահպանումով, արեւմտահայերէնով եւ կամ Քրիստոնէական Դաստիարակութեամբ հետաքրքրուած են:

### «Մաշտոցի Արձագանգ» ի 15-ամեակ:

Մեր այս դպրոցական տարուան ընթացքին հրատարակեցինք նաեւ մեր ամսաթերթը 15րդ տարին ըլլալով եւ մեր կայքէջի ծաւալումով, ծաւալեցաւ նաեւ մեր ամսաթերթի կարդացողներուն թիւը: «Մաշտոցի Արձագանգ»-ի միջոցաւ, այս տարի եւս արեւմտահայերէնով 166 քրիստոնէական դաստիարակութիւն ջամբող էջեր աւելցուցինք համացանցին վրայ:

### Աշակերտութեան թիւի նուազում:

Այս տարուան ընթացքին արձանագրուած մեր աշակերտներուն թիւը 53 էր, եւ իւրաքանչիւր Կիրակի օրուան միջին ներկայութիւնը 35: Այս երկու թիւերը յաջորդաբար 40% եւ 30% նուազում արձանագրած են բաղդատուած մեր անցեալ տարուան թիւին: Եկեղեցին ընդհանրապէս շատ աշխատանք պէտք է կատարէ

բազմացնելու համար Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներուն թիւը որպէսզի մեր աշակերտները, իրենք ալ իրենց կարգին, ապագային աւելցնեն եկեղեցի յաճախողներուն թիւը:

### Ինքնանորոգում:

Այն հաստատութիւնները որոնք ժամանակ չեն տրամադրեր իրենք զիրենք նորոգելու, կը լճանան: Նկատելով որ Կիրակնօրեայ Դպրոցը կը գոյատեւէ կամաւոր աշխատողներով, պայման է որ իւրաքանչիւր տարի նոր արիւն եւ նոր կամաւորներ աւելնան այս գործին որպէսզի թեթեւցնեն մեր բեռը: Սակայն, «Հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ. հետեւաբար խնդրեցէք հունձքի Տիրոջմէն, որ իր հունձքին համար մշակներ պատրաստէ եւ ղրկէ:»

### Քրիստոնէական Դաստիարակութեան Տարի:

Ինչպէս տեղեակ էք, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2008 թուականը «Քրիստոնէական Դաստիարակութեան Տարի» հռչակեց եւ Իր Կոնդակին մէջ գրեց նաեւ Կիրակնօրեաներու առնչութեամբ: Վեհափառ Հայրապետը ունի:

Սպասում : Որ մեր թեմերը վերակազմակերպումի ենթարկեն եկեղեցիներու ու դպրոցներու կողքին գործող Կիրակնօրեայ վարժարանները:

Ա. Թելադրանք: Որ մեր ծնողները իրենց զաւակները առաջնորդեն Կիրակնօրեայ վարժարան:

Բ. Թելադրանք: Որ դպրոցները իրենց աշակերտները առաջնորդեն Կիրակնօրեայ վարժարան:

Մեր եկեղեցւոյ Հովին ու Հոգաբարձութիւնը իրենց խօսքին մէջ անդրադառնալով Վեհափառ Հայրապետի Կոնդակին գրեցին



«Հայրապետի սպասումին դրականօրէն եւ գործնապէս պատասխանելով՝ այս 50-ամեայ համայնքին ներքին ուժը վերանորոգած պիտի ըլլանք:»

Մենք ալ մեր կարգին, Կիրակնօրեայ Դպրոցի Տնօրէնութիւն եւ Ուսուցչական կազմ, կը պատրաստուինք մեր 2008-2009 (29րդ) Տարեշրջանի վերամուտին՝ Սեպտեմբեր 14, 2008 ին յուսալով որ թեմերը վերակազմակերպումի կ'ենթարկեն Կիրակնօրեայ Դպրոցները եւ ծնողները իրենց զաւակները եւ դպրոցները իրենց աշակերտները կ'առաջնորդեն Կիրակնօրեայ Դպրոց:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական կազմ

## www.sourphagop.org ը՝ թիւերով

Ահաւասիկ www.sourphagop.org ի եզակի այցելուներու եւ այցելութիւններու աճը անցնող վեց տարիներուն ընթացքին:



### 2007 ի Հաշուեցույց

**364,573** զարկեր  
**74,214** այցելութիւններ  
**14,990** Եզակի այցելուներ  
**110** Երկիրներ  
**1,724** Քաղաքներ  
**105,867** Բացուած էջեր  
**15,858** .pdf գրութիւններ  
**11,685** «Մաշտոցի Արձագանգ»ի թիւեր

Երկիր	Այցելութիւն
ԱՄՆ	59,519
Գանատա	5,683
Շուէտ	1,218
Ֆրանսա	839
Թուրքիա	754
Գերմանիա	401
Անգլիա	380
Լեհաստան	289
Հոլանտա	238
Յունաստան	229
Քուէյթ	208
Աւստրալիա	168
Լիբանան	157
Ռուսիա	141
Արաբ. Էմիր.	126
Իրան	122
Հայաստան	117

ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ  
2007-2008 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ եկեղեցույ հոգաբարձութեան հովանաւորութիւնը: Հոգաբարձութեան ներկայացուցիչն էր Պրն. Լեւոն Պոյաճեան:

**28-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին**

2007-2008 տարեշրջանը դպրոցին 28րդ տարեշրջանն է: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնները Խաչվերացի Կիրակին՝ Սեպտեմբեր 16, 1980 ին եւ յաջորդական 28րդ տարեշրջանը բոլորեց այս տարի: Իւրաքանչիւր տարեշրջան կը սկսի Խաչվերացի Կիրակին եւ կը տեւէ մինչեւ Յունիսի երկրորդ Կիրակին: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի Օրերը 10:30-1:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ մանկապարտէզի 3, Նախակրթարանի 6 եւ Երկրորդականի 2 դասարաններ:

**15-ամեակ «Մաշտոցի Արձագանգ» ին**

Մեր 2007-2008 տարեշրջանի ընթացքին նաեւ հրատարակեցինք, 15րդ տարին ըլլալով, մեր պարբերաթերթը «Մաշտոցի Արձագանգ»ը ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»-ը կը տպուի եւ կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ: «Մաշտոցի Արձագանգ»-ը PDF ձեւով կը գտնուի համացանցի հետեւեալ էջին վրայ [www.sourphagop.org/mashdots](http://www.sourphagop.org/mashdots) :

**7-ամեակ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org) ին**

10 Դեկտեմբեր 2000 ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org): Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները.  
Ծառու Աւետարան, Church Timeline, Daily Bible, Տօներ, Բառարան, Պարբերաթերթ, Կապեր, Կարծիքդ, Զարգացման Մրցում եւ Խաղեր:

**ԿԱԶՄ**

Կիրակնօրեայ Դպրոցի 2007 – 2008 տարեշրջանի իրենց կամաւոր մասնակցութիւնը կը բերեն հետեւեալները.-

Թամար Գիզիրեան եւ Վերժին Գէպթանճեան  
Դաստիարակներ՝ Մանկապարտէզի Ա. Բ. Գ. եւ Նախ.Ա. կարգերուն

Գարոլ Մանուկեան եւ Յասմիկ Նաճարեան  
Դաստիարակներ՝ Նախակրթարանի Բ. Գ. եւ Դ. կարգերուն

Յասմիկ Գանաճեան՝ Դաստիարակ՝ Նախակրթարանի Ե. եւ Զ. կարգերուն

Շողիկ Նաճարեան՝ Դաստիարակ՝ Երկրորդականի Ա. եւ Բ. կարգերուն

Շաղիկ Պոյաճեան՝ Խմբագիր «Մաշտոցի Արձագանգ» ի

Թորոս Պապիկեան՝ Տնօրէն

Կազմը գումարեց ժողովներ որոնց ընթացքին արձարծուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներ եւ այլ նիւթեր:

#### ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2007-2008 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 53 է, իսկ շաբաթական ներկայութեան միջինն է 35 աշակերտ՝ բաժնուած 11 կարգերու:

#### ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱՆ

2007-2008 տարեշրջանին կիրակնօրեայ դպրոցի առօրեայ յայտագիրը կ'ընթանայ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր կը դասաւանդուին Ս. գրական, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

#### Լսարանային բաժին

Տէրունական աղօթքի, մաղթանքի եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն եւք, աշակերտները կը բաժնուին 4 խումբերու:

- Մանկապարտէզի Ա., Բ., Գ. եւ Նախակրթարանի Ա. դասարաններ
- Նախակրթարանի Բ. եւ Գ. եւ Դ. դասարաններ
- Նախակրթարանի Ե. եւ Զ. դասարաններ
- Երկրորդականի Ա. եւ Բ. դասարաններ

Պահը կ'ընթանայ հետեւեալ ձեւով՝

- Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսի ուսուցում:
- Բարոյալից պատմուածքներու պատմութիւն:
- Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում:
- Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն:

#### Դասարանային բաժին

Կը դասաւանդուի ըստ դասագիրքերու:

## ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՔՈՎ

9 Սեպտեմբեր 2007 Արձանագրություն

16 Սեպտեմբեր 2007 Տարեկիզբ եւ վերամուտ

23 Սեպտեմբեր 2007 Վարժարանի աշակերտությունը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդուեցաւ:

14 Հոկտեմբեր 2007 Թարգմանչաց տօնի յատուկ յայտագիր:

30 Դեկտեմբեր 2007 Ամանորի եւ Ս. Ծննդեան զոյգ տօներու հանդիսութիւն, ուր տեղի ունեցաւ աշակերտներուն պատրաստած գեղարուեստական ելոյթը: Հանդիսութիւնը վերջ գտաւ հիւրասիրութեամբ եւ նուէրներու բաշխումով:

3 Փետրուար 2008 Վարդանանց եւ Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարութիւն:

Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունի իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը:


Փետրուար 4 - 10	Ծամոն
Փետրուար 11 - 17	Հեռառեսիլ, Computer, այլ screen ով Խաղեր
Փետրուար 18 – 24	Շաքար
Փետրուար 25 – Մարտ 2	Կազային խմիչքներ (pepsi, 7up, coke, crush)
Մարտ 3 – 9	chocolate
Մարտ 10 –16	chips
Մարտ 17 -22	Հաւկիթ

15 Մարտ 2008 Դպրոցի ուսուցչական կազմը եւ աշակերտներուն մեծ մասը մասնակցեցան մեր Եկեղեցւոյ Գործադիր Մարմնի կողմէ կազմակերպուած նախաԾաղկազարդեան հաւաքոյթին:


16 Մարտ 2008 Դպրոցը փակ էր Ծաղկազարդի առթիւ:

23 Մարտ 2008 Սբ. Զատկուայ յատուկ նշում:

8 Յունիս 2008 Ամալերջի հանդէս



2007 - 2008 տարեշրջանի իւրաքանչիւր դասարանի արձանագրություն եւ միջին ներկայություն



2007 - 2008 տարեշրջանի իւրաքանչիւր Կիրակի օրուայ ներկայություն

# ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

## ԺԵ. Տարի

### Խմբագիր՝ Շաղիկ Պոյաճեան

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ  
համացանցի վրայ:

**[www.sourphagop.org/mashdots](http://www.sourphagop.org/mashdots)** հասցէով

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ  
Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը.-

Ուսուցիչներ՝

Պարթերաթերթ՝  
Տնօրէն՝

Թամար Գիզիրեան  
Վերժին Գէպթանճեան  
Յասմիկ Նաճարեան  
Գարու Մանուկեան  
Աշխէն Իշխանեան  
Շողիկ Նաճարեան  
Յասմիկ Գանաճեան  
Շաղիկ Պոյաճեան  
Թորոս Պապիկեան

# Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցու Սուրբ Յակոբ Կիրակցորեայ Դպրոցի ամսաթերթ

Այս թիով...

Խմբագրական՝

Սորվիլ վստահիլ Աստուծոյ: Էջ 2

Խաչվերաց, Սուրբ Գեորգ զօրավար, Վարազայ Սուրբ Խաչ. Սեպտեմբեր ամսուան բացատրական բառարան: Էջ 3-4

Ո՞վ է արեղան, ի՞նչ է բազպանը, ու՞ր կը գտնուի Գողգոթան. եկեղեցական բառարան: Էջ 5

Իմաստութիւնը կեանքով կը վարձատրէ իրեն ապաւինողները. խօսքն Աստուծոյ: Էջ 6

Հայաստանեայց եկեղեցին, հարցումներով, պատասխաններով: Էջ 6

«Եկեղեցի» բառին երկու իմաստները: Էջ 7

Աստուածաշունչը մանուկներու համար. Սերմնացանին առակը: Էջ 8-9-10


Եզակի գիրեր: Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը: Էջ 12-13-14-15

Կիրակցորեայ Դպրոցի Ամավերջի Հանդէս: Էջ 15

Սեպտեմբեր 2007

ԺԵ տարի- թիւ 1



Ինչպէս մարմինը առանց հոգիի մեռած է, այնպէս ալ հաւատքը առանց գործերու մեռած է:

Յակոբոսի 2.26

Խմբագրական

Սորվիլ վստահիլ Աստուծոյ

Որքան յաճախ կը պատահի որ կեանքի ստեղծած կացութեան մը առջեւ մենք մնանք դժգոհ, մտահոգ, կասկածող, եւ նոյն այդ կացութեան տարողութեան առջեւ մենք մեզ զգանք տկար եւ յուսահատ: Մեզի այնպէս կը թուի թէ կացութիւնը այնքան դժուարին է թէ մենք որեւէ ձեւով պիտի չյաջողինք զայն դիմագրաւել ու անոր վրայ իշխել: Նիւթեղէն աշխարհի ստեղծած դիմադրականութիւն է այս, պայմանաւորուածութիւն, ուր երեւակայութիւնը ժխտական կերպով կը ծաւալի եւ արդիւնքը կ'ըլլայ դժուարութեան առջեւ կքած ըլլալու այս զգացումը: Կրօնական առումով պիտի ըստինք չարին ներգործութիւնն է այս, անոր ծածուկ աշխատելակերպը մարդուս մօտ կասկած եւ տկարութիւն ստեղծելու ու այդպիսով մեզ հեռացնելու Աստուծմէ:

Մեր կեանքերէն ներս Աստուծոյ ներկայութիւնը զանազան կերպերով կ'արտայայտուի: Այդ կերպերէն մէկն է այն հոգեկան խաղաղութիւնն ու հոգիի հանգստութիւնը որմով մեր դժուարութեանց առջեւ կը մնանք տոկուն ու անխախտ, զանոնք ամբողջութեամբ եւ անկեղծութեամբ վստահելով Աստուծոյ, հաւատալով թէ Ան գիտէ ձեր լաւագոյն ձեւով հոգալու մեր պէտքերը:

Կը պատահի որ մեր մարդկային պայմանաւորուածութիւնը անկարող կը գտնուի ամբողջութեամբ յանձնուելու Աստուծոյ ու մենք, վստահելով հանդերձ Անոր կը շարունակենք մտածել նոյն այդ կացութեան մասին ու վերլուծել զայն: Այս անգամ մը ե՛ւս չարին ներգործութիւնն է. ան փորձութեան կ'ենթարկէ մեզ ու կը ձգտի մեզ հեռացնել Աստուծոյ խոստացած «դալար հովիտներէն»:

Աստուծոյ վստահիլ կը նշանակէ ամբողջութեամբ անոր յանձնել կացութիւնը ու չակնկալել որ Ան մեզ պատասխան տայ մե՛ր ճիշդ գտած ու ցանկացած ձեւով: Վստահիլ Աստուծոյ կը նշանակէ վստահիլ Անոր դատողութեան ու Անոր մեզի համար նախատեսած ուղղութեան: Իսկ ինչպէ՞ս գիտնալ եթէ առ Աստուած մեր վստահութիւնը ամբողջական եւ անկեղծ է: Պարզ է այդ: Այն վայրկեանին երբ կը դադրինք մտահոգուելէ ու կասկածելէ, ա՛յդ իսկ վայրկեանին վստահած կ'ըլլանք Աստուծոյ ամբողջ մեր էութեամբ:

«Մաշտոցի Արձագանգ» Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ Խմբագիր՝ Ծաղիկ Թորիկեան-Պոյաճեան  
Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը  
Ուսուցիչներ՝ Վերժին Գիւլթանճեան, Թամար Գիզիրեան, Յասմիկ Նաճարեան, Գարու Մանուկեան, Ծողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան

## Սեպտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

### Սեպտեմբեր 16 Խաչվերաց



Խաչվերաց բառին իմաստն է հպարտութեամբ եւ յաղթականօրէն խաչը վեր առնել, ցուցադրել, փառաւորել:

Խաչվերացը տարածուն ժողովրդականութիւն ունեցող տաղաւար մըն է որ նաեւ կը կոչուի Վերացման Ս. խաչ: Ան համաքրիստոնէական բնոյթ ունի: Ընդհանրապէս միւս եկեղեցիները զայն կը տօնեն Սեպտեմբեր 14-ին, իսկ Հայաստանեայց եկեղեցին հոյն թուականին ամենէն մօտ Կիրակի օրը, որ կրնայ զուգահայիլ Սեպտեմբեր 11-էն 17-ի միջեւ:

Խաչվերաց տօնը կը յիշատակէ Հերակլ կայսրի յաղթական վերադարձը Կ. Պոլիս, իր հետ վերադարձնելով Երուսաղեմէն յափշտակուած Ս. խաչը որ պարսիկներու ձեռքը ինկած էր Խոսրով Բ. Շահին օրով: Կայսրը անձամբ կը գլխաւորէ այն թափօրը որ Կ. Պոլիսէն դէպի Երուսաղեմ կը փոխադրէ խաչը: Հայ ժողովուրդին համար ծայրայեղ սրբութիւն կը նկատուի այդ օրերուն խաչափայտին հայրենի հողերուն ու դաշտերուն վրայէն անցնելու պատեհութիւնը:

Խաչը փառաւորուած էր. վե՛ր բարձրացուած. եւ հայ ժողովուրդը ոգետորդ այս դէպքը դարձաւ տօն՝ Ս. Խաչի. Կոչուեցաւ Խաչվերաց, խաչը փառաբանելու, խաչին յաղթանակը նշելու մեծ տօն:

### Սեպտեմբեր 29 Սուրբ Գեորգ զօրավար

Ի՞նչ նմանութիւն կայ Գեօ, Գեի, Ծորն եւ Ծորնիկ անուններուն միջեւ: Անոնք բոլորն ալ Գեորգ արական անունին փաղաքշական տարբերակներն են, որոնք ընդհանրացած են հայերու մօտ:

Գեորգ անունին տարբերակները ընդհանրացած են գրեթէ բոլոր ժողովուրդներուն մէջ: Այսպէս, լատիներէնով ան կը թարգմանուի Georgius, ֆրանսերէնով Georges, գերմաներէնով Georg, Անգլերէնով George:

Սեպտեմբեր ամիսը Գեորգ անունի տօնախմբութեան ամիս է, առ ի յիշատակ Ս. Գեորգ զօրավարին, որ յանուն քրիստոնէական հաւատքին զոհուած է, Հռոմէացի Դիոկղետիանոս կայսրի հրամանով որ ուզած



էր իր բոլոր հպատակներէն զոհ մատուցանել աստուածներուն: Հրաման՝ որուն Գեորգ զօրավար մերժած էր ենթարկուիլ ու այդ իսկ պատճառաւ սպաննուած է:

Ընտանիքներէ ներս կը կազմակերպուին անուանակոչութեան տօնախմբութիւններ ու կ'ընդունուին շնորհաւորութիւններ եւ բարեմաղթութիւններ ազգականներու եւ բարեկամներու կողմէ, ի պատիւ Գեորգ անունը կրող հարազատներուն:

## Սեպտեմբեր 30


### Վարազայ Սուրբ Խաչ

Ամէն տարի, Սեպտեմբեր 28-ի ամենէն մօտ Կիրակին, Հայաստանեայց եկեղեցին կը նշէ խաչին նուիրուած Վարազայ Ս. խաչի տօնը:

Այս տօնը կը վերագրուի Ս. խաչի երեսման Վարազայ լեռներու բարձունքներուն վրայ կառուցուած վանքին մէջ: Հոն, 653 թուականին շուրջ, երկու ճգնաւորներ, Յովէլ եւ Թողիկ տեսիլք մը կ'ունենան ուր հրաշալի լուսաւորութիւն մը զիրենք կ'առաջնորդէ դէպի Վանի Վարազայ լեռներուն գագաթը, դէպի Վարազայ Վանք: Հոն, Ս. Սեղանին վրայ, լուսաւորութիւնը կը կեդրոնանայ ու ի յայտ կու գայ խաչ մը:

Վարազայ Ս. խաչը շատ հաւանաբար Ս. Հռիփսիմէի կողմէ գործածուած խաչ մըն էր որովհետեւ որոշ շրջանի մը համար ան ապրած էր Վարազայ լեռներուն վրայ ու հոնկէ հեռացած քրիստոնեաներու դէմ հալածանքներէն փախուստ տալով: Իր մեկնումէն ճիշդ առաջ, Ս. Հռիփսիմէ հաւատքի խորհրդանիշ Ս. խաչափայտը կը յանձնէ աղօթակից հաւատաւոր ճգնաւորներու ապահովութեան համար ու կը թելադրէ որ պահեն սրբութիւնը այդ լեռներուն մէջ ուր կ'աղօթէին բոլորը միատեղ:

Գալով Վարազ բառին, ան կապուած է Վարազայ լեռան անունին հետ, որ Վասպուրականի բարձրավանդակին վրայ գտնուող Գմբեթաձեւ լեռ մըն է, Վանայ լիճէն դէպի արեւելք, 3250 մետր բարձրութեամբ: Բառը ինքնին կը նշէ հայկական հեթանոսական տոմարի մէջ ամսուան 29-րդ օրուան անունը:



*Տեսարան Վանէն եւ Վարազ լեռէն*

### Եկեղեցական բառարան

# Ա ա

#### Աբեղայ

Ասորական ծագում ունեցող այս բառը կը նշանակէ առանձին ապրող, չամուսնացած: Մեր եկեղեցիէն ներս Աբեղայ կը կոչուին կուսակրօն քահանաները: Տարբերութիւնը ամուսնացեալ քահանային եւ աբեղային միջեւ հետեւեալն է. ձեռնադրութեան օրը, երեկոյեան ժամերգութեան ընթացքին, աբեղան յատուկ ուխտ կը կատարէ կուսակրօն մնալու եւ չամուսնանալու: Ասոր փոխարէն, ան կը խոստանայ ամբողջութեամբ նուիրուիլ հոգեւոր ծառայութեան:

# Բ բ

#### Բազպան

Բազպանները զարդարուն եւ ասեղնագործուած կտորներ են որոնք քահանան կը կրէ իր երկու թելերուն վրայ: Բազպանները կը խորհրդանշեն այն վահանները որոնք քահանան պիտի պաշտպանեն չարին դէմ, որպէսզի ան կարողանայ սրբութեամբ սպասաւորել Աստուծոյ:

Այս պատճառաւ է որ զգեստաւորման ժամանակ, քահանան, իր թելին անցնելով երկու բազպանները, կ'ըսէ.-

« Տէ՛ր, զօրութիւն տուր իմ ձեռքին»:

# Գ գ

#### Գողգոթա

Գողգոթան այն վայրն է ուր խաչուեցաւ Քրիստոս: Այդ օրերուն, ան կը գտնուէր Երուսաղէմի սահմաններէն դուրս, դէպի Հիւսիս Արեւմուտք ուղուած բարձունքը: Այժմ, Գողգոթան կը գտնուի Երուսաղէմի քաղաքի սահմաններէն ներս, Սուրբ Յարութիւն տաճարէն ներս, եւ հոն կառուցուած է յատուկ խորան մը: Գողգոթան ամէն քրիստոնէայի համար սիրելի եւ երկրպագելի վայր մըն է որովհետեւ հոն խաչուեցաւ Քրիստոս ու իր մահուամբ թողութիւն եւ փրկութիւն եւ յաւերժական կեանք պարգեւեց համայն մարդկութեան:



## Խօսքն Աստուծոյ



### Առակաց Գիրքէն (3.18-26)

Իմաստութիւնը կեանքով կը վարձատրէ իրեն ապաիհողները եւ ապահովութիւն կու տայ անոնց՝ որոնք իրեն կը կոթնին՝ որպէս Տիրոջ:

Իր իմաստութեամբ էր որ Աստուած երկրին հիմերը դրաւ, գիտութեամբ հաստատեց երկինքները:

Իր հանճարով է որ երկրի ընդերքներէն ջուրերը կը ժայթքեն եւ ամպերը անձրեւ կը թափեն:

Որդեակ, իմաստութենէն մի՛ բաժնուիր բնաւ. խրատներու եւ խորհուրդներու հետեւէ՛, շնորհքներով զարդարուիս, մարմինդ առողջ մնայ եւ ոսկորներդ հանգստանան:

Որպէսզի խաղաղ ըլլայ քու կեանքդ եւ ապահով ընթանաս, առանց երբեք գայթելուցերէկը անվախ նստիս եւ գիշերը քաղցր մինջով քնանաս:

Ուստի մի՛ վախճար գալիք փորձանքներէն, ո՛չ ալ ամբարիշտներու յարձակումներէն. որովհետեւ ամենուրեք Տէրը հետդ պիտի ըլլայ եւ պիտի պաշտպանէ քեզ որոգայթներէն:

## Հայաստանեայց Եկեղեցին հարցումներով, պատասխաններով

Ո՞րն է Հայաստանեայց եկեղեցույ առաքելութիւնը:

Հայաստանեայց եկեղեցին հայ ժողովուրդի հոգեւոր դաստիարակութեան գլխաւոր տարրն ու միջոցն է: Ան կը միտի հայ ազգի բոլոր անդամներուն մօտ արթնցնել քրիստոնէական հաւատք, Աստուծոյ հետ հաղորդութիւն, ինչպէս նաեւ քրիստոնէական առաքինութիւններու կիրարկումը առօրեայ, գործնական կեանքէն ներս:


Ովքե՞ր են Հայաստանեայց եկեղեցույ սպասաւորները, ըստ կարգի հերթականութեամբ:

Դպիր, սարկաւազ, քահանայ, արեղայ, վարդապետ, ծայրագոյն վարդապետ, եպիսկոպոս, արքեպիսկոպոս, եպիսկոպոսապետ:



## «Եկեղեցի» բառին երկու իմաստները

Եկեղեցի բառը յունարէն լեզուով կը նշանակէ ժողով կամ միութիւն, ինչպէս նաեւ ժողով գումարելու, հաւաքուելու վայր: Այսպէս է որ Քրիստոնէական հասկացողութեամբ «եկեղեցի» բառը կրնայ ունենալ երկու նշանակութիւններ.-



*Երեւանէն 25 քիլոմէթր հեռաորութեան վրայ, Վաղարշապատի մէջ կանգնուած Էջմիածինի տաճարը, 4-րդ դար:*

Ա. Հաւատացեալներու ընդհանրութիւն, միութիւն, հաւաք:

Բ. Վայր մը, շինութիւն մը կամ տաճար մը ուր կը հաւաքուին քրիստոնէայ հաւատացեալներ աստուածապաշտութեան նպատակով:

Եկեղեցիին առաջին իմաստին մասին, այսինքն անոր հաւատացեալներու համախմբում մը ըլլալուն առումով, Հաւատոյ հանգանակին մէջ կարելի է հանդիպիլ հետաքրքրական ներկայացման մը:

Իրապէս ալ «Հաւատոյ հանգանակ»ը կ'ըսէ.-

«Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ առաքելական սուրբ Եկեղեցի», այսինքն « Կը հաւատանք նաեւ մէկ եւ միակ ընդհանրական ու առաքելական սուրբ եկեղեցիին»:

Այս ըսելով, քրիստոնէայ հաւատացեալները, որոնք տարբեր ազգերէ կու գան, տարբեր լեզուներ կը խօսին եւ տարբեր ասանդութիւններ կ'ունենան, եւ որոնք կրնան նոյնիսկ գաղափարական կամ դաւանական անհամաձայնութիւններ ունենալ, կը հաւատան մէկ ընդհանրական եկեղեցոյն, որովհետեւ կը միանան Քրիստոսի հաւատքին շուրջ եւ Անոր եկեղեցոյ միութեան մէջ:

Քրիստոսի հիմնած եկեղեցին ընդհանրական ըլլալու կարգին նաեւ առաքելական է, որովհետեւ առաքելներու անմիջական միջոցաւ է որ ան տարածուեցաւ եւ քարոզուեցաւ աշխարհի չորս ծագերուն:

Վերջապէս, Եկեղեցին նաեւ սուրբ է որովհետեւ կը նկատուի ըլլալ Քրիստոսի մարմինը, իսք Քրիստոս՝ անոր գլուխը: Հոն է որ կը կատարուին եկեղեցական խորհուրդները որոնց միջոցաւ եկեղեցոյ անդամները մշտական հաղորդակցութեան մէջ կը մնան Քրիստոսի եւ Սուրբ Հոգիի շնորհներուն հետ:

*Յաջորդ թիւով՝ եկեղեցին իբրեւ հաւատացեալներու հաւաքման վայր եւ աստուածապաշտութեան շէնք*

# Աստուածաշունչը մանուկներու համար Սերմնացանին առակը




Երբ շատ մը քաղաքներէն մարդիկ սկսան հաւարուիլ իր շուրջ եւ խումբ բազմութիւն մը կազմուեցաւ, Յիսուս հետեւեալ առակը պատմեց:



Սերմնացան մը սերմ ցանելու ելաւ:


Սերմանած ատեն, սերմերէն ոմանք ճամբուն եզերքը ինկան ու ոտքի կոխան եղան, եւ երկինքի թռչունները եկան կերան զանոնք:





Ուրիշներ ժայռոտ տեղ ինկան, եւ երբ բուսան՝ անմիջապէս չորցան, քանի հողը խոնաւ չէր: Ոմանք ինկան փուշերու մէջ եւ փուշերը միասին բուսնելով խեղդեցին զանոնք:

Իսկ ուրիշներ ալ ինկան լաւ եւ պարարտ հողի մէջ եւ հարիւրապատիկ պտուղ տուին:



Ան որ կը լսէ Աստուծոյ խօսքը բայց չի գործադրեր զայն կը հեռանայ բարիէն եւ առիթ կու տայ որ չարը իշխէ իր վրայ:

Ան որ կը լսէ Աստուծոյ խօսքը, կը հասկնայ ու կը գործադրէ զայն, կը ծաղկի ու կը զօրանայ, եւ բարիքը իր կեանքէն ներս կը բազմապատկուի:



### Եզակի գիրեր

Հայերէն գիրերով Sudoku

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

գ		դ	ը					
	ա							
թ	զ					ե	ա	դ
				է	զ		ը	բ
			բ		ա			
բ	է		գ	թ				
դ	ը	բ					թ	է
							դ	
					է	ը		գ

Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ  
Դպրոցներու նշանաբանը: Մարկոս 10.14

Յիսուս, մանուկները, արգելք, այդպիսիներուն,  
արքայութիւնը

----- ըսաւ.

«Զգեցէք որ ----- ինձի գան,  
----- մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ  
----- է Աստուծոյ  
----- :»

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**

**Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն**

1.- Ո՞ր տարին հիմնուեցաւ «Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներ»ը:  
ա.- 1900  
բ.- 1929  
գ.- 1979  
դ.- 1980

2.- Ո՞ր տարին հիմնուեցաւ Մոնթրէալի Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը:  
ա.- 1900  
բ.- 1929  
գ.- 1979  
դ.- 1980

3.- Այս տարի «Մաշտոցի Արձագանգ» ին քանիերորդ ամեակն է:  
ա.- 5  
բ.- 10  
գ.- 15  
դ.- 20

4.- Ամբողջացո՞ւր ըստ Սաղմոսին. Տէ՛րն է հովիւս...  
ա. եւ ես չարէն չեմ վախնար  
բ. կեանքիս ամբողջ տեսողութեան  
գ. ուստի ուեւէ բանի կարօտ պիտի չմնամ:  
դ. կը վերանորոգէ զիս

5.- Ի՞նչ կը կոչուի տաղաւարը որ կը տօնենք Սեպտեմբեր ամսուան ընթացքին:  
ա.- Սուրբ Ծնունդ  
բ.- Սուրբ Զատիկ

գ.- Սուրբ Աստուածածնի Վերափոխում  
դ.- Խաչվերաց

6.- Հետեւեալ սուրբերէն որո՞ւն տօնը կը տօնենք Սեպտեմբերին:  
ա.- Սուրբ Սարգիս  
բ.- Սուրբ Գէորգ  
գ.- Սուրբ Թադէոս  
դ.- Սուրբ Պետրոս

7.- Քրիստոս ո՞ր բլուրին վրայ խաչուեցաւ:

8.- Յիսուս քանի՞ տարեկան էր երբ մկրտուեցաւ  
ա. 1  
բ. 2  
գ. 30  
դ. 33

9.- Ամբողջացո՞ւր Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգին առաջին 4 տողերը:  
Կիրակնօրեայ Սուրբ յարկին մենք ----- ենք լուսաբաղձ,  
Կայծերու պէս -----  
Յայտած՝ սրտէն պերճ ----- :

10.- Ամբողջացո՞ւր Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգին երկրորդ 4 տողերը:  
Ուստի քալենք -----,  
Ո՛վ հարազատ զարմ -----,  
----- գընացքով  
Լոյս-աղբիւրին ----- :

### Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ո՞վ է ներկայիս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը:

ա.- Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեան

բ.- Արամ Ա. Կաթողիկոս

գ.- Գարեգին Ա. Կաթողիկոս

դ.- Գարեգին Բ. Կաթողիկոս

2.- Ո՞վ է ներկայիս Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

ա.- Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեան

բ.- Արամ Ա. Կաթողիկոս

գ.- Գարեգին Ա. Կաթողիկոս

դ.- Գարեգին Բ. Կաթողիկոս

3.- Ըստ Ա. Կորնթացիներուն 13 ին երեք հիմնական շնորհներն են Հաւատքը, Յոյսը եւ Սէրը եւ այս երեքէն ամենէն մեծն է...

ա. հաւատքը

բ. յոյսը

գ. սէրը

դ. Աստուածային հիմնական շնորհները թիւով չորս են

4.-Վերջին ընթրիքի ընթացքին Յիսուս հաստատեց Հաղորդութեան խորհուրդը.

Աւագ շաբթուան ո՞ր օրն էր այդ...

ա- Երկուշաբթի

բ. Ուրբաթ

գ. Հինգշաբթի

դ. Չորեքշաբթի

5.- Սուրբ Ծնունդի մաղթանքն է.-

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, օրհնեալ է...

ա. Ծնունդը Քրիստոսի

բ. յայտնութիւնը Քրիստոսի

գ. յարութիւնը Քրիստոսի

դ. անունը Քրիստոսի

6.- Պատարագի ընթացքին

գործածուող ձայն հանող սպասն է...

ա. սկիհ

բ. Մաղմայ

գ. Աշտանակ

դ. քշոց

7.- «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» կ'երգուի...

ա. ողջոյնի ատեն

բ. Հաղորդութեան ատեն

գ. արձակման ատեն

դ. խոստովանանքի ատեն

8.- Խորհուրդ մեծ եւ սքանչելին...

ա. Սաղմոս է

բ. Աղօթք է

գ. Ծարական է

դ. ընթերցանութիւն է

9.- Հինգ տաղաւարներն են.-

Ծնունդ, Զատիկ, Վարդավառ,

Վերափոխում Ս. Աստուածածնի եւ...

ա. Մեռելոց

բ. Խաչվերաց

գ. Ծաղկազարդ

դ. Համբարձում

10.- Սուրբ Զատիկէն 40 օր ետք կը տօնենք

ա. Համբարձում

բ. Երեւում

գ. Այլակերպութիւն

դ. Յայտնութիւն

### Ո՞րն է ճիշդ պատասխանը

#### Երկրորդականի անկիւն

1.- Ո՞վ է ներկայիս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը:

ա.- Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեան

բ.- Արամ Ա. Կաթողիկոս

գ.- Գարեգին Ա. Կաթողիկոս

դ.- Գարեգին Բ. Կաթողիկոս

2.- Ո՞վ է ներկայիս Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

ա.- Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեան

բ.- Արամ Ա. Կաթողիկոս

գ.- Գարեգին Ա. Կաթողիկոս

դ.- Գարեգին Բ. Կաթողիկոս

3.- Ըստ առաջին Սաղմոսին, Երանի անոր որ

ա. ամբարիշտ մարդոց խորհուրդին չի հետեւիր

բ. շիտակ կը խօսի

գ. իր խոստումը կը յարգէ

դ. միշտ կ'աղօթէ

4.- Ամբողջացո՞ւր ըստ Ղուկաս10.27 ի

«Սիրէ՛ քու Տէր Աստուածդ քու

ամբողջ -----, ամբողջ

-----, ամբողջ զօրութեամբդ

եւ ամբողջ ----- եւ Սիրէ՛

ընկերդ քու ----- պէս:

5.- Սուրբ Զատկուան մաղթանքն է.- Քրիստոս յարեալ ի մեռելոց, օրհնեալ է...

ա. Ծնունդը Քրիստոսի

բ. յայտնութիւնը Քրիստոսի

գ. յարութիւնը Քրիստոսի

դ. անունը Քրիստոսի

6.- Պատարագի ընթացքին

հաղորդութիւնը կը պատրաստուի հետեւեալ սպասին մէջ...

ա. սկիհ

բ. Մաղզմայ

գ. Աշտանակ

դ. քշոց

7.-Նոր Կտակարանի վերջին գիրքն է

ա. Ղուկասի աւետարան

բ. Յայտնութիւն

գ. Նամակները

դ. գործք առաքելոց

8.- «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի...»

ա. Սաղմոս է

բ. Աղօթք է

գ. Ծարական է

դ. ընթերցանութիւն է

9.- Հինգ տաղաւարներն են.-

Ծնունդ, Զատիկ, Վերափոխում Ս. Աստուածածնի եւ...

ա. Այլակերպութիւն

բ. Խաչվերաց

գ. Ծաղկազարդ

դ. Համբարձում

10.- Տէր ողորմեայի ատեն...

ա. Վարագոյրը կը բացուի

բ. վարագոյրը կը գոցուի

գ. քահանան բեմէն վար կու գայ

դ. հաղորդութիւն չստացողները դուրս կրնան գալ

## Հայաստանեայց Եկեղեցւոյ Մոնթրէալի Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի Ամսօրեայ Հանդէս

Յունիս 10, 2007-ի յետմիջօրէին, Կիրակնօրեայ դպրոցը հաւատքով ու սիրով տօնախմբեց բերքահաւաքի իր 27-երորդ տարերշրջանի ամսօրեայ հանդէսը, Սուրբ Յակոբ Վարժարանի, Բաստրմանեան Սրահէն ներս: Հանդիսութեան Ներկայ էին Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Տէր Գառնիկ Քհնկ. Գոյունեան, Հոգաբարձութեան ներկայացուցիչ՝ Տիար Լեւոն Պօյանեան, բազմաթիւ ծնողներ եւ Կիրակնօրեայ դպրոցի բարեկամներ:

Յայտագիրը սկսաւ վարժարանի աշակերտ-աշակերտուհիներու խմբային մեկնաբանութեամբ/երգեցողութեամբ «Հայր Մեր», «Մաղթանք» եւ «Մաղթերգ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու» աղօթք-երգերով:

Ապա, բեմ բարձրանալով բացման խօսքը արտասանեց Կիրակնօրեայ դպրոցի Տնօրէն՝ Տիար Թորոս Պապիկեան: Ան իր խօսքին մէջ, բոլորին բարի գալուստ մաղթելէ ետք, գնահատեց ծնողներուն, որոնք վստահութեամբ յանձնած են իրենց զաւակները Կիրակնօրեայ դպրոցին, արժեւորեց ուսուցչական կազմին կամաւոր ու անձնուէր աշխատանքը: Ան շարունակելով, հակիրճ կերպով ներկաներուն փոխանցեց Կիրակնօրեայ դպրոցին հետապնդած գերադասեալ նպատակը՝ հայակերտումի ու ազգապահպանման, դպրոցին դիմագրաւած դժուարութիւնները, իրագործած ծրագիրները, ու վերջապէս կարգ մը լուրջ մտահոգութիւններ: Պրն. Թ. Պապիկեան հրամայական նկատեց դպրոցի կամաւոր խմբակին հետ միասին, գոյացնել յատուկ յանձնախումբ մը, որ բաղկացած ըլլայ յատկապէս ծնողներէ, որոնք դրական ներդրումով ներկայութիւն ունենան այս կառոյցին մէջ, եւ նորարար մտածողութեամբ սատարեն Կիրակնօրեայ դպրոցին բարգաւաճման մեծ գործին:

Հանդէսը ընթացք առաւ Կիրակնօրեայ դպրոցի բոլոր կարգերու աշակերտներու մասնակցութեամբ: Դպրոցի ուսուցչուհիներուն բժախնդիր պատրաստութեամբ, անոնք բեմականացած ձեւով, շարականներով, սաղմոսներով ու ոսկեղէն համարներով հրամցուցին ներկայացում մը՝ «Յեղին Կենդանի Զայնը» խորագրով, համադրուած՝ Նուպար Սրկ. Պէրպէրեանի համանուն պատմուածքէն: Ներկայացումը մարմնավորեց Հայ հաւատացեալ ընտանիքի մը պատկերը որուն զաւակը տարուած աշխարհային զեխ կեանքէն, հեռացած էր իր քրիստոնէական տաքուկ միջավայրէն. սակայն, իր տագնապած հոգիին ու անհանգիստ խղճին հանդարտութիւնը վերագտաւ, մտաբերելէ ետք իր մանկութեան օրերը երբ հասակ կ'առնէր ու գործունեայ անդամ մը դարձած էր Կիրակնօրեայ դպրոցէն ու եկեղեցւոյ դպրաց դասէն ներս: Ներկայացման ընթացքին նաեւ հրամցուեցան Հայոց Պատմութենէն հանգրուաններու պատկերներ «Հայ գիրերու գիտ, Վարդանանց Պատերազմ»:

Յայտագրին այս բաժնով Կիրակնօրեայի փաղանգի փոխանցած պատգամն էր, Հայ մնալ, տիպար Քրիստոնէայ եւ դպրոցին ու եկեղեցիին ծառայող հայ ազգի զաւակներ:

Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ Հովիւ՝ Տէր Գառնիկ Քհնկ. Գոյունեան իր խօսքին մէջ նշեց

«մեզի համար, ամեն օր Վարդանանց է, ու շարունակական պայքար որպէսզի կարենանք մեր Հայ Քրիստոնէայ նկարագիրը պահել»:

Ապա, բեմ հրաւիրուեցաւ հոգաբարձութեան ներկայացուցիչ Տիար Լեւոն Պօյաճեան, որպէսզի փոխանցէ վկայականները նախակրթարան կարգի աւարտական դասարանի 3 աշակերտ-աշակերտուհիներուն, ինչպէս նաեւ՝ նուէրներ այն աշակերտներուն որոնք ընթացիկ տարուան ընթացքին տարբեր մարզերու մէջ յաւելեալ յաջողութիւններ արձանագրած են իրենց ջանասիրութեամբ, կարգապահութեամբ, ծառայասիրութեամբ կամ ներկայութեամբ: Եկեղեցոյ Տիկնանց Օժանդակ Մարմնի ներկայացուցիչ՝ Տիկ. Վիգի Զարգաւաճեան, իր կարգին նաեւ, աշակերտներու փոխանցեց Նոր Կտակարաններ:

Յայտագրի վերջաւորութեան աշակերտութեան ու ներկաներու կողմէ միաձայնութեամբ երգուեցաւ ԿԻԼԿԻԱ ճ:



Սակայն, Հանդէսը վերջացնելու լաւագոյն բաժինն այն էր, երբ Կիրակնօրեայ դպրոցի ուսուցչական կազմն ու աշխատակիցները ներկայացուելով Տնօրէնութեան կողմէ, բարձրացան բեմ, որոնց փոխանցուեցաւ ծաղկեփունջեր ու Կոմիտասեան Սուրբ Պատարագէն խտասալիկներ, որպէս երախտագիտութեան դոյզն արտայայտութիւն:

2006-2007 տարեշրջանի այս իրագործումին համար կը շնորհաւորենք Կիրակնօրեայ դպրոցի Տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը, որոնք շիթ առ շիթ լոյս սփռեցին աշակերտութեան մտքերուն մէջ ու շիթ առ շիթ բարոյասիրութիւն եւ հացկական ինքնուրոյն պատկանելիութիւն ամբարեցին անոնց հոգիներուն մէջ:

Սօսի Գրիգորեան Դանիէլեան



# Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցույ Սուրբ Յակոբ Կիրակնորեայ Դպրոցի ամսաթերթ

Այս թիւով...

Խմբագրական՝

Որպէսզի Հայերէնը շնեունի... Էջ 2

Թարգմանչաց, Հայ գրչութեան կեդրոններ, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհալի, Գիւտ խաչի. Հոկտեմբեր ամսուան բացատրական բառարան:

Էջ 3-4

Դաս, զանգ եւ եղեմ. եկեղեցական բառարան: Էջ 5

Մարդու Որդիին գալուստը. խօսքն Աստուծոյ: Էջ 6

Հայաստանեայց եկեղեցին, հարցումներով, պատասխաններով: Էջ 6

Քրիստոսի նմանիլ... խաղաղասէր մարդ ըլլալով: Էջ 7

Աստուածաշունչը մանուկներու համար. Հինգ հազարին կերակրումը: Էջ 8-9-10


Եզակի գիրեր: Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը: Էջ 12-13-14-15

Սեպտեմբեր ամսուան մասնակցողներ: Էջ 16

Հոկտեմբեր 2007

ԺԵ տարի- թիւ 2



Եթէ հաւատաք, ինչ որ  
աղօթքով խնդրէք՝ պիտի  
ստանաք:

Մատթէոս 21.22

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակույթ

Խմբագրական

## Որպեսզի Հայերենը չմեռնի...

Ասկէ տասնըվեց դարեր առաջ, 405 թուին, ծնունդ կ'առնէր հայերէն այբուբենը: Այդ օրերուն, Հայաստանի մէջ հայերու խօսակցական լեզուն արդէն իսկ Հայերէնն էր, բայց Հայերէն լեզուով գրելու համար հայերէնի յատուկ հնչիւններ ունեցող գիրքեր պէտք էին: Հաւանաբար կարելի էր որ Մեսրոպ Մաշտոց այլ տարբերակ մը գտներ ուր յունարէն գիրերը գործածելով Հայերէնը գրի առներ: Սակայն մի քանի տարրեր խթանեցին Մեսրոպ Մաշտոցը որ ստեղծէր մեր ժողովուրդի գործածած հնչիւններուն իւրայատուկ կերպով համապատասխանող գիրք՝ հայերէն տառերը: Յստակ էր որ առաջին հերթին այս գիրքերը պիտի գործածուէին Աստուածաշունչի թարգմանութեան համար, աշխատանք մը որմով ազգասէր թագաւոր մը, բարի հովիտի նման կաթողիկոս մը եւ անոնց համայն ժողովուրդը իրենց լաւագոյնը կը միտէին ու կը փափաքէին նուիրել Աստուծոյ:

Լեզուները մեր կեանքերուն նման կը ծնին, պատանեկութիւն եւ երիտասարդութիւն կ'ունենան, կը ծերանան ապա կը մեռնին: Լեզու մը երիտասարդ է երբ կը յաջողի նորագոյն արուեստագիտութիւններու (technology) հետ քայլ պահել: փոխադարձաբար, նորոգուող ու յառաջդիմող արուեստագիտութիւնը իր կարգին, կ'օգնէ որ լեզուները ծաւալին ու զարգանան: Այսպէս է օրինակը 15-րդ դարուն Կիւթէմպըրկի տպագրութեան գիւտը, զորս մենք՝ հայերս կրցանք լիօրէն օգտագործել իբր մեր լեզուի տարածման ու անման միջոց, որովհետեւ ունէինք մեզի յատուկ գիր եւ այբուբեն: Այլ օրինակ մըն է համացանցի աննախընթաց յառաջխաղացքը ու արդի կեանքի իբրեւ անբաժան մէկ մասնիկ դառնալը, զորս անգամ մը եւս մենք՝ հայերս կը յաջողինք օգտագործել շնորհիւ մեր լեզուին յատուկ այբուբենի գոյութեան:

Հայերէնը, Հայաստանի հանրապետութեան սահմաններէն ներս պետական լեզու է, կը գործածուի եւ համեմատաբար աշխույժ կը համարուի: Սփիւռքի տարածքին սակայն, մեր լեզուին կացութիւնը բոլորովին ուրիշ է: Այսպէս, հայերէնը Հիւսիս Ամերիկայի որոշ շրջաններու մէջ մահամերձ կարելի է նկատել, իսկ ուրիշ տեղերու մէջ ճգնաժամային վիճակի մէջ:

Մեզմէ իւրաքանչիւրին պարտականութիւնն է Հայերէն լեզուն ողջ պահելը. եւ այդ ամենէն պարզ ու դիւրին ձեւով, այսինքն զայն գործածելով մեր առօրեային մէջ: Հայերէն խօսինք, կարելի եղած չափով մաքուր անաղարտ հայերէն, երբ կը խօսինք իրարու հետ: Հայերէն գիրքով կարդանք, ըլլան անոնք գիրքեր, համացանցի էջեր, օրաթերթեր, ամսաթերթեր... Հայերէն գրենք, հայերէն տառերով հաղորդակցինք, ըլլայ այդ թուղթի, համակարգիչի թէ համացանցի պատահաններուն վրայ: Վերջապէս, իմաստալից ձեւով յիշատակենք Թարգմանչաց տօնը, կարդալով Աստուածաշունչը, որուն թարգմանութեան համար յատկապէս հայերէն գիրքերը կեանք առին:

«Մաշտոցի Արձագանգ»-ը, իբրեւ հայերէն լեզուով տպուող ու սփռուող ամսաթերթ, 15-րդ տարուան մը համար եւս կը վերանորոգէ իր հաւատարմութեան ուխտը մեր սուրբ թարգմանիչներուն հանդէպ, ամէն ճիգ ի գործ դնելով որպէսզի Հայերէնը մնայ կայտառ եւ արդիական:

«Մաշտոցի Արձագանգ» Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ: Խմբագիր՝ Շաղիկ Թորիկեան-Պոյաճեան  
Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը  
Ուսուցիչներ՝ Վերժին Գիւլթանճեան, Թամար Գիլիբեան, Յամիկ Նաճարեան, Գարոլ Մանուկեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յամիկ Գանաճեան: Տնօրէն՝ Թորոս Պապիկեան

## Սեպտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց


### Հոկտեմբեր 13

#### Թարգմանիչներու տօն

Հայ գիրերու գիւտէն ետք ծնունդ առաւ թարգմանչաց շարժումը որուն առաջին եւ գերագոյն նպատակն էր Աստուածաշունչը թարգմանել հայերէնի եւ եկեղեցական ծէսերը հայացնել:

Թարգմանիչ անուան տակ ծանօթ են հայ գիրերու հեղինակ Մեսրոպ Մաշտոցի եւ հայոց կաթողիկոս Սահակ Ա. Պարթեւի շուրջ հաւաքուած 100 սաները, որոնք անմիջական աշակերտները եղած են անոնց: Իսկ այս աշակերտներու աշակերտները իրենց կարգին կոչուած են «կրտսեր թարգմանիչներ»:

Հայաստանեայց եկեղեցին Թարգմանչաց օրը կը տօնէ վեց գլխաւոր թարգմանիչներու յիշատակը որոնք են, Մեսրոպ Մաշտոցի գլխաւորութեամբ, Եղիշէ Պատմիչ «Ե. դար», Դաւիթ Անյաղթ «Զ. դար», Մովսէս Քերթող «Է. դար» Գրիգոր Նարեկացի «Ժ. դար» եւ Ներսէս Շնորհալի «ԺԲ. դար»: Այս տարի Թարգմանչացը կը տօնենք Հոկտեմբեր 13-ին:



Սանահին

Հիմնուած Աշոտ Գ. Ողորմած թագաւորի կողմէն 966-ին: Ժ-ԺԱ դարերուն եղէր է կարեւոր մշակութային կեդրոն, ունեցեր է բարձրագոյն դպրոց եւ գրադարան: ԺԱ-ԺԳ դարերուն, տարբեր շինութիւններով, դարձեր է համալիր:

Հաղբատ

Ժ-ԺԳ դարերու Հայաստանի խոշոր վանական կեդրոններէն: Հիմնդրուած Աբաս Բագրատունի թագաւորին կողմէ 928-951թ: Գլխաւոր տաճարը՝ Ս. Նշանը, կառուցուեր է 967-991թ Խոսրովանոյշ թագուհիի եւ անոր որդիներուն կողմէ:

#### Հայ Գրչութեան կեդրոնները

Հայ գրչութեան առաջին կեդրոնը Վաղարշապատն է: Այստեղ Հինգերորդ դարէն սկսեալ գրուած, ընդօրինակուած եւ Հայաստանի տարբեր կողմերը դրկուած են հայերէն ձեռագիրներ: Ասոնք իրենց կարգին կրկին ընդօրինակուելով բազմացուած են գրչութեան նոր կեդրոններու մէջ:

Միջնադարեան Հայաստանի մէջ եղած են աւելի քան 1500 գրչութեան կեդրոններ, որոնք գործած են տարբեր ժամանակներու մէջ եւ ունեցած տարբեր ընդգրկումներ:

Առաւել նշանաւոր էին

Վաղարշապատի, Սիւնեաց, Անձեւացեաց, Տաթեւի, Վարազի, Նարեկի, Հաղբատի, Սանահինի եւ այլ գրչութեան կեդրոնները:



**Գրիգոր Նարեկացի**

Բանաստեղծ, երաժիշտ, հայ առաքելական եկեղեցույ տօնելի սուրբերէն: Անոր ամենէն անելի ծանօթ ստեղծագործութիւնն է «Մատեան Ողբերգութեան»ը, որ անելի հանրածանօթ է իբր «Նարեկ» աղօթագիրք:

Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան»-ը հրատարակուած է գրաբար, աշխարհաբար՝ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն եւ թարգմանուած է բազմաթիւ լեզուներու ինչպէս ֆրանսերէն, անգլերէն, պարսկերէն, իտալերէն, գերմաներէն, սպաներէն: Հետաքրքրական է նաեւ թէ նոյն այս գլուխ գործոցի գրչագիր ընդօրինակութիւններէն մեզի հասած է 150-էն անելի օրինակներ:

**Հոկտեմբեր 28՝ Գիւտ Խաչի**

Քրիստոնէական տօներու մէջ յատուկ տեղ կը գրաւէ Գիւտ Խաչի տօնը: 313 թուին, Միլանոյի հրովարտակով, երբ քրիստոնէաներուն արտօնուեցաւ ազատօրէն պաշտել նոր կրօնը, քրիստոնէութիւնը, Երուսաղէմը դարձաւ քրիստոնէաներուն ուխտավայրը: Աշխարհի չորս կողմէն քրիստոնէաներ ուխտի կ'երթային Երուսաղէմ:

326 թուին, այս ուխտաւորներուն մէջ էր նաեւ Կոստանդինոս կայսեր մայրը, Հեղինէ թագուհին: Ան կ'ուզէր գտնել Յիսուսի խաչափայտը որ կորսուած էր: Ուստի, ան բարձրացաւ Գողգոթա լեռը: Այդ ժամանակ Գողգոթան կը գործածուէր իբրեւ աղբատեղի:

Հեղինէ թագուհին պեղել կու տայ այն տեղը ուր կ'ենթադրէին որ պիտի գտնեն Յիսուսի խաչափայտը: Անոր ենթադրութիւնը ճիշդ դուրս կու գայ եւ փորուած տեղէն ի յայտ կու գան երեք խաչափայտեր: Որպէսզի գիտնան թէ ո՞րն է Յիսուսի խաչափայտը, իւրաքանչիւրը առանձնաբար կը դնեն մեռած մանուկի մը դիակին վրայ: Երբ Յիսուսի խաչափայտը կը մօտեցնեն մանուկին, ան յարութիւն կ'առնէ: Այսպիսով կը գիտցուի Յիսուսի խաչափայտը, որ հետագային փոքր մասերու կը վերածեն ու կը բաժնեն եկեղեցիներուն:

**Ներսէս Ընդհանրապէս**

Ամենայն հայոց կաթողիկոս Ներսէս Դ. Կլայեցի, կոչուէր է «Ընդհանրապէս» իր բացառիկ գիտութեան, առաքինի վարքին համապատասխան: Ան կրած է նաեւ բազմաթիւ այլ որակաւորներ, որոնցմէ են «Երկրորդ լուսաւորիչ», «Եռամեծ վարդապետ», «Երանաշնորհ սուրբ», «համահրեշտակ», եւայլն:

Ներսէս Ընդհանրապէսի հոգեւոր բանաստեղծութիւնները թիւով շատ են: Անոնցմէ ամենէն անելի ծանօթ է «Հաւատով խոստովանիմ» աղօթքը, որ 24 տուներէ բաղկացած գեղեցիկ բանաստեղծութիւն մը կարելի է համարել: Այս տուներէն իւրաքանչիւրը կը վերագրուի օրուան 24 ժամերէն իւրաքանչիւրին, ու պարզ բայց նոյն ատեն խորաթափանց աղօթք մըն է: Ահա անոր առաջին երկու համարները.-

«Հաւատքով կը խոստովանիմ ու կ'երկրպագեմ Քեզի՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, անեղ եւ անմահ բնութիւն, արարիչը հրեշտակներուն, մարդոց եւ բոլոր արարածներուն. ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինձի՛ բազմամեղիս:

Հաւատքով կը խոստովանիմ ու կ'երկրպագեմ քեզի, անբաժանելի՛ լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն եւ մէկ Աստուածութիւն, արարիչ լոյսի եւ հալածող խաւարի, հալածէ՛ իմ հոգիէս մեղքի եւ անգիտութեան խաւարը, եւ լուսաւորէ՛ միտքս, որ այս պահուս Քեզի հաճելի ձեռով աղօթեմ եւ Քեզմէ ընդունիմ իմ խնդրանքներս. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինձի՛ բազմամեղիս:»

Եկեղեցական բառարան

Դաս Դ Դ

Դաս կը կոչուի եկեղեցիէն ներս գտնուող այն բաժինը որ կը գտնուի խորանին առջեւ, անկէ մէկ յարկ ցած սակայն եկեղեցւոյ ընդհանուր սրահէն մէկ քայլ բարձր ու ընդհանրապէս ցանկապատով մը անկէ բաժնուած:

Դասէն ներս կը կենան դպիրները, որոնք կը մասնակցին եկեղեցական արարողութիւններուն, կը կոչուին «դպրաց դաս»:

Գլով հաւատացեալ ժողովուրդին, անոնք միայն հաղորդութիւն ստանալու համար կրնան դասի սահմաններէն ներս անցնիլ: Աւանդութեան համաձայն, կը պահանջուի կիներէն որ երբ դաս բարձրանան իրենց գլուխները քօղերով ծածկեն:

Զ Զ

Զանգ

Իւրաքանչիւր եկեղեցի օժտուած է զանգակատունով մը որուն մէջ կը ղօղանջեն զանգեր, հաւատացեալները հրաիրելու համար դէպի եկեղեցի կամ ժամ: Դէպի ժամ կանչելու այս իմաստին համաձայն, այն անձը որ եկեղեցւոյ զանգերը կը հնչեցնէ կը կոչուի «ժամկոչ»: Եկեղեցւոյ զանգերու ղօղանջը կը խորհրդանշէ երկու երեսոյթներ. -

Նախ եւ առաջ Աստուծոյ փառքը ապա անեղ Դատաստանի օրուան ազդեցիկ եւ զգուշացնող ձայնը:

Ե Ե

Եդեմ

Եդեմ կը նշանակէ հեշտութիւն, երանութիւն, դրախտ, բարիքի պարտէզ: Ըստ եկեղեցական հասկացողութեան, եդեմի մէջ ապրած են Աստուծոյ ստեղծած առաջին էակները, Ադամն ու Եւան, մինչեւ որ անոնք մեղանջեն ու դուրս դրուին դրախտէն:

Ըստ աւանդութեան, եդեմէն դուրս կու գայ գետ մը պարտէզը ջրելու համար, ապա կը բաժնուի չորս մասերու. -

Փխոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատ: Ըստ եկեղեցւոյ հաւատամքին, այս չորս գետերը իրենց կարգին կը խորհրդանշեն չորս առաքինութիւններ որոնցմով օժտուած էր մարդը իր ստեղծման պահուն:

Եդեմ բառէն ծագում կ'առնեն այլ բառեր ինչպէս «Եդեմական», «Եդեմատունկ», «Եդեմահին», «Եդեմարուխ»:



Կենաց ծառը  
պ ա տ կ ե թ ո ղ  
լուսանցազարդ

Երեւան, ձեռ. 5786, էջ 4ա,  
Արքունիական  
աւետարան 1336թ  
ծաղկող՝  
Սարգիս Պիծակ

## Խօսքն Աստուծոյ



### Մարդու Որդիին գալուստը

- Այդ օրերուն, այդ նեղութենէն ետք՝ արեւը պիտի խաւարի եւ լուսինը այլեւս պիտի չփայլի. երկինքէն աստղերը պիտի իջնան եւ երկնային մարմինները պիտի սասանին: Այն ատեն պիտի տեսնեն Մարդու Որդին, որ կու գայ ամպերու վրայ՝ մեծ զօրութեամբ եւ փառքով: Այն ատեն իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի աշխարհի չորս կողմերէն իր ընտրեալները հաւաքեն, աշխարհի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը:

Թող թզենին ձեզի օրինակ ըլլայ: Երբ անոր ճիւղերը հետզհետէ կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ տեսնէք որ ըսածներս կը կատարուին, գիտցէք թէ Մարդու Որդիին գալուստը մօտ է եւ արդէն հասնելու վրայ: Վատահ եղէք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան:

## Հայաստանեայց եկեղեցին հարցումներով, պատասխաններով

Հայ եկեղեցիէն ներս ի՞նչ գիրքեր կը գործածուին:

Հայաստանեայց եկեղեցին կը գործածէ Աւետարան, ժամագիրք, Մաշտոց, պատարագամատոյց, շարակնոց, տօնացոյց, տաղարան, ծիսարան, Յայսմաուրք, ճաշոց:

Ի՞նչ է խորհուրդը:

Խորհուրդը Քրիստոսի կողմէ հաստատուած սրբարար արարողութիւն մըն է որուն միջոցաւ կ'ընդունինք Ատուածային շնորհները:

Սուրբ Պատարագի ընթացքին ինչպէ՞ս գիրար կ'ողջունենք:

Ողջոյն տուող հաւատացեալը կ'ըսէ.-

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»:

Ողջոյն ստացողը կը պատասխանէ.-

«Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»

## Քրիստոսի նմանիլ . . . խաղաղասէր մարդ ըլլալով

Նախ դուն քեզ պահէ խաղաղութեան մէջ եւ այն ատեն կրնաս ամէնուն  
խաղաղութիւն հաղորդել:

Խաղաղասէր մարդը աւելի օգտակար է քան գիտնականը: Բուն մարդը բարին կը  
փոխէ չարի, դիւրաւ կը հաւատայ չարին: Բայց մարդը խաղաղասէր եւ բարի, ամէն ինչ  
կը տանի բարիին:

Ան որ հաստատ է խաղաղութեան մէջ, չունի կասկած ոչ մէկու մասին, բայց մարդը  
մտահոգ եւ դժգոհ, կը յուզուի տարակոյսներէն, ինքը չունի հանգիստ եւ չի թողուր որ  
ուրիշները հանգչին:

Յաճախ կ'ըսէ ինչ որ պէտք չէր ըսել եւ չ'ըներ ինչ որ պարտաւոր է ընել:

Ուշադիր է ուրիշներու պարտականութեան, կ'անտեսէ իր պարտականութիւնները:

Բայց դուն եղի՛ր նախ նախանձախնդիր քու անձիդ հանդէպ, եւ ապա եռանդ  
կրնաս արդարութեամբ ծաւալել դէպի մերձաւորդ:

Դուն լաւ գիտես քու գործերդ զարդարել եւ արդարացնել եւ չես ուզեր ընդունիլ  
արդարացումն ուրիշին:


Աւելի արդար պիտի ըլլար եթէ մեղադրէիր դուն քեզ եւ արդարացնէիր քու  
եղբայրդ:

Եթէ կ'ուզես որ հանդուրժեն քեզի, դուն ալ հանդուրժէ ուրիշներուն: Տէս թէ  
տակաւին ո'րքան հեռու ես ճշմարիտ եղբայրասիրութենէն եւ խոնարհութենէն որ երբեք չի  
զայրանար եւ չի բարկանար եթէ ոչ ինքն իր դէմ:

Մեծ արժանիք չէ ապրիլ բարի եւ հեզահամբոյր մարդոց հետ, որովհետեւ ասիկա  
հաճելի է ամէնուն, իւրաքանչիւրը կը սիրէ իր հանգիստը, կը համակրի անոր որ  
համակարծիք է իրեն:

Բայց ապրիլ խաղաղութեան մէջ մարդոց հետ որ բիրտ են, վարքով մոլար,  
անկարգ եւ կամ կը հակառակին մեզի, մեծ շնորհք մըն է, արի առաքինութիւն՝ արժանի  
գովասանքի:

# Աստուածաշունչը մանուկներու համար Հինգ հազարին կերակրումը



Առաքեալները վերադարձան եւ ի՛նչ որ ըրած էին՝ պատմեցին Յիսուսի: Յիսուս զանոնք առաւ եւ քաշուեցաւ Բեթսայիդա քաղաքին մօտիկ ամալի վայր մը:

Փողովուրդը երբ գիտցաւ՝ հետեւեցաւ իրեն: Յիսուս ընդունեց զանոնք եւ սկսաւ անոնց քարոզել Աստուծոյ արքայութեան մասին: Իսկ անոնք որոնք բժշկութեան պէտք ունէին՝ բժշկեց:



Երբ օրը կ'հրիկնանար, տասներկու աշակերտները մօտեցան Յիսուսի եւ ըսին.

- Արձակէ՛ ժողովուրդը որպէսզի երթան շրջակայ գիւղերն ու ագարակները, հանգչին եւ ուտելիք գտնեն, որովհետեւ հոս ամայի տեղ ենք:

Յիսուս անոնց ըսաւ.

- Դո՛ւք տուէք անոնց ուտելիքը:


Անոնք ըսին.

- Ամբողջ մեր ունեցածը հինգ հաց եւ երկու ձուկ է. բայց եթէ կ'ուզես՝ կ'երթանք ժողովուրդին համար բաւականաչափ կերակուր կը գտնենք:

Որովհետեւ շուրջ հինգ հազար մարդ կ'ար: Յիսուս աշակերտներուն ըսաւ.

- Նստեցուցէք զանոնք յիսունական հոգիոց խումբերով:

Անոնք կատարեցին հրահանգը եւ նստեցուցին բոլորն ալ:



Ապա Յիսուս առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, աչքերը երկինք բարձրացուց, օրհնեց, կտրեց եւ աշակերտներուն տուաւ՝ որ բաժնեն ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան, եւ աշակերտները աւելցած կտորները հաւաքելով, տասներկու սակառ լեցուցին:



Անոնք որոնք կը հաւատան ու վստահին Աստուծոյ, առատօրէն պիտի վայելեն Անոր պարգեւած շնորհներն ու բարիքները:

### Եզակի գիրեր

Հայերեն գիրերով Sudoku

գ	բ	դ	ը	ա	ե	զ	է	թ
է	ա	ե	թ	զ	դ	գ	բ	ը
թ	զ	ը	է	գ	բ	ե	ա	դ
ա	դ	գ	ե	է	զ	թ	ը	բ
ը	ե	թ	բ	դ	ա	է	զ	զ
բ	է	զ	գ	թ	ը	դ	ե	ա
դ	ը	բ	զ	ե	գ	ա	թ	է
զ	գ	է	ա	ը	թ	բ	դ	ե
ե	թ	ա	դ	բ	է	ը	զ	գ

Նախորդ «Եզակի գիրեր» ուն լուծումը

	ը		ե	թ	զ	է		
ե					է		դ	զ
զ	է	բ	ա					
է				ա		դ	զ	
բ			թ		ե		է	
	ա	թ		է				բ
					զ	ը	ա	դ
ա	զ		դ					զ
		զ	բ	ե			թ	

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

### ՌՐԵ Է ՃԻՉԴ պատասխանը

Սեպտեմբեր ամսուան պատասխանները

Մանկապարտէզի անկիւն  
Յիսուս, մանուկները, արգելք,  
այդպիսիներուն, արքայութիւնը

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

- բ. 1929
- դ. 1980
- զ. 15
- գ. ուստի ոեւէ բանի կարօտ պիտի չմնամ
- դ. Խաչվերաց
- բ. Ս. Գէորգ
- Գողգոթա
- զ. 30
- սաներն, լուսածին, նախնեաց:
- անխողով, արի, հաւատաւոր, ցանկալի:

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

- բ. Արամ Ա. Կաթողիկոս
- դ. Գարեգին Բ. Կաթողիկոս
- զ. սէրը

- զ. Հինգշաբթի
- բ. յայտնութիւնը Քրիստոսի
- դ. քշոց
- ա. ողջոյնի ընթացքին
- զ. Շարական
- բ. Խաչվերաց
- ա. Համբարձում

Երկրորդականի անկիւն

- բ. Արամ Ա. Կաթողիկոս
- դ. Գարեգին Բ. Կաթողիկոս
- ա. ամբարիշտ մարդոց խորհուրդին չի հետեւիր
- սրտովդ, հոգիովդ, մտքովդ
- զ. յարութիւնը Քրիստոսի
- ա. սկիհ
- բ. Յայտնութիւն
- զ. Շարական
- բ. Խաչվերաց
- բ. կը գոցուի

### Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր ըստ Ղուկասի Աւետարանին 9.12-13  
 կ'իրիկնանար, Արձակէ՛, գտնեն, ամալի, ուտելիքը,  
 ձուկ, հաց, բաւականաչափ  
 Երբ օրը -----, տասներկու աշակերտները  
 մօտեցան Յիսուսի եւ ըսին.

- ----- ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ  
 գիւղերն ու ագարակները, հանգչին եւ ուտելիք -----,  
 որովհետեւ հոս ----- տեղ ենք:

Յիսուս անոնց ըսաւ.

- Դո՛ւք տուէք անոնց -----:

Անոնք ըսին.

- Ամբողջ մեր ունեցածը հինգ ----- եւ երկու ----- է.  
 բայց եթէ կ'ուզես, կ'երթանք ժողովուրդին համար  
 ----- կերակուր կը գնենք:

### Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ հայ գիրերու գիտը:

- ա.- 301
- բ.- 405
- գ.- 451
- դ.- 1

- ա.- Եղիշէ Պատմիչ
- բ.- Դաւիթ Անյաղթ
- գ.- Մովսէս Քերթող
- դ.- Գրիգոր Նարեկացի

2.- Ո՞ր գիրքը առաջին անգամ հայերէնի թարգմանուեցաւ:

- ա.- մեր հայերէնի գիրքը
- բ.- կարմիր գլխարկիկը
- գ.- Աստուածաշունչը
- դ.- Յայսմաուրքը

7.- Պատարագի ընթացքին, դպիրները Եկեղեցոյ հետեւեալ բաժիններէն որո՞ւն մէջ կը կենան:

- ա.- Գաւիթ
- բ.- Խորան
- գ.- Դաս
- դ.- Սրահ

3.- Ո՞վ ստեղծեց հայ Գիրերը:

Սուրբ Մ-----g

8.- Դրախտի պարտէզը կը կոչուի նաեւ:

Ե-----ի պարտէզ

4.- Ո՞ր էր հայ գրչութեան առաջին կեդրոնը:

Վ-----տ

9.- Յիսուս ի՞նչ չափի ճաշով կերակրեց 5,000 ը:

5.- Ո՞վ է այն Սուրբ թարգմանիչը որ գրած է «Հաւատով Խոստովանիմ»ը:

- ա.- 5 հաց եւ երկու ձուկ
- բ.- 5 ձուկ եւ երկու հաց
- գ.- 5 հաց եւ հինգ ձուկ
- դ.- 2 հաց եւ երկու ձուկ

- ա.- Եղիշէ Պատմիչ
- բ.- Դաւիթ Անյաղթ
- գ.- Մովսէս Քերթող
- դ.- Ներսէս Ծնորհալի

10.- Քանի՞ կողով ճաշ աւելցաւ:

- ա.- 2
- բ.- 5
- գ.- 12
- դ.- 5,000

6.- Ո՞վ է այն Սուրբ թարգմանիչը որ գրած է «Նարեկ»ը:

### Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ հայ գիրերու գիւտը:

- ա.- 301
- բ.- 405
- գ.- 451
- դ.- 1

2.- Յիսուսի ո՞ր հրաշքը յիշուած է 4 Աւետարաններուն մէջ:

- ա.- Հինգ հազարին կերակրումը
- բ.- փոթորիկին եւ ալեկոծութեան հանդարտիլը
- գ.- Կանայի հարսնիքին՝ ջուրը գինիի փոխելը
- դ.- Յայրոսի աղջկան յարութիւնը

3.- Հետեւեալներէն ո՞վ Սուրբ թարգմանիչներուն մաս չի կազմեր:

- ա.- Եղիշէ
- բ.- Ներսէս Ընորհալի
- գ.- Դաւիթ Անյաղթ
- դ.- Թորոս Ռոսլին

4.- Գրէ՛ հայերէնի թարգմանուած առաջին նախադասութիւնը

Ճ----- զ----- եւ  
 զ-----  
 իմանալ զ----- հ-----

5.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Գիւտ Խաչին:

-----

6.- Ի՞նչ կը նշանակէ «Փութանակի թարգմանութիւն»:

- ա.- Ուշադիր թարգմանութիւն
- բ.- Կարճ թարգմանութիւն
- գ.- Աճապարանքով եղած թարգմանութիւն
- դ.- Ասորերէնէ թարգմանութիւն

7.- Սուրբ Ներսէս Կլայեցի կաթողիկոսը Ո՞ր հանրաժանօթ աղօթքը գրած է որ կը բաղկանայ 24 տուներէ:

-----

8.- Հին կտակարանի ո՞ր գիրքով է որ Սուրբ թարգմանիչները սկսան Աստուածաշունչը թարգմանել:

- ա.- Սաղմոս
- բ.- Առակներ
- գ.- Ժողովող
- դ.- Ծննդոց

9.- Ամբողջացո՞ւր հետեւեալ Սուրբ թարգմանիչներուն անունները:

- ա.- ----- Անյաղթ
- բ.- ----- Քերթող

10.- Ծաբթուան ո՞ր օրուան կը զուգադիպի Թարգմանչացը:

- ա.- Երկուշաբթի
- բ.- Չորեքշաբթի
- գ.- Ուրբաթ
- դ.- Ծաբաթ

**Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Երկրորդականի անկիւն**

1.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ Հայ գիրերու գիւտը:

- ա.- 301
- բ.- 405
- գ.- 415
- դ.- 451

2.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ Քրիստոսի Խաչին գիւտը:

- ա.- 301
- բ.- 351
- գ.- 326
- դ.- 381

3.- Ո՞ր Աւետարաններուն մէջ կը կարդանք Հինգ հազարին Կերակրումի հրաշքին մասին: Թուել բոլորը:

-----  
-----

4.- Հայաստանի ո՞ր մարզին մէջ կը գտնուի Վաղարշապատը:

-----

5.- Թուէ՛ 6 Սուրբ Թարգմանիչները որոնց տօնը ամէն տարի կը տօնենք Հոկտեմբեր ամսուան ընթացքին:

- ա. -----
- բ. -----
- գ. -----
- դ. -----
- ե. -----
- զ. -----

6.- 6 Սուրբ Թարգմանիչներէն ո՞ր երկուքը 5րդ դարու թարգմանիչներու խումբին կը պատկանին:

- ա. -----
- բ. -----

7.- Ո՞ր քաղաքն է հայ գրչութեան առաջին կեդրոնը:

-----

8.- Ո՞ր սուրբ թարգմանիչն է «Մատեան Ողբերգութեան» հեղինակը:

-----

9.- Ո՞ր սուրբ թարգմանիչն է «Հաւատով Խոստովանիմ» աղօթքին հեղինակը:

-----

10.- Որոնք են Եդեսի գետին 4 բաժանումները:

- ա. -----
- բ. -----
- գ. -----
- դ. -----

## Կարճ լուրեր Կիրակնօրեայէն

### «ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»Ի

ճերկայ եւ ճախկին թիւերը կը գտնուին ճաեւ համացանցի վրայ հետեւեալ հասցէով  
**[www.sourphagop.org/mashdots](http://www.sourphagop.org/mashdots)**

### Ո՞րն է ճիշդ պատասխանը

Սեպտեմբեր ամսուան պատասխանները եւ մասնակցողները

#### Մանկապարտէզ

Հրակ Պանքեան, Լիլի Չինչինեան, Սելենա Կարապետեան, Ալիս Մելքեան, Սահակ Մելքեան, Յակոբ Քեպթանճեան, Անդրանիկ Նասոյեան

Անսխալ պատասխանողներ

Տանիէլ Տօնապետեան, Լորա Տօնապետեան

#### Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Փաթիլ Կարապետեան, Քրիսթօֆըր Արմուրլու, Սեակ Դաւիթեան, Կլօրիա Կարապետեան, Խշիշեան Արշակ, Խշիշեան Ռիթա, Քարինա Քիւփելեան, Ճեսիքա Մաթոսեան:

Անսխալ պատասխանողներ

Սեակ Պապիկեան, Մհեր Պանքեան

#### Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Արազ Գեպթանճեան, Կասիա Արմուրլու, Ալէք Կարապետեան, Մհեր Մաթոսեան, Սեւան Մելքեան, Նանոր Քիւփելեան, Ներսէս Նասոյեան, Լորի Չինչինեան, Կարինէ Կարապետեան, Սերժ Դաւիթեան, Նանար Եագուպեան:

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Դալար Գեպթանճեան

#### Երկրորդականի անկիւն

Ռոզալին Չինչինեան, Հրայր Մաթոսեան, Գրիգոր Մաթոսեան, Սեդրակ Մամիրոյեան, Լորա Սարիմանուկեան

# Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցուց Սուրբ Յակոբ Կիրակնորեայ Դպրոցի ամսաթերթ

Այս թիւով...

Խմբագրական՝

Հաւասարակշռել նիւթերէն եւ հոգեւոր կեանքերը: Էջ 2

Հրեշտակապետեր Գաբրիէլ. Նոյեմբեր ամսուան բացատրական բառարան: Էջ 3

Ներքին խաղաղութիւնը եւ յառաջդիմութիւնը առաքինութեան մէջ: Էջ 4

Էմմանուէլ, ընթերցուածք եւ թեմ. եկեղեցական բառարան: Էջ 5

Պօղոս առաքեալի կողմէ թեսաղոնիկեցիներուն գրուած առաջին նամակէն: Էջ 6

Հայաստանեայց եկեղեցին, հարցումներով, պատասխաններով: Էջ 6

Եկեղեցին հայկական: Էջ 7

Աստուածաշունչը մանուկներու համար. Անմիտ Հարուստին Առակը: Էջ 8-9-10

Եզակի գիրեր: Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը: Էջ 12-13-14-15

Հոկտեմբեր ամսուան մասնակցողներ: Էջ 16

Նոյեմբեր 2007  
ԺԵ տարի- թիւ 3



Ան որ գիտէ իր խօսքերը  
կշռել՝ կատարեալ մարդ  
է, ինքզինքին իշխելու  
կարող:

Յակոբոսի 2.26

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակույթ

Խմբագրական

## Հաւասարակշռել նիւթեղէն եւ հոգեւոր կեանքերը

Տարածուած սկզբունք է եւ ընդունուած իրականութիւն, թէ նիւթապաշտ այն մշակոյթը որուն մէջ կ'ապրինք ներկայիս անկարելի կը դարձնէ մարդուս հոգեւոր կեանքի մշակումն ու զարգացումը: Նոյնիսկ նկարագրով ոչ նիւթապաշտ մարդիկ քաջ պէտք է պահեն բնական եւ աշխարհիկ կեանքին հետ, այսինքն պէտք է ձգտին ձեռք ձգել նուազագոյն աստիճանի նիւթ, ապահովելու համար իրենց առաջնահերթ կարիքներն ու առօրեայ պէտքերը: Համատարած հաւատալիք է թէ հոգեւոր կեանքի տէր ըլլալու համար մարդ պարտի հեռանալ աշխարհիկ կեանքէն ու ապրիլ մեկուսացման եւ խոկման վիճակ որովհետեւ նիւթեղէն եւ ոգեղէն զոյգ կեանքեր ունենալը անկարելիութեան համազօր կը նկատուի:

Իրականութիւնը սակայն այդքան խիստ չէ: Մարդ արարածը ինչպէս գիտենք բազմակողմանի յատկութիւններ ունի, ինչպէս մտային, զգացական, ընկերային եւ... հոգեւոր: Հաւասարակշիռ մարդը այն է որ կը յաջողի առողջ կերպով միատեղ մշակել նիւթեղէն աշխարհիկ կեանք գոյատեւելու նպատակով եւ նոյն ատեն ինքն իր մէջ զարգացնել հոգեւոր կամ ոգեղէն կեանք. այս վերջինը կը մշակուի ո՛չ գոյատեւելու մտավախութեամբ այլ՝ յատկապէս ազնուանալու:

Հոգեւոր կեանքի ձգտիլը մարդս կը բարձրացնէ հասարակ նիւթական կեանքէն վեր ու կը մղէ դէպի վսեմը, առաքինին, ոգեղէնը, այլ խօսքով՝ դէպի Աստուածայինը: Հոգեւոր կեանք վարելը որեւէ ձեւով չի վտանգեր մեր նիւթեղէն բնական եւ ընթացիկ կեանքերը այլ՝ կը զօրացնէ զանոնք որովհետեւ մեզ կու տայ այնպիսի հարստութիւններ որոնց շնորհիւ մեր դիմադրականութիւնը կը մեծնայ, մեր համբերութիւնը կը բազմապատկուի, մեր հաւատքը կ'արմատանայ ու ամէն դժուարութիւն կամ վհատութիւն այլեւս անլուծելի եւ անվերջ կացութեան չի վերածուիր:

Հոգեւոր կեանք ապրիլը աշխարհիկ մարդոց համար ոչ միայն կարելի է այլ նաեւ՝ կարելոր: Զգտիլ բարիին, առաքինիին, անշահախնդրութեան, վսեմին եւ իրականութեան, հեռու մնալով ամէն այն գործերէն որոնք մեզ կրնան հեռացնել վերոյիշեալ յատկութիւններէն. ահաւասիկ մի քանի միջոցներ որոնց կիրառումով մարդ թափ կու տայ իր հոգեւոր կեանքին ու կը հաւասարակշռէ նիւթն ու ոգեղէնը իր կեանքէն ներս, այսպիսով այժմէացնելով Աստուծոյ կողմէ իրեն պարգեւուած ամէն շնորհերը, ըլլան անոնք նիւթեղէն թէ՛ ոգեղէն:

«Ես եկայ՝ որպէսզի կեանք ունենան, եւ լեցուն կեանք ունենան:»

Յիսուս Քրիստոս  
Յովհաննէսի Աւետարան 10.10

«Մաշտոցի Արձագանգ» Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ: Խմբագիր՝ Շաղիկ Թորիկեան-Պոյաճեան  
Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը  
Ուսուցիչներ՝ Վերժին Գիւլթանճեան, Թամար Գիզիրեան, Յասմիկ Նաճարեան, Գարոլ Մանուկեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան: Տնօրէն՝ Թորոս Պապիկեան

## Նոյեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Նոյեմբեր 1	Սուրբ Յովհաննէս Ոսկեբերան Հայրապետ
Նոյեմբեր 3	Տօն Ամենայն Սրբոց
Նոյեմբեր 10	Սուրբ Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի
Նոյեմբեր 17	Սուրբ Առաքեալներ, Անդրէասի եւ Փիլիպպոսի
Նոյեմբեր 18	Բարեկենդան Յիսնակի Պահքի
Նոյեմբեր 19	Ա. օր Յիսնակի Պահքի
Նոյեմբեր 21	Ընծայումն Սուրբ Աստուածածնի

### Նոյեմբեր 10

#### Սուրբ հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի

Նոյեմբեր ամսուան առաջին կամ երկրորդ Ծաբաթ օրը, Հայաստանեայց եկեղեցին կը յիշատակէ հրեշտակապետեր Գաբրիէլի եւ Միքայէլի տօնը:

Հրեշտակ կը նշանակէ պատգամաւոր, առաքեալ: Նախապէս անոր կը տրուէր երկնային դէսպան, պատգամաւոր, սուրհանդակ նշանակութիւնը: Աստուածաշունչը կը վկայէ որ Հրեշտակները իբրեւ լուսեղէն ստեղծուած են առաջին օրը, լոյսի հետ միասին: Անոնք ժամանակի ներգործութենէն չեն ազդուիր եւ սեռական յատկանիշներ չունին:

Աստուածաշունչէն ներս հրեշտակներու մասին ակնարկութիւնները շատ են: Անոնք կը ներկայացուին իբր բազմաթիւ, մեծագործ եւ զօրաւոր էակներ: Հին կտակարանին մէջ անոնք Աստուծոյ ներկայացուցիչները կը նկատուին, միջնորդներ հոգեւոր եւ նիւթեղէն աշխարհներուն միջեւ: Անոնք ունին իրենց ղեկավարները որոնցմէ ամենէն աւելի ծանօթ են Գաբրիէլ հրեշտակը եւ Միքայէլը: Հայ միջնադարեան մանրանկարչութեան մէջ, կը գտնենք յատկապէս Գաբրիէլ հրեշտակի պատկերը, Տիրամօր աւետելու ատեն:

Օրհնաբանեցէ՛ք Տէրը, ո՛վ հրեշտակներ,  
անոր հրամանները լսող եւ գործադրող հզօր էակներ:  
Օրհնաբանեցէ՛ք Տէրը, դուք՝ որ անոր բանակն էք  
եւ անոր կամքը կատարող պաշտօնեաները:  
Օրհնաբանեցէ՛ք Տէրը, դուք՝ բոլո՛ր ստեղծուածներ,  
որովհետեւ անոր տէրութիւնը ամենուրեք կը տարածուի:  
Օրհնաբանէ՛ Տէրը, ո՛վ իմ անձս:

Սաղմոս 103[102].20-22



## Ներքին խաղաղութիւնը եւ յառաջդիմութիւնը առաքինութեան մէջ

Մենք պիտի կարենայինք վայելել մեծ խաղաղութիւն եթէ մերժէինք զբաղիլ ուրիշներուն խօսքերով կամ գործերով եւ ամէն բանով որուն պատասխանատուն չենք:

Ինչպէ՞ս կարող է երկար ժամանակ խաղաղութեան մէջ մնալ մարդը, որ կը պարապի օտարոտի զբաղումներով, հետամուտ է զեղումին դէպի դուրս եւ քիչ կամ հազուադէպօրէն կ'ամփոփուի:

Երանի՜ պարզերուն, որովհետեւ պիտի վայելեն մեծ խաղաղութիւնը:

Ի՞նչպէս կարգ մը սուրբեր բարձրացան առաքինութեան վսեմ աստիճանին եւ վերհայեցողութեան:

Որովհետեւ անոնք ճիգ թափեցին մահանալու աշխարհի ամէն բաղձանքներուն եւ այսպէս կրցան միանալ Աստուծոյ խորունկ զօդերով սրտի եւ պարապիլ միայն իրենց հոգիով:

Մենք շատ անձնատուր ենք մեր կիրքերուն եւ շատ մտահոգ ենք օրուան անցուդարձերով:

Հազուադէպօրէն կը յաղթահարենք մէկ մոլութեան: Չունինք եռանդը ամէն օր յառաջդիմութիւն մը նուաճելու եւ այսպէս կը մնանք գաղջ եւ ցուրտ:

Եթէ մենք կատարելապէս հրաժարէինք մեր եսէն եւ հոգեպէս զերծ ըլլայինք մտահոգութիւններէն, այն ատեն պիտի կարենայինք ճաշակել ինչ որ աստուածային է եւ ձեռք ձգել փորձառութիւնը երկնային վերհայեցողութեան:

Ամենէն մեծ եւ միակ արգելքն է հետեւեալը. կը ծառայենք մեր կիրքերուն եւ ցանկութիւններուն եւ երբեք ճիգ չենք թափեր հետեւիլ սուրբերուն կատարելութեան ուղիին:

Եւ եթէ պատահի որ մենք ենթարկուինք թեթեւ հակառակութեան մը, իսկոյն անձնատուր ենք վհատութեան եւ կը դիմենք մարդկային մխիթարութիւններուն:

Եթէ քաջասիրտ մարտիկներու նման մնանք հաստատ պայքարին մէջ, ստոյգ պիտի տեսնենք Աստուծոյ օգնութիւնը որ կը հասնի մեզի երկինքէն:

Որովհետեւ Աստուած միշտ պատրաստ է իր օգնութիւնն շնորհել անոնց որոնք կը դիմադրեն եւ կ'ապաւինին իր շնորհքին: Ինք կու տայ մեզի առիթները պայքարի որպէսզի տանի մեզ յաղթութեան:

*Հատուած՝ «Նմանութիւն Յիսուս Քրիստոսի» գիրքէն, Թովմաս Գեմբացի, Պէյրութ 1997*

Եկեղեցական բառարան

Է Է

Էմմանուէլ

« Ահա կոչար պիտի յղանայ եւ որդի մը կը ծնի, եւ զայն պիտի կոչեն Էմմանուէլ»: Այս բառերով կը խօսի Եսայի Մարգարէն ակնարկելով Քրիստոսի, իբրեւ զալիք Մեսիան:

Էմմանուէլ բառը կը նշանակէ «Աստուած մեզ հետ»:

Թ Թ

Թեմ

Թեմ կը կոչուի տարածաշրջան մը ուր կը բնակին նոյն եկեղեցու պատկանող Հաւատացեալները: Թեմ մը իր կարգին կը բաժնուի ծովաւոր: Իւրաքանչիւր թեմ ունի իր հոգեւոր հովիւը կամ եպիսկոպոսը:

Մոնթրէալի Սուրբ Յակոբ եկեղեցին կը պատկանի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գանատայի Հայոց թեմին:


Ը Ը

Ընթերցուածք

Ընթերցուածքները Սուրբ Գիրքէն առնուած հատուածներ են, որոնք ըստ եկեղեցու հաստատած տօնացոյցին կը կարդացուին ամէն օր եկեղեցիէն ներս:

Ըստ արարողութեան բնոյթին, ժամերգութիւն կամ պատարագ, ընթերցուածքները կը կարդան դպիրը, սարկաւազը կամ քահանան:

Իւրաքանչիւր ընթերցուածքի կը յաջորդէ համապատասխան սաղմոս եւ շարական:



# Խօսքն Աստուծոյ



## ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (4.1-12)

Վերջապէս, եղբայրներ՛ր, մենք ձեզի սորվեցուցինք թէ ի՛նչպէս պէտք է ապրիլ Աստուծոյ հաճելի ըլլալու համար: Թէպէտ այդպէս կ'ապրիք արդէն, սակայն կը խնդրենք եւ Տէր Յիսուս Քրիստոսի անունով կը թելադրենք՝ որ շարունակէք յատաշանալ ներկայ ձեր ընթացքին մէջ: Գիտէք թէ ի՛նչ պատուէրներ տուինք ձեզի Տէր Յիսուսի անունով, որովհետեւ Աստուծոյ կամքն է որ դուք սրբուիք եւ ամենեւին հեռու մնաք պոռնկութենէ: Ձեզմէ իւրաքանչիւրը թող սրբութեամբ եւ պատուով ամուսնանայ: Կրթոտ ցանկութիւններու անձնատուր մի՛ ըլլաք հեթանոսներուն պէս, որոնք զԱստուած չեն ճանչնար. կամ չըլլա՛յ որ մէկը եղբօր մը դէմ մեղանչէ՛ անոր կինը յափշտակելով, որովհետեւ այդ բոլորին համար Տէրը իր դատաստանին մէջ անողոք պիտի ըլլայ, ինչպէս սկիզբէն ըսինք ձեզի եւ ազդարարեցինք: Միթէ Աստուած մեր պղծալից կեանքը շարունակելու՞ հրաւիրեց մեզ, թէ՛ սրբութեամբ ապրելու: Անշուշտ թէ սրբութեամբ ապրելու: Հետեւաբար ով որ սրբութեան այս պատուէրը կ'արհամարհէ՛ մարդ մը անարգած չըլլար, այլ նոյնինքն զԱստուած, որ իր Սուրբ Հոգին կու տայ մեզի:

Գալով եղբայրասիրութեան, մեր

գրելուն պէտք չունիք, որովհետեւ ինքնին դուք Աստուծմէ սորված էք իրար սիրել, ինչպէս արդէն գործնապէս այդ սէրը ցոյց կու տաք ամբողջ Մակեդոնիայի բոլոր եղբայրներուն նկատմամբ: Բաց դարձեալ, եղբայրներ՛ր, կը խնդրենք որ աւելի առատանաք ձեր սիրոյն մէջ, ջանաք հաղարտ կեանք մը վարել, միայն ձեր գործին նայիլ եւ ձեր աշխատանքի վաստակով ապրիլ, ինչպէս որ պատուիրեցինք ձեզի, որպէսզի ձեր պարկեշտ ընթացքով յարգուիք շհաւատացողներէն եւ ունէ մէկուն կարօտ չմնաք:

### Հայաստանեայց Եկեղեցին հարցումներով, պատասխաններով

Ինչո՞ւ Հայաստանեայց եկեղեցին կը կոչուի առաքելական:

Հայաստանեայց եկեղեցին կը կոչուի առաքելական որովհետեւ զայն հիմներ են Յիսուսի առաքելներէն երկուքը՝ Թադէոս եւ Բարթողիմէոս: Այն առաքելական կը կոչուի նաեւ որովհետեւ կը պահէ ու կը յարատեւ Առաքելներու աւանդած հաւատքը:

Ի՞նչ է Կրօնը. ի՞նչ է աղօթքը:

Մարդու եւ Աստուծոյ միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնը կը կոչուի կրօն: Իսկ անոնց միջեւ Հաղորդակցութեան միջոցը աղօթքն է:

## Եկեղեցին հայկական

### *Յօդուածաշարք Հայ եկեղեցւոյ շէնքերու մասին*

Չորրորդէն եօթերորդ դարերու ընթացքին է որ ձեւաւորուած են քրիստոնէական կրօնքի պաշտամունքի կառուցները Հայաստանի մէջ: Այդ շրջանին է որ ստեղծուած են շէնքերու գրեթէ բոլոր կառուցային յօրինուածքները, որոնք հետագային կիրարկուած են Հայաստանի ամբողջ տարածքին:

301 թուին իսկ, Հայաստանը, դառնալով աշխարհի մէջ առաջին պետութիւնը որ ընդունեց քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն, ունեցած է եկեղեցիներու ինքնուրոյն տիպար որ եղած է բարձր մակարդակով եւ հարուստ գեղագիտական ասանդներով: Ըստ Փաւստոս Բիւզանդի, Գրիգոր Լուսաւորիչ եւ Տրդատ թագաւոր սկզբնական շրջանին հեթանոսական քանդուած տաճարներու հիմերուն վրայ կառուցած են եկեղեցիները, կամ այդ տաճարները բարեփոխութիւններու ենթարկելով՝ վերածած եկեղեցիներու: Այս պարագային բեմը փոխադրած են դէպի Արեւելք եւ գործածած են իբր խորան: Ագաթանգեղոս կը պատմէ թէ առաջին եկեղեցիներու ճարտարապետը ինքը՝ Գրիգոր Լուսաւորիչը կը նկատուի:



*Լեռնակերտի եկեղեցին, Ե-Է դար, միանաւ կառուցով*

Մեզի հասած, Հայաստանի հնագոյն եկեղեցիները եղած են միակտոր դահլիճներ, որոնց մէջ տեղ տրուած է խորանին, ինչպէս չորրորդէն վեցերորդ դարերու ընթացքին Լեռնակերտի եւ Ագարակի եկեղեցիները: Եղած են նաեւ եկեղեցիներ, որոնց խորանը կիսակլոր ձեւով դէպի դուրս եկած է քառանկիւն կառուցուածքէն, ինչպէս Լուսակերտի եւ Ոսկեվազի եկեղեցիները: Սահակ Ա. Պարթեւի կանոններուն համաձայն, երբեմն խորանին երկու կողմերը կառուցուած են սենեակներ քահանաներուն բնակութեան համար:

Յատուկ տիպարներ են 4-րդ դարու վերջէն մինչեւ 6-րդ դար, կարգ մը եկեղեցիներու դուրսէն շինուած փոքր սրահները արեւելեան կողմը փոքր խորաններով, չմկրտուածներու եւ ապաշխարողներու համար, ինչպէս՝ Գառնի, Կուրթաս, Վարդաբլուր, Եւայն:



*Գառնիի տաճարը, Ա. դար, հելլենական ճարտարապետական իր ոճով ծանօթ*

*Աղբիւր՝ Քրիստոնէայ Հայաստան հանրագիտարան-Երեւան 2002  
Շարունակելի*

# Աստուածաշունչը մանուկներու համար Անմիտ հարուստին առակը




Փամանակին հարուստ մարդ մը կար որ բազմաթիւ արտեր ունէր:

Տարի մը անոր արտերը առատ բերք տուին:

Անիկա ուրախութեամբ կ'ըսէր՝ «Ինչ բախտաւոր եմ, ինչ հարուստ եմ»:

Այդ վարկեանին իր աշխատաւորներէն մէկը մօտեցաւ իրեն ու ըսաւ «Վարպետ, այսչափ առատ բերք ունեցար, քիչ մը իմ ընտանիքիս կու տա՞ն»:



«Ո՛չ» պատասխանեց  
ան, «Պէտք է այս  
բոլորը ինքզինքիս  
համար պահեմ»:  
Հարուստ մարդը կը  
մտածէր ու կ'ըսէր  
«Ի՞նչ ընեմ, հունձքս  
ամբարելու համար  
շտեմարաններուս մէջ  
տեղ չմնաց: Չեմ  
ուզեր ուրիշին տալ,  
ի՞նչ ընեմ»



«Այո՛, գիտե՛մ ինչ  
պիտի ընեմ: Պիտի  
քանդեմ  
շտեմարաններս եւ  
աւելի ընդարձակները  
պիտի շինեմ եւ հոն  
ամբարեմ ցորենս եւ  
ամբողջ բերքերս:  
Ապա ես ինծի պիտի  
ըսեմ, ով մարդ, քանի  
որ երկար տարիներու  
համար ամբարած  
հարստութիւն ունիս,  
հանգիստ ըրէ, կե՛ր,  
խմէ՛ եւ վայելէ՛»:

Բայց Աստուած ըսաւ  
իրեն «Անմիտ մարդ,  
այս գիշեր իսկ պիտի  
մեռնիս, որո՞ւ պիտի  
մնայ հաւաքած  
հարստութիւնդ»:  
Հարուստ մարդը այդ  
գիշեր մեռաւ, բայց  
ոչինչ կրցաւ տանիլ իր  
հետ:



Լաւագոյն ձեւը մեր  
հարստութիւնը ուրիշի  
հետ բաժնելն է,  
որբերուն օգնելն ու  
աղքատներուն բաժին  
հանել:

### Եզակի գիրեր

Հայերէն գիրերով Sudoku

զ	ը	դ	ե	թ	գ	է	բ	ա
ե	թ	ա	ը	բ	է	գ	դ	զ
գ	է	բ	ա	զ	դ	թ	ը	ե
է	ե	ը	զ	ա	բ	դ	գ	թ
բ	գ	զ	թ	դ	ե	ա	է	է
դ	ա	թ	գ	է	ը	ե	զ	բ
թ	բ	ե	է	գ	զ	ը	ա	դ
ա	զ	է	դ	ը	թ	բ	ե	գ
ը	դ	գ	բ	ե	ա	զ	թ	է

Նախորդ «Եզակի գիրեր» ուն լուծումը

	գ		թ					
		զ		ը	դ	գ		է
թ		է	ե				ա	
ա		դ	գ			թ		զ
	զ			դ			բ	
ը		թ			է	դ		ե
	ը				բ	ե		գ
է		բ	ա	զ		ը		
					ը		է	

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, թ, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

### Ո՞րն է ճիշդ պատասխանը

Հոկտեմբեր ամսուան պատասխանները

Մանկապարտէզի անկիւն կ'իրիկնանար, Արձակէ՛, գտնեն, ամալի, ուտելիքը, հաց, ձուկ, բաւականաչափ

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. բ. 405
2. գ. Աստուածաշունչը
3. Մերոպ Մաշտոց
4. Վաղարշապատ
5. դ. Ներսէս Շնորհալի
6. դ. Գրիգոր Նարեկացի
7. գ. դաս
8. Եղեմ
9. ա. Հինգ հաց եւ երկու ձուկ
10. գ. 12

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. բ. 405
2. ա. Հինգ հազարին կերակրումը
3. դ. Թորոս Ռոսլին
4. Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

5. Հոկտեմբեր 28

6. գ. Աճապարանքով եղած թարգմանութիւն

7. ա. ողջոյնի ընթացքին

8. Հաւատով խոստովանիմ

9. Դաւիթ Անյաղթ, Մովսէս Քերթոզ

10. դ. Շաբաթ

Երկրորդականի անկիւն

1. բ. 405

2. գ. 326

3. Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս

4. Արմաւիր

5. Մերոպ Մաշտոց, Եղիշէ, Դաւիթ Անյաղթ, Մովսէս Քերթոզ, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհալի

6. Մերոպ Մաշտոց եւ Եղիշէ

7. Վաղարշապատ

8. Գրիգոր Նարեկացի

9. Ներսէս Շնորհալի

10. փխոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատ

## Ո՛րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր ըստ Մատթեոսի Աւետարանին 2.1-6  
 Քրիստոսը, արեւելքէն, Երուսաղէմ, Հերովդէս, աւագ,  
 ուսուցիչները, Բեթլեհէմ, աստղը, երկրպագելու,  
 վրդովեցաւ,  
 Եւ ահա ----- մոգեր եկան ----- եւ  
 հարցուցին.

- Ո՛րն է Հրեաներու նորածին թագաւորը. մենք տեսանք  
 անոր ----- արեւելքի մէջ եւ եկանք ----- իրեն:  
 Երբ ----- թագաւոր լսեց ասիկա -----, եւ  
 իրեն հետ՝ Երուսաղէմի բոլոր բնակիչները: Կանչեց ժողովուրդի  
 ----- քահանաներն ու Օրէնքի ----- եւ հարցուց  
 անոնց, թէ ո՛ր պիտի ծնէր -----:  
 Անոնք պատասխանեցին.

- Հրէաստանի ----- քաղաքին մէջ, որովհետեւ  
 Միքիա մարգարէն այսպէս գրած է.

### Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր սուրբին տօնը տօնեցինք այս տարի Նոյեմբեր 1 ին:

- ա.- Ս. Յովհաննէս Ոսկեբերան Հայրապետ
- բ.- Ս. Գէորգ
- գ.- Ս. Սարգիս
- դ.- Ս. Յովհաննէս Կարապետ

2.- Այս տարի ե՞րբ տօնեցինք Ս.

- Գաբրիէլ եւ Ս. Միքայէլ Հրեշտակապետերուն տօնը:
- ա.- Նոյեմբեր 1
- բ.- Նոյեմբեր 3
- գ.- Նոյեմբեր 10
- դ.- Նոյեմբեր 20

3.- Ըսէ հետեւեալը մէկ բառով: Ոսկի Բերան Ունեցող

-----

4.- Պատարագի ընթացքին քահանաները կ'ըսէ «Եւ ընդ Սերովբէսն եւ ընդ Քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս...» որո՞նց մասին խօսած կ'ըլլայ:

- ա.- Սերոբ անունով մէկու մը մասին
- բ.- Քերոբ անունով մէկու մը մասին
- գ.- Հրեշտակներու մասին
- դ.- Նուագարաններու մասին

5.- Ըսէ հետեւեալը մէկ բառով: Աստուած մեզ հետ

-----

6.- Յիսուսի առաքեալներէն որո՞նց տօնը կը տօնենք այս տարի Նոյեմբեր 17 ին:

- ա.- Թադէոս եւ Բարթողոմէոս
- բ.- Յովհաննէս եւ Յակոբոս
- գ.- Անդրէաս եւ Փիլիպպոս
- դ.- Թովմաս եւ Մատթէոս

7.- Հայկական եկեղեցոյ Սուրբ խորանը, դէպի ո՞ր կը նայի:

- ա.- Հիւսիս
- բ.- Հարաւ
- գ.- Արեւելք
- դ.- Արեւմուտք

8.- Ըստ Ագաթանգեղոս պատմիչին, ո՞վ էր Հայկական առաջին եկեղեցիներուն ճարտարապետը:

Ս--րբ Գ--գ-- ----աւ----չ

9.- 8-10 էջերուն մէջ Յիսուսի պատմած առակին մէջ ո՞վ էր անմիտը:

- ա.- Հարուստը
- բ.- Հարուստին ծառան
- գ.- որբերը
- դ.- աղքատները

10.- Ըստ 8-10 էջերուն մէջ Յիսուսի պատմած առակին մենք որո՞նց պէտք է օգնենք:

-----  
-----

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**

**Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն**

1.- Այս տարի ի՞նչ տօն տօնեցինք

Նոյեմբեր 3 ին:

ա.- Ս. Յովհաննէս Ոսկեբերան

Հայրապետ

բ.- Ս. Գէորգ

գ.- Ս. Սարգիս

դ.- Ամենայն Սրբոց

2.- Այս տարի ե՞րբ տօնեցինք Ս.

Յովհաննէս Ոսկեբերան Հայրապետին տօնը:

ա.-Նոյեմբեր 1

բ.- Նոյեմբեր 3

գ.- Նոյեմբեր 10

դ.- Նոյեմբեր 20

3.- Ի՞նչ կը նշանակէ Էմմանուէլ

-----

4.- Ի՞նչ կը նշանակէ Հրեշտակ բառը

Դ----- կամ Պ-----

5.- Ո՞ր հրեշտակը աւետեց Մարիամ կոյսին Յիսուս Քրիստոսի Ծնունդը:

-----

6.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Յիսուսի առաքեալներէն Անդրէասի եւ Փիլիպպոսի տօնը:

ա.-Նոյեմբեր 17

բ.- Նոյեմբեր 3

գ.- Նոյեմբեր 10

դ.- Նոյեմբեր 20

7.- Ըսէ մէկ բառով՝ տարածաշրջան մը ուր կը բնակին նոյն եկեղեցւոյ պատկանող Հաւատացեալները:

-----

8.- Ըստ որո՞ւ Հայկական առաջին եկեղեցիներուն ճարտարապետն էր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը:

ա.- Մովսէս Խորենացի

բ.- Ագաթանգեղոս

գ.- Եղիշէ

դ.- Սահակ Պարթեւ

9.- Գառնիի հեթանոսական տաճարը ո՞ր դարէն մնացած է:

ա.- Ա

բ.- Բ.

գ.- Գ.

դ.- Դ.

10.- 8-10 էջերուն մէջ Յիսուսի պատմած առակը ո՞րտեղէն առնուած է:

ա.- Մատթէոս 12.16-21

բ.- Մարկոս 12.16-21

գ.- Ղուկաս 12.16-21

դ.- Յովհաննէս 12.16-21

Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Երկրորդականի անկիւն

1.- Այս տարի ե՞րբ կը սկսի Յիսնակի Պահիրը:

- ա.-Նոյեմբեր 18
- բ.- Նոյեմբեր 19
- գ.- Նոյեմբեր 20
- դ.- Նոյեմբեր 21

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Սուրբ Աստուածածնի ընծայման տօնը:

- ա.-Նոյեմբեր 18
- բ.- Նոյեմբեր 19
- գ.- Նոյեմբեր 20
- դ.- Նոյեմբեր 21

3.- Ո՞ր հրեշտակը Տիարմօր աստեղ:

-----

4.- Ի՞նչ կը նշանակէ Հրեշտակ բառը

- ա.- Դ-----
- բ.- Պ-----
- գ.- Ս-----
- դ.- Ա-----

5.- Հրեշտակները ունին տարբեր անուններ: Յիշէ՛ր երկուքը:

- ա.- Ս-----
- բ.- Ք-----

6.- Մատթէոսի 1.23 համարը «Ահա կոչսը պիտի յղանայ եւ որդի մը ծնի, եւ զայն պիտի կողեն Էմմանուէլ» Հին կտակարանի ո՞ր համարէն մէջքերում մըն է:

- ա.-Եսայի 7.14

- բ.- Միքա 7.14
- գ.- Սիրաք 7.14
- դ.- Ամբակում 7.14

7.- Անմիտ հարուստին առակը որ Աւետարանին մէջ գրուած է:

- ա.-Մատթէոս
- բ.- Մարկոս
- գ.- Ղուկաս
- դ.- Յովհաննէս

8.- Այս տարի երբ կը տօնենք Սբ. Թադէոսի եւ Սբ. Բարթողոմէոսի տօնը:

- ա.- Դեկտեմբեր 1
- բ.- Դեկտեմբեր 2
- գ.- Դեկտեմբեր 3
- դ.- Դեկտեմբեր 4

9.- Այս տարի երբ է Սբ. Յակոբը:

- ա.- Դեկտեմբեր 16
- բ.- Դեկտեմբեր 13
- գ.- Դեկտեմբեր 14
- դ.- Դեկտեմբեր 15

10.- 2008 ը մեր եկեղեցւոյ հիմնադրութեան քանի՞երրորդ սմեակն է:

- ա.- 25
- բ.- 50
- գ.- 75
- դ.- 100

**«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»Ի**  
**Ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ**  
**համացանցի վրայ հետեւեալ հասցէով**  
**[www.sourphagop.org/mashdots](http://www.sourphagop.org/mashdots)**

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**  
**Հոկտեմբեր ամսուան մասնակցողները**

Մանկապարտէզ

Հրակ Պանքեան, Լիլի Չինչինեան, Սելենա Կարապետեան, Ալիս Մելքեան, Սահակ Մելքեան, Յակոբ Քեպթանճեան, Անդրանիկ Նասոյեան

Անսխալ պատասխանողներ

Տանիէլ Տօնապետեան, Լորա Տօնապետեան

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Փաթիլ Կարապետեան, Քրիսթօֆըր Արմուշլու, Սեակ Դաւիթեան, Կլօրիա Կարապետեան, Խշիշեան Արշակ, Խշիշեան Ռիթա, Քարինա Քիւփելեան, Ճեսիքա Մաթոսեան:

Անսխալ պատասխանողներ

Սեակ Պապիկեան, Մհեր Պանքեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Արազ Գեպթանճեան, Կասիա Արմուշլու, Ալեք Կարապետեան, Մհեր Մաթոսեան, Սեւան Մելքեան, Նանոր Քիւփելեան, Լորի Չինչինեան, Կարինէ Կարապետեան, Սերժ Դաւիթեան, Նանար Եագուպեան:

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Դալար Գեպթանճեան, Ներսէս Նասոյեան

Երկրորդականի անկիւն

Ռոզալին Չինչինեան, Հրայր Մաթոսեան, Գրիգոր Մաթոսեան, Սեդրակ Մամիրոյեան

# Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցույ Սուրբ Յակոբ Կիրակնորեայ Դպրոցի ամսաթերթ

Դեկտեմբեր 2007  
ԺԵ տարի- թիւ 4

Այս թիւով...

Խմբագրական՝

Նոր տարուան խոհեր: Էջ 2

Սուրբ Յակոբ Մծբնացի, սուրբ առաքեալներ Թադէոս եւ Բարթողոմէոս, Սուրբ Ստեփանոս նախապկայ: Դեկտեմբեր ամսուան բացատրական բառարան: Էջ 3-4

Փամատուն, Իսրայէլ, Լերան քարոզը. եկեղեցական բառարան: Էջ 5

Նոր տարուան հայկական դիմագիծը: Էջ 6

Հայաստանեայց եկեղեցին, հարցումներով, պատասխաններով: Էջ 6

Պօղոս առաքեալի կողմէ Թեսաղոնիկեցիներուն գրուած առաջին նամակէն: Էջ 7


Աստուածաշունչը մանուկներու համար. Յիսուսի Ծնունդը «Ա. մաս»: Էջ 8-9-10

Եզակի գիրեր: Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը: Էջ 12-13-14-15

Նոյեմբեր ամսուան մասնակցողներ: Էջ 16

ԾՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



Իւրաքանչիւր մարդ իր ըրած բարիքին փոխարէնը Տիրոջմէ պիտի ստանայ:

Եփեսացիներուն 6.8

Խմբագրական

Նոր տարուան խոհեր

Ձեռք անդրադառնար թէ ժամանակը ինչպէս կ'անցնի, կը սուրայ, բայց տարեվերջի դեկտեմբերեան օրերը կու գան յանկարծ մեզի յիշեցնելու թէ տասներկու ամիսներ եւս սահած զացած են ու ահա, անգամ մը եւս, նոր տարուան մը սեմին ենք :

Մեզմէ ո՞վ զարմանքով չէ անդրադարձած ժամանակի արագ անցնելուն ու չէ ապշած թէ ինչպէ՞ս չզգաց ժամանակին անցնիլը: Ընդհանրապէս այս իրողութեան անդրադառնալը համեմատաբար նուազ ուրախութիւն պատճառող կացութիւն կը ստեղծէ, որովհետեւ ո՛չ որ կ'ուզէ որ ժամանակը արագ անցնի, օրերը սահին, ու յանկարծ իրենց աւարտին յանգին:

Երկու մտածումներ կրնան յառաջանալ ժամանակի սրնթաց անցքին շուրջ:

Առաջին՝ ժամանակի անցնիլը տխրութիւն պիտի պատճառէ մա՛նաւանդ, եթէ ոչ մի՛այն, անոնց մօտ որոնք այդ յարգի պահերը բարեբեր ձեւով չօգտագործեցին: Այն կեանքերը որոնք լեցուն են բեղուն գործունէութեամբ, բարիքով եւ բարութեամբ, խաղաղութեամբ եւ աշխարհի հետ հաշտ ըլլալու զգացումով, նուազ դառն պիտի զգան ժամանակի անցնիլը որովհետեւ այս վերջինը «կորսնցուցած» պիտի չըլլան: Անոնք որոնք իրենց կեանքերը կը տրամադրեն առաքինութեան, բառին լայն իմաստով բարի գործերու, պիտի չի սգան իրենց ժամանակի անցնիլը որովհետեւ պիտի հաստատ գիտնան թէ անցած ժամանակը օգտակար եւ բարի ձեւով գործածած են: Ընդհակառակը, անոնք որոնք կը տխրին ժամանակի անցման առջեւ, կը թուի թէ անոնք են որոնք իրենց շնորհուած կեանքն ու ժամանակը չկրցան լաւապէս վայելել, բարի գործով հարստացնել ու այդպիսով գոհանալ:

Երկրորդ մտածումը կը վերաբերի ժամանակի՝ Աստուծմէ մեզի տրամադրուած ժամանակի աւարտին կապուած հաստատումին, որուն ինչպէս ըսինք կ'անդրադառնանք ընդհանրապէս իրերայաջորդ տարեվերջերու առթիւ: Նոյնպէս, այս մտածումը կարծես աւելի սարսափելի կը թուի անոնց որոնք իրենց ժամանակը լաւապէս չեն օգտագործած, բարով ու խաղաղութեամբ չեն ապրած, ու կը վախնան որ եթէ ժամանակը վերջանայ այդ երկուքը՝ բարիք եւ խաղաղութիւն վայելելու առիթը փախցուցած ըլլան: Ծիշդ այդ պատճառաւ, մարդս իր օրերը անցընելու է իբրեւ վերջինը, անոնցմէ իւրաքանչիւրին մէջ ամփոփելով անհուն սէր, բարի մտածում, խաղաղութիւն, արդարութիւն եւ ի՞նչ ի՞նչ ուրիշ բարիքներ:

2007 տարուան աւարտը առիթ թող ըլլայ մեր բոլորին համար՝ վերատեսութեան ենթարկելու մեր օրերը օգտագործելու, մեզի տրամադրուած ժամանակը անցընելու կերպին վրայ: Աշխարհիկ ընթացիկ կեանքի բնական հաճոյքները իրենց կարելոր տեղը ունին մեր ժամանակէն ներս ու մենք պարտ ենք, իբրեւ հաւասարակշռուած մարդեր գոհացնել մենք մեզ այդ բնոյթի հաճոյքներով, սակայն պարտաւոր ենք նոյնպէս, իբրեւ հոգեւոր արարածներ, նոյն այդ ժամանակէն կարելոր մաս մը տրամադրել մեր հոգիներու սնունդին, մեր կեանքերու հոգեւոր մատակարարման:

Շնորհաւոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

«Մաշտոցի Արձագանգ» Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ: Խմբագիր՝ Շողիկ Թորիկեան-Պոյաճեան  
Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը  
Ոսուցիչներ՝ Վերժին Գիւլաթանճեան, Թամար Գիլգիրեան, Յասմիկ Նաճարեան, Գարոլ Մանուկեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան: Տնօրէն՝ Թորոս Պապիկեան

## Դեկտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Դեկտեմբեր 22

Ս. Աբգար Ա. Քրիստոնեայ թագաւոր

Դեկտեմբեր 24

Ս. Դաւիթ Մարգարէ եւ Յակոբոս Տեառնեղբայր  
Առաքեալ

Դեկտեմբեր 27

Ս. Պետրոս եւ Պօղոս

Դեկտեմբեր 29

Ս. Որդիք որոտման՝ Յակոբոս Առաքեալ եւ  
Յովհաննէս Աւետարանիչ

Դեկտեմբեր 15

Սուրբ Յակոբ Մծբնայ հայրապետ



Առաքելական եկեղեցւոյ ամենէն աւելի ժողովրդականութիւն ունեցող սուրբերէն մէկն է Սուրբ Յակոբ Մծբնացի Հայրապետը: Իր յիշատակի տօնը կանուխէն հաստատուած է Առաքելական եկեղեցւոյ տօնացոյցին մէջ ու կը տօնուի ամէն տարի Դեկտեմբեր ամսուան կէսերուն, շաբաթ օրով մը: Հիմէն ի վեր, կառուցուած մեծ թիով եկեղեցիներ կոչուած են Ս. Յակոբ: Գանատայի, Լիբանանի, Սուրիոյ, Իրանի եւ Միացեալ Նահանգներու հայաշատ քաղաքներ ունին համանուն եկեղեցիներ, ուր մատաղօրհնութեամբ եւ եկեղեցական փառաշուք հանդիսութիւններով կը նշուի Սուրբ Յակոբի տօնը: Նոյն օրը, աւանդութիւն է նաեւ ընտանիքներէն ներս շնորհաւորութեան եւ անուանակոչութեան ընդունելութիւններ ընել Յակոբ անունը կրող հարազատներու եւ սիրելի անձերու համար:

Սուրբ Յակոբի կեանքը

Սուրբ Յակոբ ծնունդով ասորի էր եւ ազգական Գրիգոր Լուսաւորիչին: Անոնք միասին դաստիարակուած էին Կեսարիոյ մէջ: Ս. Յակոբ իր քարոզներով, հրաշագործութիւններով եւ ճգնաւորի խիստ կեանքով նշանաւոր եղած է: Մասնակցած է Նիկիոյ մէջ կայացած համանուն եկեղեցական ժողովին 325 թուականին: Մծբինի աթոռին համար ձեռնադրուած է եպիսկոպոս, որ գուշակուած էր Մարուգէն ճգնաւորին կողմէ: Գրած է վարդապետական ճառեր, բարոյախօսական գրութիւններ եւ մատենագրութեան մէջ ծանօթ «Զգօն» գիրքը:

Ս. Գրիգոր նարեկացին հիացող մը եղած է Յակոբ Մծբնայ Հայրապետին, որուն նուիրած է իր ներբողական գրութիւններէն մէկը:

Սուրբ Յակոբին նուիրուած «Յաղթող եւ Սուրբ Հայրապետ» անունով գեղեցիկ շարական մը գրուած է: Այս շարականը հաւանաբար գրուած է այն դէպքին առթիւ ուր կը պատմուի թէ պարսիկ Շապուհ Բ. թագաւորը աշխարհաժաւալ իր արշաւանքներու ընթացքին կը հասնի Մծբին որ կը պաշարէ 70 օրեր շարունակ: Շնորհիւ Սուրբ Յակոբի քաղաքին ներսէն կազմակերպած միջոցառումներուն, ան անկարող կ'ըլլայ գրաւել Մծբինը: Այդ յաղթանակին առթիւ Ս. Ներսէս Շնորհալի կը ձօնէ իր այդ շարականը:

## Դեկտեմբեր 1

### Սուրբ Առաքեալներ Թադէոս եւ Բարթողիմէոս

Ամէն տարի, Նոյեմբեր ամսուան ընթացքին կը յիշատակուի Յիսուսի առաջին աշակերտներէն Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս Առաքեալներու տօնը: Այս առաքեալները Հայաստանի մէջ Քրիստոնէութեան քարոզչութիւնը սկսած են ընել Ա. դարէն սկսեալ, Յիսուսի Համբարձումէն ետք:


Իրապէս ալ, ըստ աւետարաններուն, Համբարձումէն ճիշդ առաջ, Քրիստոս իր աշակերտներուն պատուիրեց որ երթան եւ ճշմարիտ Աստուծոյ քարոզչութիւնը կատարեն ամբողջ աշխարհի մէջ:

Հայաստանը այս օրերուն կը նկատուէր կարելոր եւ բազմամարդ երկիր եւ Ս.Թադէոսի եւ Ս. Բարթողիմէոսի կը վիճակուի Հայաստանէն ներս քրիստոնէութիւնը տարածելու դժուար գործը, տրուած ըլլալով որ այդ տարիներուն Հայ ժողովուրդը բազմաստուածեան կրօն ունէր, այսինքն բազմաթիւ կուռքեր կը պաշտէր որոնցմէ իւրաքանչիւրը կը խորհրդանշէր մէկ տարբեր երեւոյթ ինչպէս գեղեցկութիւն, պտղաբերութիւն, պատերազմ, արեւ, եւայլն:

Շնորհիւ Ս. Թադէոսի եւ Ս. Բարթողիմէոսի է որ Հայաստանեայց Մայր Եկեղեցին առաքելական կը կոչուի, Յիսուսի իսկ Առաքեալներու նախաձեռնութեամբ հիմնուած ըլլալուն համար:

## Դեկտեմբեր 25

### Սուրբ Ստեփանոս նախավկայ



Սուրբ Ստեփանոս քրիստոնէական հաւատքի համար նահատակուած առաջին անձն է: Անոր քաջութիւնն ու հաւատքի զօրութիւնը ազդեցիկ եղած են ամենէն մոլեռանդ հակաքրիստոնէաներուն մօտ իսկ, ինչպէս Սօղոսին, որ Ստեփանոսի մահուան ականատես ըլլալէ ետք, Դամասկոսի ճամբուն վրայ, հաւատափոխ դարձաւ, վերակոչուեցաւ Պօղոս Առաքեալ ու դարձաւ Քրիստոսի մեծագոյն քարոզիչներէն մէկը:

Սուրբ Ստեփանոսի տօնը իբրեւ եկեղեցական աւագ տօն կը յիշատակուի Դեկտեմբեր 25 ին, կանխելով Նոր Տարին ու Սուրբ Ծնունդը:

Ստեփանոս նախավկայի տօնը տօնն է նաեւ Հայց. եկեղեցոյ բոլոր սարկաւագներուն որովհետեւ ան եղած է Առաքեալներուն կողմէ ընտրուած առաջին սարկաւագներէն մէկը:

### Եկեղեցական բառարան

# Ժ ժ

#### Փամատուն

Փանատուն բառը երկու իմաստով կը գործածուի.

Առաջինը իբրև եկեղեցույ գաւիթ, այսինքն եկեղեցույ ներքին բաժինէն դուռով ու պատով առանձնացած տարածք մը ուր կը կենան բոլոր անոնք որոնք պատարագի եւ Սուրբ Հաղորդութեան խորհուրդին արժանի չեն նկատուիր:

Փամատուն բառին երկրորդ իմաստն է այն շէնքերը որ եկեղեցիի մը բակին մէջ կը գտնուին եւ ուր քարոզիչները եւ քահանաները, ինչպէս նաեւ ուրիշ պաշտօնեաներ իրենց սենեակները ունին:



# Ի ի

#### Իսրայէլ


Իսրայէլ բառը եբրայերէն լեզուով կը նշանակէ «Աստուծոյ հետ կռուող»:

Այս անունը տրուեցաւ առաջին անգամ Յակոբ նահապետին որ կռուեցաւ Աստուծոյ հրեշտակին դէմ, պահանջելով անկէ որ ան օրհնէ զինք: Յակոբի նմանողութեամբ, Իսրայէլ անունին տակ ճանչցուեցան անոր յաջորդող սերունդները:

# Լ Լ

#### Լերան քարոզը

Այս անուան տակ ծանօթ եղաւ Յիսուս Քրիստոսի ընդարձակ քարոզներէն մէկը որուն կը հանդիպինք Մատթէոսի աւետարանին մէջ, հինգերորդ, վեցերորդ եւ եօթերորդ գլուխներուն մէջ: Քրիստոսի այս քարոզը «լերան» կոչուեցաւ որովհետեւ ան կատարուեցաւ լերան մը վրայ: Յիսուս հոն բարձրացած էր տեսնելով թէ զինք մտիկ ընել ուզողներուն ու իր հետետորդներուն թիւը մեծ էր: Լերան քարոզը կը սկսի ինը «երանիներ»ով, որոնց առաջինն է «Երանի հոգիով աղքատներուն, որովհետեւ անոնց է երկնքի արքայութիւնը:»



## Նոր տարուան հայկական դիմագիծը

Բոլորիս համար յստակ է թէ Նոր Տարին կը սկսի Դեկտեմբեր 31-էն Յունուար 1 լուսցող գիշերը: Սակայն հին ժամանակ, հայ ժողովուրդը ունէր Նաւասարդ կոչուող ամիսը որուն սկիզբն է որ ան կը նշէր նոր տարուան մը սկիզբը: Հետաքրքրական է թէ Նաւասարդ ամիսը չէր զուգադիպէր ձմրան եղանակին, այլ՝ աշնան, երբ տերեւները կը դեղնէին ու խաղողը կը հասուննար:

Նաւասարդ բառը ինքնին, պարթեւ իրանական լեզուով կը նշանակէ «նոր տարի»: Նաւասարդեան օրերուն հայ իշխաններն ու թագաւորները կը կազմակերպէին մարզախաղերու մրցոյթներ: Նոյն շրջանին Հայաստանի չորս կողմերէն ժողովուրդը կը հաւաքուէր Բագաւան քաղաքին մէջ ուր տեղի կ'ունենային Նաւասարդեան այդ խաղերը եւ այլ տօնակատարութիւններ: Իսկ ինչո՞ւ Բագաւանի մէջ: Որովհետեւ Բագաւանը հեթանոսական շրջանի հայ ժողովուրդին սուրբ քաղաքն էր: Այսպէս, ժողովուրդը մի քանի օրուան ընթացքին երգով, պարով, թատերախաղով, զոհաբերութիւններով եւ գուշակութիւններով կը նշէր նոր տարուան մը գալուստը:

Ներկայիս, Նոր տարուան հայ աւանդական սովորութիւն է ընտանեկան սեղանի շուրջ հաւաքուիլ եւ նոր տարին դիմաւորել «Հայր մեր»ը արտասանելով կամ երգելով, միրգերով հարուստ եւ ճոխ սեղանով մը, մաղթելով որ այդ ճոխութիւնն ու բարիքը երկարի ամբողջ նոր տարուան վրայ:

Ամանորը կրօնական տօն մը չէ: Սակայն ան անբաժան կը մնայ Սուրբ Ծննդեան տօնէն որ մեր մօտ կը յիշատակուի քիչ մը աւելի ուշ՝ Յունուար 6-ին: Այդ իսկ պատճառ աւ մաղթանքը կ'ըսէ.-

Շնորհաւոր Նոր Տարի  
եւ  
Սուրբ Ծնունդ



### Հայաստանեայց եկեղեցին հարցումներով, պատասխաններով

Ո՞վ է սարկաւագը եւ ո՞րն է անոր պաշտօնը եկեղեցիէն ներս:

Սարկաւագները եկեղեցիէն ներս սուրբ խորանի ծառայութեան համար նշանակուած անձեր են: Անոնց համար սահմանուած աշխատանքի ուղեգիծը կ'ընդգրկէ հետեւեալ տարրերը.-

- Սպասարկել եկեղեցուց Ս. խորանին
- Աւետարանը կարդալ Ս. Պատարագի ընթացքին
- Հասցնել օգնութիւն եւ նպաստ աղքատներուն
- Հոգալ որբերուն եւ որբեւայրիներուն պէտքերը

## Խօսքն Աստուծոյ

### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ

#### ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (4.1-11)

Այսպէս ուրեմն, եղբայրներ, մենք ձեզի սորվեցուցինք թէ ի՛նչպէս պէտք է ապրիլ Աստուծոյ հաճելի ըլլալու համար: Թէպէտ այդպէս կ'ապրիք արդէն, սակայն կը խնդրենք եւ Տէր Յիսուս Քրիստոսի անունով կը թելադրենք որ շարունակէք յառաջանալ ներկայ ձեր ընթացքին մէջ: Գիտէք թէ ի՛նչ պատուէրներ տուինք ձեզի Տէր Յիսուսի անունով, որովհետեւ Աստուծոյ կամքն է որ դուք սրբուիք եւ ամենեւին հեռու մնաք պոռնկութենէ: Ձեզմէ իւրաքանչիւրը թող սրբութեամբ ու պատուով ամուսնանայ: Կրթոս



ցանկութիւններու անձնատուր մի՛ ըլլաք հեթանոսներուն պէս, որոնք զԱստուած չեն ճանչնար. կամ չըլլայ որ մէկը եղբօր մը դէմ մեղանչէ անոր կինը յափշտակելով, որովհետեւ այդ բոլորին համար Տէրը իր դատաստանին մէջ անողոք պիտի ըլլայ, ինչպէս սկիզբէն ըսինք ձեզի եւ ազդարարեցինք: Միթէ Աստուած մեր պղծալից կեանքը շարունակելու՞ հրաւիրեց մեզ, թէ սրբութեամբ ապրելու: Անշուշտ թէ սրբութեամբ ապրելու: Հետեւաբար ով որ սրբութեան այս պատուէրը կ'արհամարհէ՝ մարդ մը անարգած չ'ըլլար, այլ նոյնինքն զԱստուած, որ իր Սուրբ Հոգին կու տայ մեզի:

Գալով եղբայրասիրութեան, մեր գրելուն պէտք չունիք, որովհետեւ ինքնին դուք Աստուծմէ սորված էք զիրար սիրել, ինչպէս արդէն գործնապէս ցոյց կու տաք այդ սէրը ամբողջ Մակեդոնիայի բոլոր եղբայրներուն նկատմամբ: Բայց դարձեալ, եղբայրներ, կը խնդրենք որ աւելի առատանաք ձեր սիրոյն մէջ, ջանաք հանդարտ կեանք մը վարել, միայն ձեր գործին նայիլ եւ ձեր աշխատանքի վաստակով ապրիլ, ինչպէս որ պատուիրեցինք ձեզի, որպէսզի ձեր պարկեշտ ընթացքով յարգուիք չհաւատացողներէն եւ ոեւէ մէկուն կարօտ չմնաք:

# Աստուածաշունչը մանուկներու համար Յիսուսի Ծնունդը «Ա. մաս»



Օր մը հրեշտակ մը  
այցելեց Մարիամ  
կոչսին եւ ըսաւ՝  
«Ուրախացիր,  
Աստուած հետդ է,  
դուն օրհնուած ես  
կիներուն մէջ»:

Մարիամ, երբ լսեց այս խօսքերը, քիչ մը  
մտահոգուեցաւ, ինքզինքին հարց տուաւ թէ  
ի՞նչ ըսել կ'ուզէր հրեշտակը: Ապա Գաբրիէլ  
հրեշտակը շարունակեց «Մի վախճար  
Մարիամ, դուն պիտի ունենաս զաւակ մը




որուն անունը պիտի  
դնես Յիսուս, եւ ան  
պիտի կոչուի Աստուծոյ  
որդի»:




Հրեշտակը ըսաւ նաեւ որ իր զարմիկը՝ Եղիսաբէթն ալ զաւակ մը պիտի ունենայ: Մարիամ, երբ այս լսեց, անմիջապէս գնաց Եղիսաբէթին քով .

Այս բոլորը պատահեցան երբ Մարիամ նշանուած էր Յովսէփին հետ: Մինչ Յովսէփ կը մտածէր Մարիամի իրեն ըսածներուն մասին, Տիրոջ Հրեշտակը երագի մը մէջ երեւցաւ իրեն եւ ըսաւ .



- Յովսէփ, մի վախճար ամուսնանալու Մարիամի հետ: Մարիամ որդի մը պիտի ծնի եւ զայն պիտի կոչես Յիսուս, որովհետեւ անհկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի




փրկէ:  
 Այդ օրերուն Հոռնի  
 Օգոստոս կայսրը  
 հրամայեց որ ամէն  
 մարդ իր ծննդավայրը  
 վերադառնայ  
 ընդհանուր  
 մարդահամար մը  
 կատարելու համար:

Յովսէփը եւ Մարիամը, Դաւիթ թագաւորի  
 ծննդավայր Բեթլեհէմ քաղաքէն էին: Թէեւ  
 զաւակը շուտով պիտի ծնէր սակայն իրենք  
 ստիպուած վերադարձան Բեթլեհէմ:

Բեթլեհէմ շատ մարդ կար եւ բոլոր  
 պանդոկներուն սենեակները լեցուն էին ուրեմն  
 ստիպուեցան ախոռի

մը մէջ  
 քնանալ:



**Եզակի գիրեր**  
Հայերէն գիրերով Sudoku

բ	գ	ը	թ	է	ա	զ	ե	դ
ե	ա	զ	բ	ը	դ	գ	թ	է
թ	դ	է	ե	գ	զ	բ	ա	ը
ա	է	դ	գ	բ	ե	թ	ը	զ
գ	զ	ե	ը	դ	թ	է	բ	ա
ը	բ	թ	զ	ա	է	դ	գ	ե
դ	ը	ա	է	թ	բ	ե	զ	գ
է	ե	բ	ա	զ	գ	ը	դ	թ
զ	թ	գ	դ	ե	ը	ա	է	բ

	է			բ			ե	
	ե	թ			ը	բ	զ	
դ	բ		ե				գ	թ
ը		ե		է	ա			
		դ				գ		
			դ	թ		զ		ե
է	զ				բ		թ	ա
	դ	ա	գ			ը	բ	
	ը			զ			է	

Նախորդ «Եզակի գիրեր» ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**

**Նույններ ամսուան պատասխանները**

Մանկապարտէզի անկիւն  
արեւելքէն, Երուսաղէմ, աստղը,  
երկրպագելու, Հերովդէս, Վրդովեցաւ,  
աւագ, ուսուցիչները, Քրիստոսը, Բեթլեհէմ

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան
2. գ. Նույններ 10
3. Ոսկեբերան
4. գ. Հրեշտակներու մասին
5. Էմմանուէլ
6. գ. Անդրէաս եւ Փիլիպպոս
7. գ. Արեւելք
8. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ
9. ա. Հարուստը
10. որբերուն եւ աղքատներուն

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն


1. դ. Ամենայն Սրբոց
2. ա. Նույններ 1
3. Աստուած մեզի հետ
4. Դեսպան կամ պատգամաւոր

5. Գաբրիէլ
6. ա. Նույններ 17
7. Թեմ
8. բ. Ագաթանգեղոս
9. ա. Ա.
10. գ. Ղուկաս 12.16-21

Երկրորդականի անկիւն

1. բ. Նույններ 19
2. դ. Նույններ 21
3. Գաբրիէլ
4. Դեսպան, Պատգամաւոր, Սուրհանդակ, Առաքեալ
5. ա. Սերովբէ բ. Քերովբէ
6. ա. Եսայի 7.14
7. գ. Ղուկաս
8. ա. Դեկտեմբեր 1
9. դ. Դեկտեմբեր 15
10. բ. 50

### Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ր ըստ Ղուկասի Աւետարանին 2.1, 3-5  
Օգոստոս, մարդահամարը, ծննդավայր, Դաւիթի,  
Նազարէթ, Բեթլեհէմ,

Այդ Օրերուն ----- կայսր հրամանագիր հանեց: իր  
կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն  
----- կատարելու: Ամէն մարդ իր ----- քաղաքը  
կ'երթար իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփ,  
----- ցեղէն եւ ազգատոհմէն ըլլալուն համար,  
Քաղիլեայի ----- քաղաքէն ելաւ, եւ իր անունը  
արձանագրել տալու համար գնաց Հրէաստանի -----  
քաղաքը, Դաւիթ թագաւորին ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար  
իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր:

## Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ծաբթուան ո՞ր օրը Սուրբ Յակոբ կրնայ ըլլալ:  
 Ա.- Չորեքշաբթի  
 Բ.- Ուրբաթ  
 Գ.- Ծաբաթ  
 Դ.- Կիրակի

2.- Յիսուսի ո՞ր երկու առաքեալները Հայաստան գացին:  
 Ա.- Պետրոս եւ Անդրէաս  
 Բ.- Թադէոս եւ Բաթողիմէոս  
 Գ.- Յակոբոս եւ Յովհաննէս  
 Դ.- Մատթէոս եւ Թովմաս

3.- Որո՞նք Յիսուս Մանուկին աստղը տեսան արեւելքի մէջ:  
 Ա.- Հրեշտակները  
 Բ.- Հովիւները  
 Գ.- Մոգերը  
 Դ.- Գիւղացիները

4.- Յիսուս ո՞ր քաղաքին մէջ ծնաւ:  
 Ա.- Գանատա  
 Բ.- Երուսաղէմ  
 Գ.- Բեթլեհեմ  
 Դ.- Նազարէթ

5.- Հերովդէս ի՞նչ պատուիրեց մոգերուն:  
 Ա.- Յիսուսի սպաննեցէք  
 Բ.- Յիսուսին քովս բերէք  
 Գ.- Ոչինչ  
 Դ.- Գտէք Յիսուս մանուկը որպէսզի ես ալ գամ ու երկրպագեմ իրեն

6.- Մոգերը ի՞նչ նուէրներ բերին Յիսուսի  
 Ա.- Ոսկի, արծաթ եւ պրոնզ  
 Բ.- Ոսկի, կնդրուկ եւ զմուռս  
 Գ.- Գառնուկ, ուլիկ եւ շնիկ  
 Դ.- Խաղալիքներ

7.- Յիսուս ո՞ր ծնաւ:  
 Ա.- Պալատին մէջի  
 Բ.- Պանդոկին մէջ  
 Գ.- Հիւանդանոցին մէջ  
 Դ.- Մսուրին մէջ

8.- Մենք ե՞րբ կը տօնենք Յիսուսի Ծնունդը:  
 Ա.- Յունուար 6  
 Բ.- Դեկտեմբեր 25  
 Գ.- Յունուար 1  
 Դ.- Դեկտեմբեր 31

9.- Մենք ե՞րբ կը տօնենք Յիսուսի մկրտութիւնը:  
 Ա.- Յունուար 6  
 Բ.- Դեկտեմբեր 25  
 Գ.- Յունուար 1  
 Դ.- Դեկտեմբեր 31

10.- Յիսուս քանի՞ տարեկան էր երբ մկրտուեցաւ:  
 Ա.- 8 օրուայ  
 Բ.- 40 օրուայ  
 Գ.- 1 տարեկան  
 Դ.- 30 տարեկան

### Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Սուրբ Յակոբը:

- Ա.- Ծաբաթ Դեկտեմբեր 8
- Բ.- Կիրակի Դեկտեմբեր 9
- Գ.- Ծաբաթ Դեկտեմբեր 15
- Դ.- Կիրակի Դեկտեմբեր 16

2.- Սուրբ Յակոբ ո՞ր քաղաքին հայրապետն էր:

- Ա.- Մծբին
- Բ.- Տարօն
- Գ.- Վաղարշապատ
- Դ.- Կարս

3.- Ո՞վ էր Հոռոմի կայսրը երբ Յիսուս ծնաւ:

- Ա.- Օգոստոս
- Բ.- Յուլիոս
- Գ.- Ներոն
- Դ.- Յունիս

4.- Ո՞վ շարական մը գրած է Սուրբ Յակոբին նուիրուած:

- Ա.- Ս. Գրիգոր Նարեկացի
- Բ.- Ս. Ներսէս Ընորհալի
- Գ.- Ս. Գրիգոր Տաթեւացի
- Դ.- այս տեսակի շարական չկայ

5.- Հայաստանեայց եկեղեցին ի՞նչ կը տօնէ Դեկտեմբեր 25 ին:

- Ա.- Ս. Ծնունդ
- Բ.- Կաղանդ
- Գ.- Ոչինչ
- Դ.- Ս. Ստեփանոս Գախավկայ

6.- Ո՞ր Աւետարանին մէջ կը կարդանք Յիսուսի քարոզած ինը Երանիներուն մասին:

- Ա.- Մատթէոս
- Բ.- Մարկոս
- Գ.- Ղուկաս
- Դ.- Յովհաննէս

7.- Ո՞ր Հրեայ թագաւորին ծննդավայրն էր այն քաղաքը ուր Յիսուս ծնաւ:

- Ա.- Սաւուղ
- Բ.- Դաւիթ
- Գ.- Սողոմոն
- Դ.- Ռոբոլամ

8.- Ո՞ր հրեշտակը աւետեց Ս. Մարիամ կոյսին:

-----

9.- Յովսէփ եւ Մարիամ ո՞ր քաղաքէն դէպի Բեթլեհէմ ճամբորդեցին:

-----

10.- Ի՞նչ կոչուեցաւ Եղիսաբեթի զաւակը որ Յիսուսէն 6 ամիս մեծ էր:

----- Մ-----

Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Երկրորդականի անկիւն

1.- Անգլերէնով ի՞նչ կը կոչենք Սուրբ

Յակոբը:

Ա.- Sourp Hagop of Mdzpin

Բ.- Saint James of Nisibis

Գ.- Sourp Hagop of Nisibis

Դ.- Saint James of Mdzpin

2.- Ո՞ր կը գտնուի Սուրբ Թադէի վանքը ուր թաղուած է Թադէոս Առաքեալ:

Ա.- Հայաստան

Բ.- Իրան

Գ.- Ագրայէջնան

Դ.- Ղարաբաղ

3.- Դեկտեմբերի մէջ յիշատակուղ ո՞ր Սուրբը ականատես եղաւ Ս. Ստեփանոսի նահատակութեան:

Ա.- Ս. Աբգար թագաւոր

Բ.- Ս. Պետրոս

Գ.- Ս. Պօղոս

Դ.- Ս. Յակոբոս Առաքեալ

4.- Ո՞ր տիեզերական ժողովին գրուեցաւ «Հաւատամք»ը:

Ա.- 325 Նիկիոյ

Բ.- 381 Կոստանդնուպոլսոյ

Գ.- 431 Եփեսոսի

Դ.- 451 Քաղկեդոնի

5.- Հետեւեալներէն ո՞վ ներկայ էր Նիկիոյ 325 թուականի տիեզերական ժողովին:

Ա.- Ս. Աբգար թագաւոր

Բ.- Ս. Պետրոս

Գ.- Ս. Պօղոս

Դ.- Ս. Յակոբ Մծբնայ հայրապետ

6.- Ո՞ր կը կարդանք Ս.

Ստեփանոսի նահատակութեան մասին:

Ա.- Մատթէոս

Բ.- Մարկոս

Գ.- Ղուկաս

Դ.- Առաքեալներուն Գործերը

7.- Ըսէ՛ մէկ բառով «Աստուծոյ հետ մարտնչող»

-----

8.- Նաւասարդը ե՞րբ կը տօնուէր:

Ա.- Յունուար 1 ին

Բ.- Մարտ 1 ին

Գ.- Օգոստոս 1 ին

Դ.- Օգոստոս 11 ին

9.- Առաքեալները առաջին անգամ քանի՞ սարկաւագ ընտրեցին:

Ա.- 1

Բ.- 3

Գ.- 7

Դ.- 11

10.- Ըստ Եփեսացիներուն 6.8 ին իւրաքանչիւր մարդ իր ըրած բարիքին փոխարէնը որմէ՞ պիտի ստանայ:

-----

**«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»Ի**  
 ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ  
 համացանցի վրայ հետեւեալ հասցէով  
**[www.sourphagop.org/mashdots](http://www.sourphagop.org/mashdots)**

**Ո՞րն է ճիշդ պատասխանը  
 Նոյեմբեր ամսուան մասնակցողները**

Մանկապարտէզ

Հրակ Պանքեան, Լիլի Չինչինեան, Սելենա Կարապետեան, Ալիս  
 Մելքեան, Սահակ Մելքեան, Յակոբ Քեպթանճեան, Անդրանիկ  
 Նասոյեան

Անսխալ պատասխանողներ  
 Տանիէլ Տօնապետեան, Լորա Տօնապետեան

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Փաթիլ Կարապետեան, Քրիսթօֆըր Արմութլու, Սեակ Դաւիթեան, Կլօրիա  
 Կարապետեան, Խշիշեան Արշակ, Խշիշեան Ռիթա, Քարինա  
 Քիւփելեան, Ճեսիքա Մաթոսեան:

Անսխալ պատասխանողներ  
 Սեակ Պապիկեան, Մհեր Պանքեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Արազ Գեպթանճեան, Կասիա Արմութլու, Ալեք Կարապետեան, Մհեր  
 Մաթոսեան, Սեան Մելքեան, Լորի Չինչինեան, Կարինէ  
 Կարապետեան, Սերժ Դաւիթեան, Նանար Եագուպեան:

Անսխալ պատասխանողներ  
 Առէն Պապիկեան, Դալար Գեպթանճեան, Ներսէս Նասոյեան

Երկրորդականի անկիւն

Ռոզալին Չինչինեան, Հրայր Մաթոսեան, Գրիգոր Մաթոսեան, Սեդրակ  
 Մամիրոյեան

# Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցույ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Յունուար 2008  
ԺԵ տարի- թիւ 5

## Այս թիւով...

Խմբագրական՝ Անվերջ ձգտում դէպի  
նաասարակշռութիւն: Էջ 2

Ինչո՞ւ Յունուար 6-ին: Էջ 3

Ինչո՞ւ այս տարի Սուրբ Սարգիսի  
յիշատակման տօնը Երկուշաբթի օր մը  
կը զուգադիպի եւ ոչ Ծաբաթ: Էջ 4-5

Հայաստանեայց Եկեղեցին,  
հարցումներով, պատասխաններով:  
Էջ 5

Եկեղեցական բառարան: Էջ 6

Խօսքն Աստուծոյ: Էջ 7

Աստուածաշունչը մանուկներու  
համար. «Յիսուսի Ծնունդը Բ. մաս»: Էջ 8-9-10

Եզակի գիրեր: Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը: Էջ 12-13-  
14-15

Կարճ լուրեր կիրակնօրեայէն: Էջ 16

ԾՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



Ապա բացին իրենց  
արկղերը եւ Յիսուսի  
ընծայեցին իրենց  
նուէրները, ոսկի, կնդրուկ  
եւ զմուռ:

Մատթէոս 2.11

Խմբագրական

Անվերջ ձգտում դէպի հաւասարակշռութիւն

Նոր տարուան եւ Սուրբ Ծնունդի գոյգ տօները տարեսկիզբի յատուկ երկու առիթներ են ուր մարդիկ մղուած սիրոյ եւ բարի կամեցողութեան զգացումներէ իրարու կը մաղթեն առողջութիւն, յաջողութիւն եւ փափաքներու իրականացում: Այս բարեմաղթութիւններու լաւ սովորութիւնը կ'արտայայտէ մարդուն բնածին սէրը իր նմանին հանդէպ ինչպէս նաեւ մարդուն նոյնքան բնածին ձգտումը դէպի յարատեւ երջանկութիւն:

Բարի մաղթանքներ փոխանակելու այս սովորութիւնը ինքնին ցանկալի երեւոյթ մըն է, սակայն չի փոխեր այն իրականութիւնը թէ բոլոր մաղթանքներով հանդերձ կեանքը կը մնայ նոյնքան չարիքի որքան բարիքի բեմ, նոյնքան ձախողութեանց որքան յաջողութեանց առիթ, նոյնքան յուսախաբութիւններու որքան յոյսի դաշտ: Եղելութիւնը փոխել փորձելը կամ մերժելը անտեղի է ու խոհեմութիւն է ընդունելով բարիին ու չարին միատեղ գոյութիւնը աշխատիլ մեր անդրադարձի կերպին վրայ ու մեր վերաբերմունքին վրայ երբ գտնուինք անցանկալի կացութեան առջեւ:

Քրիստոնէական հասկացողութեան մէջ եթէ կեանքը կը նմանցուի ծովու, մենք գիտենք թէ ծովը մերթ խաղաղ կ'ըլլայ, մերթ՝ ալեկոծ: Ալիքները եթէ մարդ արարածներն են, կամ անոնց հոգիները, անոնք երբեմն հեզասահ են ու հանդարտ, երբեմն՝ խառնակ ու կատաղի: Կեանքն ալ այդպէս, երբեմն մեղմ կը հոսի մեզ բերելով հոգեկան հանդարտութիւն երբեմն ալ կը փոթորկի ու կը պատճառէ հոգեւոր անկայունութիւն ու անձկութիւն: Կարելորդ հասնիլն է հոգեւոր այն հասունութեան ուր լաւն ու բարին նոյնպէս կ'ընդունինք ու իւրաքանչիւրի պարագային կը հակազդենք իբրեւ գիտակից ու հաւատացեալ հոգեւոր էակներ:

Մեզմէ իւրաքանչիւրը կը գտնէ իր ձեւը հակազդելու չարիքին ու նեղութեան ու այդ ձեւերէն մէկն է տառապանքին դէմ պայքարելու փոխարէն զայն ընդունիլ իբրեւ կեանքի խաչմերուկ ուր կայ ընտրութիւն երկու ուղղութեանց միջեւ. ըմբոստանալ Աստուծոյ եւ մարդոց դէմ, վրէժխնդիր դառնալ, կռուիլ, հարուածել, կամ ընդհակառակը, գիտակցիլ դժուարութեան ու զայն վեր առնել իբրեւ սորվելու, բարելաուելու, մեր կամքին եւ հաւատքին մէջ զօրանալու յատուկ առիթ: Մարդկային առումով դիւրին չէ հիւանդութեան, ձախողութեան ու կորուստի առջեւ չըմբոստանալ ու չտառապիլ: Բայց չէ՞ որ քրիստոնէային ձգտումն է նմանիլ Աստուծոյ ու ապրիլ անոր նմանողութեամբ: Ուստի փորձելու ենք տառապանքի մէջ գերազանցել մեր մարդկային սահմանափակութիւնները ու ձգտիլ դէպի Աստուածային օրինակին իբրեւ միակ միջոց յառաջդիմութեան եւ չարի կապանքներէ ազատագրման:

«Մաշտոցի Արձագանգ»  
Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ:  
Խմբագիր՝ Ծաղիկ Թորիկեան-Պոյաճեան

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը  
Ուսուցիչներ՝ Վէրժին Գիւլթանճեան, Թամար Գիզիրեան, Յասմիկ Նաճարեան, Գարոլ Մանուկեան, Ծողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գամաճեան:  
Տնօրէն՝ Թորոս Պապիկեան

## Ինչո՞ւ Յունուար 6-ին

Ամէն տարի երբ կը մօտենան Դեկտեմբեր եւ Յունուար ամիսները, եւ կը սկսին Ծննդեան տօնի պատրաստութիւնները, կը կրկնուի այն հարցումը թէ ինչո՞ւ հայերը Յիսուսի ծնունդը կը յիշատակեն Յունուար 6-ին եւ ոչ Դեկտեմբեր 25-ին:

Ինչպէս բոլորս ալ գիտենք նախքան Քրիստոնէութեան համատարած եւ ընդունուած կրօն դառնալը ժողովուրդներ հեթանոս էին: Իբր հեթանոս անոնք ունէին իրենց զանազան աստուածներու ձօնուած տօնախմբութիւններն ու տօնակատարութիւնները: Սակայն երբ առաջին դարերը անցան եւ քրիստոնէութիւնը պետութիւններու կողմէ սկսաւ ճանաչում գտնել, հոգեւոր պետեր սկսան խորհրդակցիլ իրենց ժողովուրդներու կրօնի վերաբերող ընթացիկ հարցերը լուծելու մասին: Այս ընթացիկ հարցերէն մէկն էր հին այն սովորութիւնները որոնք արմատացած էին մարդոց մտքերուն մէջ եւ բազմութիւններուն մօտ, որոնք քրիստոնէութիւնը ընդունած ըլլալով հանդերձ կը շարունակէին իրենց հեթանոսական սովորութիւններն ու պաշտամունքները: Այս տօնախմբութիւններէն էր Արեւ աստուծոյ նուիրուած պաշտամունքի օրը որ տեղի կ'ունենար Դեկտեմբեր 25-ին: Կացութեան լուծում մը գտնելու համար, Արեւմտեան Եւրոպայի Քրիստոնէայ եկեղեցիներու հայրապետներ յարմար գտան հեթանոսական ընդհանրացած թուականներ նոյնացնել քրիստոնէական տօնախմբութիւններու հետ, ժողովուրդին մօտ շփոթ չստեղծելու նպատակով:


Այսպէս է որ 451 թուականին գումարուեցաւ Քաղկեդոնի մէջ տիեզերական ժողով մը, որուն ընթացքին ընդունուեցաւ Արեւի պաշտամունքի այդ նշանաւոր օրը նոյնացնել Յիսուսի ծննդեան տօնին հետ: Այնուհետեւ Ծնունդը յիշատակուիլ սկսաւ Դեկտեմբեր 25-ին:

Իսկ հայերը ինչո՞ւ չհետեւեցան այդ որոշումին: 451 թուականին հայերը Վարդանանց պատերազմը մղելու վրայ էին ու չկրցան մասնակցիլ Քաղկեդոնի ժողովին եւ մերժեցին Քաղկեդոնի ժողովին որոշումները: Եւ որովհետեւ Յունուար 6-ը ընդունուած էր իբր Յիսուսի ծննդեան օր, հայերը շարունակեցին ամէն տարի Սուրբ Ծնունդը տօնել Յունուար 6-ին:

### Աստուածայայտնութիւն

Աստուածայայտնութիւն Սուրբ Ծնունդը ըսելու այլ ձեւ մըն է:

Աստուածայայտնութիւնը Յիսուսի ծնունդն է որ մարդկութեան համար կը նկատուի իմացական նոր լոյսի, խաղաղութեան եւ սիրոյ տօն: Յիսուսի ծնունդով Աստուած յայտնուեցաւ մարդկութեան որպէսզի անոնք ճանչնան ճշմարիտը, իրենց մտքերը լուսաւորեն եւ իրենց կեանքը ապրին ազնուագոյն սկզբունքներով:



## Յունուար ամսուան բացատրական տօնացոյց

### Ինչո՞ւ այս տարի Սուրբ Սարգիսի յիշատակման տօնը Երկուշաբթի օր մը կը զուգադիպի եւ ոչ Շաբաթ

Ինչպէս բոլորս գիտենք, Վարդանանցը կը տօնենք Հինգշաբթի օր մը, եւ Սուրբ Սարգիսը անկէ 12 օր առաջ զուգադիպող Շաբաթ օրը, որուն նախորդող 5 օրերը «Երկուշաբթիէն Ուրբաթ» Առաջաւորաց պահքի օրերն են որ հաւատացեալ ժողովուրդը կը կոչէ Ս. Սարգիսի պահք: Սակայն երբ 2008 ի օրացոյցին նայինք պիտի տեսնենք թէ Վարդանանցը այս տարի Յունուար 31 ին է, «երբ ընդհանրապէս Փետրուարին պէտք է ըլլայ», եւ Սուրբ Սարգիսը Երկուշաբթի Յունուար 21ին է փոխանակ Շաբաթ 19 Յունուարին որ այս տարի Յովհաննու Կարապետի ծննդեան տօնն է: Յաջորդող պարբերութիւններուն մէջ պիտի փորձենք բացատրել թէ ինչո՞ւ:

Ինչպէս գիտէք, Ս. Յարութեան տօնը կամ Զատիկը շարժական տօն մըն է որովհետեւ ամէն տարի անոր թուականը կը փոխուի: Մարտ 21-էն վերջ, երբ լուսինը իր լրումին կը հասնի, անմիջապէս այդ լրումին յաջորդող Կիրակին կը նկատուի Ս. Յարութեան Կիրակի «Ասոր մասին կարդալ Մաշտոցի Արձագանգի Ապրիլ 2003 ի թիւին մէջ հետեւեալ հասցեով [www.sourphagop.org/mashdots](http://www.sourphagop.org/mashdots)»: Այս տարի, 2008 ին Զատիկը Մարտ 23 ին է: Եւ Ս. Զատիկին օրը ճշդելէ ետք, շատ դիւրութեամբ կարելի է ճշդել շատ մը ուրիշ տօներ, հետեւեալ ձեով:

Ս. Զատիկ	Մարտ 23
Ծաղկազարդ «Նախորդող Կիրակին»	Մարտ 16
Գալստեան Կիրակի «Նախորդող Կիրակին»	Մարտ 9
Դատաւորի Կիրակի «Նախորդող Կիրակին»	Մարտ 2
Միջինք «Նախորդող Չորեքշաբթին»	Փետրուար 27
Տնտեսի Կիրակի «Նախորդող Կիրակին»	Փետրուար 24
Անտառակի Կիրակի «Նախորդող Կիրակին»	Փետրուար 17
Արտաքսման Կիրակի «Նախորդող Կիրակին»	Փետրուար 10
Բուն Բարեկենդան «Նախորդող Կիրակին»	Փետրուար 3
Վարդանանց «Նախորդող Հինգշաբթին»	Յունուար 31
Ս. Սահակ Պարթեւ «Նախորդող Շաբաթ»	Յունուար 26
Ս. Սարգիս «Նախորդող Շաբաթ»	Յունուար 19
Առաջաւորաց Պահք «Նախորդող Երկուշաբթիէն Ուրբաթ»	Յունուար 14-18

Սակայն, Յունուար ամսուան մէջ մենք ունինք ուրիշ տօներ ալ, հետեւեալ ձեով:

Ս. Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն «անշարժ»	Յունուար 6 «այս տարի Կիրակի»
Յիսուս Քրիստոսի անուանակոչութիւն «անշարժ»	Յունուար 13 «այս տարի Կիրակի»

Ծնունդ Սուրբ Յովհաննու Կարապետի «շարժական»: Գտնելու համար այս օրը, կ'երթանք «Քրիստոնյա Հայաստան Հանրագիտարան» ին մէջ, Երեւան 2002, էջ 629 կը կարդանք հետեւեալը.

«Հայ Եկեղեցին ս. Հ.Մ. ի հիշատակը տոնում է տարին չորս անգամ. Անվանակոչությանը հաջորդող Հինգշաբթի օրը նշվում է ծնունդը,» ուր Հ.Մ.ն Հովհաննէս Մկրտիչի կրճատումն է:

Սակայն վերեւ յիշուածը շիտակ է միայն այն պարագային ուր Հինգշաբթի օրը պահքի օր չէ «եւ ընդհանրապէս Պահքի օր չէ»: Այս տարի Յունուար 13 ին յաջորդող Հինգշաբթին Պահքի օր ըլլալով, Յովհաննու Կարապետի օրը նշելու շիտակ ձեւը ըսելն է Յունուար 13 ի յաջորդող ոչ-Պահքի եւ ոչ-Տէրունի օրը, որ այս պարագային Ծաբաթ, Յունուար 19 ն է:

Նկատելով, որ անուանակոչութեան յաջորդող տօնը պէտք է Յովհաննու Կարապետի տօնը ըլլայ, հետեւաբար, Սուրբ Սարգիսի տօնը կը «գիջի» Յունուար 19ը Յովհաննու Կարապետին, եւ կը տեղափոխուի յաջորդող ոչ-Պահքի եւ ոչ-Տէրունի օրը՝ Երկուշաբթի Յունուար 21-ին:

Այս առիթով կը շնորհաւորենք բոլոր Սարգիսները, Յովհաննէսները, Կարապետները, Սարգիսեանները, Յովհաննէսեանները եւ Կարապետեանները:

**Այս տարի Վարդանանցը Յունուարին է:**

Ինչպէս վերեւ յիշուած է, որովհետեւ Սուրբ Զատիկը այս տարի շատ կանուխ է, Մարտ 23-ին, Ուրեմն Վարդանանցն ալ շատ կանուխ է եւ այս տարի Յունուար 31 ին է:

Ս. Ղեւոնդեանց Քահանայիցն ալ Վարդանանցէն երկու օր առաջ ըլլալով, այս տարի Երեքշաբթի Յունուար 29-ին է:

## Հայաստանեայց Եկեղեցին հարցումներով, պատասխաններով

Ի՞նչ կը նշանակէ Խթում

Խթումը Սուրբ Ծնունդը նախորդող օրն է որուն ընթացքին տեղի կ'ունենայ գիշերային պատարագ տպաւորիչ մթնոլորտին մէջ: Պատարագէն ետք, արդէն իսկ Ծնունդ կը նկատուի եւ հաւատացեալներ զիրար կը փոխանցեն Յիսուսի ծննդեան ուրախ լուրը ըսելով Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, Զեզի մեզի մեծ աւետիս:

Բարեխառն կլիմայ ունեցող երկիրներու մէջ հաւատացեալներու համար սովորութիւն է խթման գիշեր դուռէ դուռ ծննդեան շարականներ երգելով Քրիստոսի ծնունդը աւետել:

Ի՞նչ է Ծրագալոյցը

Ծրագալոյց տարբեր բառ մըն է խթումի համազօր: Ծրագալոյց բառը կու գայ այն սովորութենէն ըստ որուն հաւատացեալները իրենց ձեռքին մէջ կը բռնեն վառած մոմեր խթման արարողութեան ընթացքին: Նաեւ ականդութիւն է որ տուներէն ներս ալ ճրագ մը վարած մնայ:

Ե՞րբ կը կատարուի Զրօրհնէք

Զրօրհնէքը արարողութիւն մըն է որ կը կատարուի Սուրբ Ծնունդի պատարագէն անմիջապէս ետք եւ կը յիշատակէ Յիսուսի մկրտութիւնը:

## Եկեղեցական բառարան

# Խ Խ

### Խաչակնքում

Աստուածապաշտական ծիսակատարութեան մէջ ընդունուած ձեւ է աղօթքի ժամանակ խաչակնքելով փառք տալ Աստուծոյ ըսելով «Յանուն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ:»

Խաչակնքելը ինքզինք խաչի նշանով կնքել կը նշանակէ: Հաւատացեալը որ կը խաչակնքէ հետեւեալին կը հաւատայ.-

- Կը յայտարարէ իր հաւատքը սուրբ երրորդութեան հանդէպ՝ Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգիին:
- Կը յայտարարէ իր քրիստոնէական հաւատքը:
- Կը պարծենայ իր քրիստոնէական հաւատքով:
- Ինքզինք կը պաշտպանէ չարէն:
- Գոհաբանութիւն կ'արտայայտէ առ Աստուած:
- Աստուծոյ օրհնութիւն եւ օգնութիւն կը խնդրէ:

# Ծ Ծ

### Ծածկոց

Ծածկոցը որեւէ կտաւ կամ կերպաս մըն է որ կը ծածկէ առարկայ մը: Եկեղեցիէն ներս սակայն, «ծածկոց» կը կոչուի այն ընտիր կտորին որ պատարագին ընթացքին, սկիհին ու մաղզմային վրայ կը փռուի:

Ծածկոցները եկեղեցական սպասներուն ամենէն ընտիր եւ արուեստակերտներէն են: Սովորաբար անոնք մետաքսեայ կտորէ կը պատրաստուին, ասեղնագործուած ոսկի թելով:

# Կ Կ

### Կաթողիկէ

«Կաթողիկ» յունարէն լեզուով կը նշանակէ «ընդհանրական»:

Այս իմաստին հետեւելով, «կաթողիկէ» սկսան կոչուիլ ամէն մեծ ու գլխաւոր մայր եկեղեցիները: Յատուկ կերպով, կաթողիկէ մակդիրը տրուեցաւ Էջմիածնի Մայր Տաճարին: Մայր եկեղեցիներուն գմբէթ ունենալուն պատճառաւ, գմբէթներն ալ սկսաւ «Կաթողիկէ» կոչուիլ, յատկապէս հայ ճարտարապետութեան սեպհական գմբէթը որ ցցուած ու վեղարանման ձեւ ունի:

# Խօսքն Աստուծոյ



MS 233/1  
Bible: Gospels in Armenian, Eastern Turkey, 1438-1439

## Քրիստոսի իսկական ծառան

### Ա. Տիմոթէոսին 4.1-12

Վերջին ժամանակներուն յայտնուելիք մոլորութիւնները

Բայց Սուրբ Հոգին յայտնապէս կ'ըսէ, թէ վերջին ժամանակներուն շատեր պիտի լքեն հաւատքը, ականջ տալով մոլորեցուցիչ չար ոգիներու եւ դէտրու ուսուցումներուն, որոնք կը քարոզուին կեղծաւոր եւ ստաբան մարդոց կողմէ, որոնց խիղճը սատանային կնիքով խարանուած է: Մարդիկ՝ որոնք ամուսնութիւնը կ'արգիլեն եւ կը հրահանգեն հեռու մնալ կարգ մը ուսելիքներէ. մինչդէռ Աստուած այդ ուսելիքները ստեղծեց՝ որպէսզի հաւատացեալ եւ ճշմարտութեան ճանաչումին հասած մարդիկ շնորհակալութեամբ վայելեն զանոնք: Արդարեւ, Աստուծոյ բոլոր ստեղծածները բարի են եւ անոնց մէջ խոտելի բան չկայ, մանաւանդ զանոնք շնորհակալութեամբ ընդունողին համար. որովհետեւ ամէն ինչ Աստուծոյ խօսքով եւ աղօթքով կը սրբուի:

Դուն, սակայն, Քրիստոս Յիսուսի իսկական ծառան կ'ըլլաս՝ եթէ այս խրատները հաւատացեալ եղբայրներուն տաս, եւ ինքզինքդ սնուցանես այն հաւատքով ու ճշմարիտ ուսուցումներով, որոնց հետեւող եղար: Իսկ պառանքերու յատուկ եւ հաւատքը պղտորող առասպելներէ ամբողջութեամբ հեռո՛ւ մնա:

Ինքզինքդ աստուածապաշտութեամբ ապրելու մարզէ. որովհետեւ եթէ մարմինի մարզանքները որոշ բաներու օգտակար են, աստուածապաշտութիւնը ամէն բանի օգտակար է, քանի կը խոստանայ կեանք տալ՝ թէ՛ այս աշխարհի եւ թէ՛ հանդերձեալին մէջ: Մէկ բան որոշ է, եւ ամէն մարդ պէտք է գիտնայ, թէ՛ կը տքնինք եւ նախատինք կրել յանձն կ'առնենք՝ որովհետեւ մեր յոյսը դրած ենք կենդանի Աստուծոյ վրայ, որ բոլոր մարդոց փրկիչն է, բայց մանաւանդ հաւատացողներուն:

Այս բաները պատուիրէ եւ սորվեցուր: Եւ որպէսզի ռեւէ մէկը քեզի չարհամարհէ՝ երիտասարդ ըլլալուդ համար, հաւատացեալներուդ օրինակ եղիր՝ խօսքովդ, վարմունքովդ, սիրովդ, հաւատքովդ եւ մաքուր կենցաղովդ:

Աստուածաշունչը մանուկներու համար

## Յիսուսի Ծնունդը «Բ.մաս»

Յովսէփ եւ Մարիամ ստիպուեցան ախոռի մը մէջ քնանալ, որովհետեւ պանդոկներուն մէջ տեղ չկար: Այդ գիշեր իրենց զաւակը ծնաւ, զոր դրին մսուրին մէջ: Աւելի ուշ նոյն գիշերը




հովիւներ եկան այցելութեան, եւ պատմեցին «երբ մեր գառնուկներուն ու ոչխարներուն պահակութիւն կ'ընէինք, փայլուն հրեշտակ մը երեւցաւ մեզի եւ մենք շատ վախցանք: Բայց հրեշտակը ըսաւ մեզի


-Մի վախճաք ձեզի լաւ լուր մը պիտի տամ, Դաւիթի քաղաքին մէջ այսօր ծնաւ ձեր փրկիչը Յիսուս Քրիստոս»:

Այդպէ ետք, Հրեշտակին միացաւ խումբ մը

ուրիշ հրեշտակներ եւ բոլորը միասին ըսին  
-Աստուծոյ փառք երկինքի մէջ եւ  
խաղաղութիւն աշխարհի վրայ»:



Այդ ժամանակ, արեւելքէն իմաստուն մոգեր  
երբ տեսան փայլուն աստղը երկնքին մէջ




անմիջապէս գիտցան որ ժողովուրդին համար  
նոր թագաւոր մը ծներ էր: Անոնք հետեւելով  
աստղին հասան Բեթլեհէմ, գտան մսուրը ուր  
Յիսուս մանուկ ծներ էր ու անոր նուիրեցին ոսկի,



կնդրուկ եւ զմուռս:

Թէեւ Հերովդէս  
թագաւորը հրամայած  
էր մոգերուն որ  
վերադառնան եւ իրեն  
պատմեն իրենց տեսածը,  
բայց Աստուած երազի  
մը մէջ հրահանգեց  
մոգերուն որ ուրիշ  
ճամբով երթան իրենց  
երկիրը, առանց  
Հ Ե Ր Ո Վ Դ Է Ս Ի Ն  
հանդիպելու, եւ այդպէս  
ալ ըրին:



**Եզակի գիրեր**  
Հայերէն գիրերով Sudoku

գ	է	զ	թ	բ	դ	ա	ե	ը
ա	ե	թ	է	զ	ը	բ	զ	դ
դ	բ	ը	ե	ա	զ	է	զ	թ
ը	զ	ե	զ	է	ա	թ	դ	բ
զ	թ	դ	բ	ը	ե	զ	ա	է
բ	ա	է	դ	թ	զ	զ	ը	ե
է	զ	զ	ը	դ	բ	ե	թ	ա
թ	դ	ա	զ	ե	է	ը	բ	զ
ե	ը	բ	ա	զ	թ	դ	է	զ

է							բ	ա
			թ	բ				
բ		ը		ա	է			
ե		զ	ա					
զ		բ	ե					
	ը	ա	զ	զ			թ	
զ				թ		է	զ	
						զ		
	զ			ը	ա			ե

Նախորդ «Եզակի գիրեր» ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**

Դեկտեմբեր Նամսուան պատասխանները

Մանկապարտէզի անկիւն  
Օգոստոս, մարդահամարը, ծննդավայր,  
Դաւիթի, Նազարէթ, Բեթլեհեմ

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. գ. Շաբաթ
2. բ. Թաղէնու եւ Բարթողիմէնու
3. գ. Մոզերը
4. գ. Բեթլեհեմ
5. դ. Գտէ՛ք Յիսուս մանուկը որպէսզի ես ալ գամ ու երկրպագեմ իրեն:
6. բ. Ոսկի, կնդրուկ եւ զմուս
7. դ. Մսուրին մէջ
8. ա. Յունուար 6
9. ա. Յունուար 6
10. դ. 30 տարեկան

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն


1. գ. Շաբաթ Դեկտեմբեր 15
2. ա. Մծբին
3. ա. Օգոստոս
4. ա. Ս. Գրիգոր Նարեկացի

5. դ. Ս. Ստեփանոս Գալատիացի
6. ա. Մատթէոս
7. բ. Դաւիթ
8. Գաբրիէլ
9. Նազարէթ
10. Յովհաննէս Մկրտիչ

Երկրորդականի անկիւն

1. բ. Saint James of Nisibis
2. բ. Իրան
3. գ. Ս. Պողոս
4. ա. 325 Նիկիոյ
5. դ. Ս. Յակոբ Մծբնայ հայրապետ
6. դ. Առաքեալներուն Գործերը
7. Իսրայէլ
8. դ. Օգոստոս 11 ին
9. գ. 11
10. Տիրոջմէ

Ո՛րն է ճիշդ պատասխանը  
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր «Ղուկաս 2.8-14»

Հովիւներ, խաղաղութի՛ւն, Փրկիչը, խանձարուրով, հանութիւն,  
հրեշտակը, աւետիս, Օծեալ

Այնտեղ, դաշտերուն մէջ ----- կային, որոնք գիշերով  
իրենց հօտերուն պահակութիւն կ'ընէին: Տիրոջ ----- անոնց  
երեւցաւ եւ Տիրոջ փառքը լոյսի պէս անոնց վրայ ծագեցաւ:

Հովիւները սաստիկ վախցան. հրեշտակը ըսաւ անոնց.

- Մի՛ վախնաք, ձեզի ----- մը պիտի տամ, որ ամբողջ  
ժողովուրդին մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր, Դաւիթի  
քաղաքին մէջ ձեր ----- ծնաւ, որ ----- Տէրն է:  
Հետեւեալը ապացոյց ըլլայ ձեզի.- հոն մանուկ մը պիտի գտնէք՝  
----- փաթթուած եւ մսուրի մէջ դրուած:

Եւ յանկարծ այդ հրեշտակին միացաւ երկնաւոր զօրքերու բազմութիւն  
մը, որ կ'օրհնաբանէր զԱստուած, ըսելով.«Բարձունքներուն մէջ  
Աստուծոյ փա՛ռք, ----- երկրի վրայ եւ մարդոց միջեւ  
----- »

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**  
**Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն**

**Անուն:** \_\_\_\_\_

1. Ո՞ր օրը որոշուեցաւ Յիսուս Մանուկին անունը:

- Ա.- Յունուար 6
- Բ.- Յունուար 1
- Գ.- Յունուար 13
- Դ.- Դեկտեմբեր 25

2. Ի՞նչ կը կոչենք Յիսուս Մանուկին անունին տօնը:

-----

3. Յիսուս ո՞ր օրը մկրտուեցաւ:

- Ա.- Յունուար 6
- Բ.- Յունուար 1
- Գ.- Յունուար 13
- Դ.- Դեկտեմբեր 25

4. Յիսուս ինչո՞վ մկրտուեցաւ:

- Ա.- Ջէթ
- Բ.- Ջուր
- Գ.- Միւռոն
- Դ.- Իւղ

5. Յիսուս որո՞ւ կողմէ մկրտուեցաւ:

- Ա.- Տէր Հօր
- Բ.- Յովհաննէս Մկրտիչին
- Գ.- Վարդապետին
- Դ.- Քահանայապետին

6. Ի՞նչ կը կոչենք Ծնունդին նախորդող երեկուն:

- Ա.- Ջատիկ:
- Բ.- Ջրօրհնէք:
- Գ.- Խթում:
- Դ.- Բարեկենդան:

7. Ե՞րբ տեղի կ'ունենայ Ջրօրհնէքը:

- Ա.- Յունուար 6 ի պատարագի արարողութենէն ետք
- Բ.- Յունուար 5 ի երեկոյեան
- Գ.- Ջատիկին
- Դ.- Ծաղկազարդին

8. Ե՞րբ տեղի կ'ունենայ Ծրագալուցը:

- Ա.- Յունուար 6 ի պատարագի արարողութենէն ետք
- Բ.- Յունուար 5 ի երեկոյեան
- Գ.- Բուն Բարեկենդանին
- Դ.- Ծաղկազարդին

9. Այս տարի երբ պիտի տօնենք Յովհաննէս Մկրտիչին ծննդեան տօնը:

- Ա.- Ծաբաթ՝ Յունուար 19
- Բ.- Երկուշաբթի՝ Յունուար 14
- Գ.- Հինգշաբթի՝ Յունուար 17
- Դ.- Երեքշաբթի՝ Յունուար 15

10. Այս տարի ե՞րբ կը տօնենք Սուրբ Սարգիսը:

- Ա.- Ծաբաթ՝ Յունուար 19
- Բ.- Երկուշաբթի՝ Յունուար 21
- Գ.- Հինգշաբթի՝ Յունուար 17
- Դ.- Երեքշաբթի՝ Յունուար 15

11. Այս տարի ե՞րբ կը տօնենք Վարդանանցը:

- Ա.- Հինգշաբթի՝ Փետրուար 7
- Բ.- Երկուշաբթի՝ Յունուար 21
- Գ.- Հինգշաբթի՝ Յունուար 31
- Դ.- Երեքշաբթի՝ Յունուար 29

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**  
**Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն**

**Անուն:** \_\_\_\_\_

1. Յիսուսի Անուանակոչութիւնը անշարժ տօն մըն է: Ամէն տարի ե՞րբ կը տօնենք Յիսուսի անուանակոչութիւնը:

- Ա.- Յունուար 6
- Բ.- Յունուար 1
- Գ.- Յունուար 13
- Դ.- Դեկտեմբեր 25

2. Մոգերը ի՞նչ նուիրեցին Յիսուս Մանուկին:

- Ա.- Ո---
- Բ.- --դ----
- Գ.- Զ-ու--

3. Ո՞վ էր հրէաստանի թագաւորը երբ Յիսուս ծնաւ:

-----

4. Ո՞վ էր Հռոմի կայսրը երբ Յիսուս ծնաւ:

-----

5. Հինգ տաղաւարներէն ո՞ր մէկը անշարժ տօն մըն է:

- Ա.- Ս. Ծնունդ
- Բ.- Ս. Յարութիւն
- Գ.- Պայծառակերպութիւն կամ Այլակերպութիւն
- Դ.- Ս. Աստուածածնի վերափոխում
- Ե. Խաչվերաց

6. Ընդհանրապէս «բացատելով այս տարի» Սուրբ Սարգիսը ո՞ր օրը եւ Վարդանանցէն քանի՞ օր առաջ կը տօնենք:

- Ա.- Շաբաթ, 5 օր առաջ:
- Բ.- Շաբաթ, 12 օր առաջ:
- Գ.- Հինգշաբթի, 7 օր առաջ:
- Դ.- Երկուշաբթի, 8 օր առաջ:

7. Այս տարի ե՞րբ կը տօնենք Վարդանանցը:

-----

8. Այս տարի ե՞րբ կը տօնենք Ղեւոնդեանցը:

-----

9. Ի՞նչ կը նշանակէ «Կաթողիկէ»:

-----

10. Ըստ Պօղոսի Տիմոթէոսի գրած Ա. նամակին 4.12-ին, ի՞նչ ձեւով Տիմոթէոս պէտք է օրինակ ըլլայ հաւատացեալներուն:

- Ա.- -----
- Բ.- -----
- Գ.- -----
- Դ.- -----
- Ե.- -----

Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Երկրորդականի անկիւն

Անուն: \_\_\_\_\_

1. Անոնք որոնք Ս. Ծնունդը կը տօնեն  
Դեկտեմբեր 25ի-ն, ե՞րբ կը տօնեն  
մկրտութիւնը:  
Ա.- Յունուար 6  
Բ.- Յունուար 1  
Գ.- Յունուար 13  
Դ.- Դեկտեմբեր 25

2. Արեւմտեան Եւրոպայի քրիստոնեաները  
ե՞րբ փոխեցին Ս. Ծննդեան տօնը Յունուար  
6 Էն Դեկտեմբեր 25 ին:  
Ա.- 325 Նիկիոյ ժողովին  
Բ.- 451 Քաղկեդոնի ժողովին  
Գ.- 381 Կոստանդնուպոլսոյ ժողովին  
Դ.- 431 Եփեսոսի ժողովին

3. Ի՞նչ կը կոչուի Սուրբ Սարգիսի նախորդող  
պահքի 5 օրերը:  
Ա-ա-ա-ո-ա- պահք

4. Գրէ շիտակ ժամանակագրական շարքով  
հետեւեալ տօները: Ս. Ծնունդ,  
Անուանակոչութիւն, Յովհաննու Կարապետ,  
Ս. Սարգիս, Ղեւոնդեանց, Վարդանանց,  
Բուն Բարեկենդան  
Ա.-  
Բ.-  
Գ.-  
Դ.-  
Ե.-  
Զ.-  
Է.-

5. Գրէ՛ շիտակ ժամանակագրական շարքով  
Հինգ տաղաւարները. Ս. Ծնունդ, Ս.  
Յարութիւն, Պաշտօնակերպութիւն կամ  
Այլակերպութիւն, Ս. Աստուածածնի  
վերափոխում, Խաչվերաց  
Ա.-  
Բ.-  
Գ.-  
Դ.-  
Ե.-

6. 2008 տարին ինչի՞ր տարի հոչակուեցաւ  
Արամ Ա. Վեհափառին կողմէ:  
-----

7. Այս տարի ի՞նչ կը տօնենք 31  
Յունուարին:  
-----

8. Այս տարի ի՞նչ կը տօնենք 29  
Յունուարին:  
-----


9. Ի՞նչ կը նշանակէ «Ընդհանրական»:  
Կ-----

10. Ըստ Պօղոսի Տիմոթէոսի գրած Ա.  
նամակին 4.12-ին, ի՞նչ ձեռով Տիմոթէոս  
պէտք է օրինակ ըլլայ հաւատացեալներուն:  
Ա.- -----  
Բ.- -----  
Գ.- -----  
Դ.- -----  
Ե.- -----

# Կարճ լուրեր Կիրակնօրեայէն

• Շնորհակալութիւն Մոնթրէալի ՀՕՄ-ի Սօսէ մասնաճիւղին որ Նոր Տարուան եւ Սուրբ Ծնունդին առիթով \$200 նուիրեց Կիրակնօրեայ Դպրոցին:

• Կիրակնօրեայ Դպրոցը Ս. Ծնունդը տօնեց Կիրակի 30 Դեկտեմբերին: Արագ Գէլպթանճեան, Դալար Գէլպթանճեան եւ Առէն Պապիկեան կարդացին Ծնունդի պատմութիւնը առնուած Մատթէոսի եւ Ղուկասի Աւետարաններէն եւ աշակերտները հետեւեցան պատմութեան որ ներկայացուեցաւ նկարներով: Այդ օրը, Կաղանդ Պապան այցելեց դպրոց իր հետ բերելով նուէրներ: Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները իրենց սորվածներէն ներկայացուցին Կաղանդ Պապային: Օրը փակուեցաւ երբ Կիրակնօրեայի աշակերտները հետերնին տուն տարին իրենց նուէրները եւ զարդարանքներ պատրաստուած ուսուցչուհիներուն կողմէ:



**«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»Ի**  
Ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ  
համացանցի վրայ հետեւեալ հասցէով  
**[www.sourphagop.org/mashdots](http://www.sourphagop.org/mashdots)**

# Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցույ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Այս թիւով...

Խմբագրական՝  
Ինքնաքննութեան իրաչատուկ առիթ

Բուն Բարեկեդան, Արտաքսման,  
Տեառնընդառաջ, Անառակին, Տնտեսին,  
Միջինք. Փետրուար ամսուան  
բացատրական բառարան: Էջ 3

Մեծ Պահք: Էջ 4

Գոհութիւն Աստուծոյ շնորհքին համար:  
Էջ 5

Եկեղեցական բառարան: Էջ 6

Խօսքն Աստուծոյ: Էջ 7


Աստուածաշունչը մանուկներու համար.  
Ղազարոսին Յարութիւնը: Էջ 8-9-10

Եզակի գիրեր: Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը: Էջ 12-13-  
14-15

Կարճ լուրեր կիրակնօրեայէն: Էջ 16

Փետրուար 2008  
ԺԵ տարի- թիւ 6



Մի՛ ընէք ոեւէ բան որ  
հակառակասիրութենէ կամ  
փառասիրութենէ մղուած ըլլայ.  
այլ՝ խոնարհ ոգիով՝ ձեր  
ընկերները աւելի լաւ  
համարեցէք քան դուք ձեզ:  
Միայն դուք ձեզ մի՛ մտածէք,  
այլ նաեւ՝ ձեր ընկերոջ մասին:

Փիլիպպեցիներուն 2.3-4

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակույթ

Խմբագրական

Ինքնաքննութեան իրաչատուկ առիթ

Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնը կանխող յիսուն օրերու վրայ երկարող Մեծ Պահքի շրջանը ծանօթ է ոչ միայն իբրև սննդական կամուր զրկանքի շրջան, այլ մանաւանդ իբրև ինքնաքննութեան իրաչատուկ առիթ, ուր հաւատացեալներ յանձնառու կ'ըլլան իրենք իրենց մէջ ամփոփուելու եւ իրենց կեանքի ընթացքին մասին խոկալու: Հոգեւոր մեր կեանքին վրայ կեդրոնանալու ու անոր մասին մտածելու այս առիթին առաջնահերթ նպատակն է քննել մեր հոգին ու ձգտիլ, իբրև անկատար արարածներ, ապրիլ նմանողութեամբ մեր Արարիչին:

Նիւթեղէն աշխարհի վրայ ապրող մարդ արարածը պէտք է գտնէ ձեւը մօտենալու աստուածային օրինակին: Մարդուն Աստուծոյ նմանելու ձեւն է առաքինութիւնը: Բարեգործութիւն, ժուժկալութիւն, անկեղծութիւն, հաւատարմութիւն, համեստութիւն: Այս բոլորը առաքինութեան օրինակներ են որոնց կը ձգտինք բոլորս յուսալով մօտենալ աստուածային անհասանելի կատարելութեան:

Կեանքի ընթացքին կիրարելիք կամ ձեռք ձգելիք առաքինութիւններուն թիւը անհամար է ու անոնցմէ իւրաքանչիւրը՝ համազօր ձեւով կարելոր: Դժուար է հաստատել թէ կարելոր է որ մարդ անկեղծ ըլլայ, նոյնիսկ եթէ նախանձուտ է: Աւելի կարելոր է որ ան ներողամիտ ըլլայ քան՝ խոնարհ: Կարելի չէ առաքինութիւնները ըստ կարելորութեան դասել, ինչպէս նաեւ անկարելի է անոնց միջեւ առաջնահերթութիւններ ստեղծել: Սակայն կարելի է հաստատել թէ կայ առաքինութիւն մը որ միւս բոլորը կը պարփակէ, եւ ամբողջութեամբ սխալ չըլլար հաստատել թէ եթէ այդ մէկ առաքինութիւնը ունենանք միւս բոլորը ինքնաբերաբար գործադրած կ'ըլլանք: Այս ամենէն մեծ առաքինութիւնը սէրն է:

Սիրող անձը ինքնաբերաբար խոնարհ է, հանդարտաբարոյ, համբերող, չի' ծուլանար, չի' գողոզար, չի' բարկանար, ինչպէս կը հաստատէ Աստուածաշունչը: Յիշենք օրինակները մեր կեանքերէն ներս ուր սիրով կատարուած արարք մը որքա՞ն տարբեր թուած է առ ի պարտականութիւն կատարուած այլ մէկ արարքէ, սիրով տարուած դժուարութիւնը որքա՞ն ավելի հեշտ թուած է քան զայրոյթով ու ընկճուածութեամբ տարուածը: Սէրը ամէն ինչ կը դիւրացնէ, կը մեղմացնէ: Սիրող անձին համար գրեթէ ոչինչ անկարելի է: Այս է պատճառը որուն համար կ'ըսուի թէ բոլոր առաքինութիւններն ալ հաւասարապէս կարելոր են բաց թէ անոնցմէ ամենէն մեծը Սէրն է:

«Մաշտոցի Արձագանգ»

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակցօրեայ Դպրոցի ամսաթերթ: Խմբագիր՝ Շողիկ Թորիկեան-Պոյաճեան

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակցօրեայ Դպրոցի կամուր խմբակը

Ուսուցիչներ՝ Վերժին Գիւլթանեան, Թամար Գիգիթեան, Յասմիկ Նաճարեան, Գարոլ Մանուկեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան: Տնօրէն՝ Թորոս Պապիկեան

## Փետրուար ամսուան բացատրական տօնացոյց

### Տերընտաս կամ Տեառնընդատաջ 14 Փետրուար

Տեառնընդատաջը հայաստանեայց եկեղեցոյ տէրունի տօներէն մէկն է: Ան յիշատակումն է այն օրուան, ուր քառասնօրեայ մանուկ Յիսուսը բերուեցաւ տաճար ու ընծայուեցաւ Աստուծոյ: Այս իսկ պատճառաւ, Տեառնընդատաջը անշարժ տօն մըն է ու կը զուգադիպի Սուրբ Ծնունդէն 40 օր վերջ, Փետրուար 14-ին:

Գիտէի՞ր թէ...  
Տեառնընդատաջի մասին կարելի է միայն Ղուկասի աւետարանին հատուածներէն մէկուն մէջ կարդալ: Միւս աւետարանիչները չեն ակնարկած Յիսուսի կեանքի այս դէպքին:

Տեառնընդատաջի օրը եկեղեցիէն ներս կը մատուցուի պատարագ: Եկեղեցիին չորս անկիւնները կը կարդացուին աւետարանի համապատասխանող հատուածներ: Կը յիշատակուին նաեւ ծերունի Սիմոնն ու Աննա մարգարէուհին, երկու անձեր որոնք Յիսուսի տաճար ընծայման ներկայ գտնուած են:



Տեառնընդատաջը նախորդող երեկոյեան ժամերգութեան աւարտին, ծիսակատար քահանան Սուրբ սեղանին վրայի մոմերը կը վառէ եւ ներկայ հաւատացեալները այդ մոմերէն իրենց կարգին կը վառեն մոմեր ու լոյսը կը տանին տուն:

### Բուն Բարեկենդան 3 Փետրուար

Բուն Բարեկենդանը այն կիրակին է որ կը նախորդէ 48 օրեր տեւող Մեծ Պահքի սկիզբը նշող կիրակին: Եւ որովհետեւ ուտիքի վերջին շաբաթն է, յատուկ ճոխութեամբ կը նշուի ան:

Բարեկենդան բառը, ինչպէս կը տեսնենք, կազմուած է երկու արմատ բառերէ՝ Բարի եւ Կենդան: Ուրախութեան օր մը ըլլալուն, ժողովրդական սովորութիւն է դիմակներով ծպտուիլն ու ուրախ տօնակատարութիւններ կազմակերպելը: Այս սովորութիւնը կը վերագրուի հեթանոսական շրջաններէն մեզի հասած սովորութեան մը:

## Մեծ Պահք

Հայ եկեղեցու ծիսաշարքին համաձայն Բուն Բարեկենդանին յաջորդող Երկուշաբթին, այսինքն այս տարուան Փետրուար 4-ին, կը սկսի Մեծ Պահքի շրջանը: Ան կը տևէ 42 օրեր մինչեւ Ծաղկազարդի Կիրակին, յետոյ կը շարունակուի շաբաթ մը եւս պահքի օրերով՝ Աւագ Ծաբաթը, որու ընթացքին եկեղեցին հաւատացեալները կը պատրաստէ արժանաւորապէս եւ երկիւղածութեամբ մօտենալու Յիսուս Քրիստոսի Յարութեան տօնին: Մեծ Պահքի բոլոր կիրակիներուն բոլոր եկեղեցիներուն մէջ կը կարդացուին անտարանական առակներ, որոնք հրաւերներ են որ մարդիկ հեռանան իրենց մեղքերէն, մաքրուին եւ պատրաստ ըլլան սուրբ տօնին:

### Մարդ միայն հացով չ'ապրիր...

Աւետարանին մէջ գրուած է թէ Քրիստոս իր քարոզչութիւնը սկսելէ առաջ քառասուն օր առանձնացաւ անապատ՝ աղօթքով եւ ծոմապահութեամբ ապրելու համար: «Այդ օրերուն ո՛չ կերաւ եւ ո՛չ ալ խմեց: Երբ քառասուն օրերը ամբողջացան, Յիսուս անօթեցաւ: Սատանան ըսաւ իրեն.

- Եթէ դուն Աստուծոյ որդին ես, հրամայէ՛ որ այս քարը հաց դառնայ: Յիսուս պատասխանեց.

- Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ՝ Աստուծոյ բոլոր խօսքերով:»

*Ղուկաս 4.2-4*

### Մեծ Պահքի Կիրակիները

Մեծ Պահքը ունի 7 կիրակիներ, որոնք յատուկ եւ իմաստալից անուններ ունին. անա անոնցմէ երկուքը.-

#### Բուն Բարեկենդան.

Մեծ Պահքին նախորդող Կիրակին է. Բարեկենդան կը նշանակէ բարի կեանք՝ աշխարհիկ իմաստով ուրախութիւն, խրախճանք, իսկ կրօնական իմաստով՝ երանելի կեանք, ինչպէս Ադամը կ'ապրէր դրախտին մէջ արտաքսուելէն առաջ:

#### Արտաքսման Կիրակի.

Ադամն ու Եւան իրենց անհնազանդութեան պատճառաւ երկար չի մնացին դրախտին մէջ եւ արտաքսուեցան հոնկէ: Մեզի՛ մեղաւորներուս համար Քրիստոս ապաշխարհութեամբ ցոյց տուաւ փրկութեան ճամբան, եւ դրախտին արժանանալու յոյսը:

Պահքի շրջանը իր սահմանափակումներով, մեղքերու խոստովանութեամբ, մարդը կը հասցնէ իր կատարելութեան եւ հաւատացեալներ անոր միջոցաւ կը փորձեն կիրարկել «Լերան քարոզ»-ին մէջ Յիսուսի ըսած մէկ խօսքը . «կատարեալ եղէք ձեր Երկնաւոր հօրը նման»:

Պահքը ունի երկու տեսակ առաւելութիւններ. մէկը նիւթական, միւսը հոգեկան:

Առաջինը կենդանական կերակուրներէ հրաժարիլն է իսկ երկրորդը մեղքերու քաւումը: Այս երկու տեսակները իրար կը լրացնեն եւ մէկը առանց միւսին անիմաստ է եւ անբաւարար:

## Գոհութիւն Աստուծոյ շնորհքին համար



Դուն ինչո՞ւ համար փափաքն ունիս հանգիստի, դուն որ ծնած ես վաստակելու համար:

Տրամադրէ ինքզինքդ աւելի համբերութեան քան մխիթարութեան, աւելի խաշը կրել քան ուրախութիւն ճաշակել:

Ո՞վ է մարդը մահկանացու որ յօժարակամ շընդունեցաւ ուրախութիւնները եւ մխիթարութիւնները հոգեւոր, եթէ կարող էր զանոնք միշտ վայելել:

Հոգեւոր մխիթարութիւնները կը գերազանցեն ամէն վայելքներն աշխարհի, ամէն հաճոյքները մարմնաւոր:

Ամէն փափկութիւններն աշխարհի կամ սնոտի են կամ զազրոտի: Իսկ հոգեւոր մխիթարութիւնները միայն քաղցր են եւ մաքուր, կը ծնին շնորհքէն եւ Աստուած կը սփռէ զանոնք մաքուր սրտերուն մէջ:

Ոչ ոք սակայն կարող է միշտ եւ ըստ կամի վայելել աստուածային մխիթարութիւնները, որովհետեւ փորձութեան դադարը երկարատեւ չէ:

Թիւր ազատութիւնը մտքին եւ մեծ վստահութիւնը անձին վրայ, ինքնին մեծ արգելք են երկնային այցելութիւններուն:

Աստուած մեծ բարիքը կու տայ մարդուն երբ կը պարգեւէ անոր շնորհքը մխիթարութեան: Մարդը սակայն կը գործէ մեծ սխալը երբ այս պարգեւին համար չի մատուցաներ գոհութիւնն Աստուծոյ եւ բոլորովին անոր չի վերագրեր զայն:

Շնորհքը առատօրէն չի զեղուր մեր վրայ, որովհետեւ ապերախտ ենք Տուողին հանդէպ եւ չենք բարձրանար մինչեւ աղբիւրը շնորհքին:

Որովհետեւ շնորհքը երբեք չի մերժուիր անոր, որ կ'ընդունի զայն գոհութեամբ, եւ Աստուած կու տայ խոնարհին ինչ որ կը մերժէ ամբարտաւանին:

Հատուած՝ «Նմանութիւն Յիսուս Քրիստոսի» գիրքէն, Թովմաս Գեմբացի, Պէլյուրօ 1997

## Եկեղեցական բառարան

# Հ Ի

### Հրաժարիմք

Հրաժարիմքը Մեծ Պահքի շրջանին արտասանուող խօսք մըն է որ գրաբար դարձուածքն է «կը հրաժարինք» բառին:


«Հրաժարիմք»-ը արտասանելով հաւատացեալը կը մերժէ չարը, կը հեռանայ անկէ ու մը հրաժարի անկէ: Ան կը հրաժարի չարին բոլոր տեսակի խաբէութիւններէն, չար մտածումներէն եւ չար գործերէն:

«Հրաժարիմք ի Սատանայէ, եւ ամենայն խաբէութենէ նորա, ի պատրանաց նորա, ի խորհրդոց նորա, ի զնացից նորա, ի չար կամաց նորա, ի չար հրեշտակաց նորա, ի չար պաշտօնէից նորա, ի չար կամարարաց նորա եւ յամենայն չար զօրութենէ նորա՝ հրաժարելով հրաժարիմք:

# Ձ ձ

### Ձեռագիր մատեան

Հայ գրիչներու կողմէ արտագրուած գիրքերը կը կոչուին ձեռագիր մատեաններ: Ձեռագիր մատեանները 6, 8, 12 եւ 16 թերթ ունեցող տետրակներ են որոնց էջերը իրար կարուելով ստացած են գիրքի ձեւ: Անոնք գրուած են մագաղաթի կամ թուղթի վրայ: Մագաղաթի վրայ գրուած ամենէն հին ձեռագիր մատեանը պահպանուած է Երեւանի մատենադարանին մէջ եւ ծանօթ է «Վեհամօր աւետարան» անունին տակ: Թուղթէ պատրաստուած ամենէն հին ձեռագիր մատեանները 981 թուին կը վերագրուին իսկ ամենէն նորերը ստեղծուած են 14-րդ դարուն:



## Խօսքն Աստուծոյ

Անառակ որդիին առակը «Ղուկաս 15.11-32»  
Անառակի կիրակիին առիթով, 17 Փետրուար

Մարդ մը երկու զաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ .

- «Հայր, քու ստացուածքէդ ինծի ինկած բաժինը հիմա՛ տուր ինծի»: Եւ հայրը իր զաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք, կրտսեր զաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով՝ մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

Պատահեցաւ որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ եւ անիկա իր ազարակը դրկեց զինք՝ խոզ արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիրներէն իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: «Հօրս տան մէջ քանի՛ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն.- Հայր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. զիս քու գործաւորներէդ մէկը նկատէ»: Ապա ելաւ եւ հօրը քով գնաց:

Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գթաց. վազելով դիմաւորեց զայն, վիզին փաթթուեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ. «Հայր մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու:» Հայրը իր ծառաներուն հրամայեց. «Անմիջապէս բերէք լաւագոյն պատմունանը եւ հագցուցէք իրեն. մատանի անցուցէք իր մատին եւ կօշիկ տուէք իրեն: Բերէ՛ք պարարտ հորթը, մորթեցէք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս զաւակս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»: Եւ սկսան խրախճանքի:

Մինչ այդ, երէց զաւակը ազարակ կը գտնուէր: Վերադարձին, երբ տան մօտեցաւ, երգի ու պարի ձայներ լսեց: Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց թէ ի՛նչ կայ: Ծառան ըսաւ իրեն. «Եղբայրդ եկաւ, եւ որովհետեւ ողջ առողջ վերադարձաւ, հայրդ պարարտ հորթը մորթեց:» Երէց եղբայրը զայրացաւ եւ չուզեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց որ ներս մտնէ: Իսկ անիկա պատասխանեց. «Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ. ոեւէ մէկ հրահանգդ չանտեսեցի, եւ սակայն նոյնիսկ ուլ մը չտուիր ինծի, որ ուրախանայի բարեկամներուս հետ: Մինչդեռ, երբ եկաւ այդ որդիդ, որ քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսխեց, պարարտ հորթը մորթեցիր անոր համար»: Հայրը ըսաւ. «Տղա՛ս, դուն միշտ ինծի հետ ես եւ ամբողջ ունեցածս քուկդ է: Սակայն հիմա պէտք է ուրախանանք եւ ցնծանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»:

# Աստուածաշունչը մանուկներու համար Ղազարոսի Յարութիւնը



Հիւանդ մէկը կար,  
Ղազարոս անունով, որ  
Բեթանիայէն էր: Ան Յիսուսի  
բարեկամ էր:  
Ղազարոսի քոյրերը՝ Մարթան եւ  
Մարիամը մարդ ղրկեցին  
Յիսուսի մօտ, որպէսզի անոր  
ըսեն՝

- Տէր, քու սիրելի բարեկամդ հիւանդ է:  
Երբ Յիսուս այս լսեց ըսաւ՝

- Այս հիւանդութիւնը պիտի ծառայէ որ հրաշք մը  
պատահի եւ Աստուծոյ անունը փառաւորուի:  
Սակայն փոխանակ անմիջապէս երթալու երկու օր սպասեց  
ապա ըսաւ աշակերտներուն՝

- Եկէ՛ք կրկին Հրէաստան երթանք  
Աշակերտները մտահոգ էին եւ կը փորձէին Յիսուսի կեցնել  
ըսելով «Տէր, Հրէաստանցիները դեռ նոր կ'ուզէին քեզ



քարկոծել, հիմա կրկին հոն  
կ'երթաս:»

Երբ ժամանակն էր երթալու  
Յիսուս ըսաւ աշակերտներուն  
- Մեր բարեկամը՝ Ղազարոս  
քնացած է, երթամ արթնցնեմ  
զինք:



Աշակերտները պատասխանեցին

- Եթէ քնացած է՝ ուրեմն կ'առողջանայ:

Յիսուս ըսաւ՝ «Ըսել կ'ուզեմ որ Ղազարոս մեռաւ»:

Երբ Յիսուս Հրէաստան հասաւ, Մարթան մօտեցաւ անոր ու ըսաւ.

- Եթէ հոս ըլլայիր եղբայրս չէր մեռներ:

Յիսուս անոր պատասխանեց.

- Եղբայրդ դարձեալ պիտի ապրի: Ես եմ յարութիւնը եւ կեանքը, ան որ ինձի հաւատայ, նոյնիսկ եթէ մեռնի՝ պիտի ապրի:

Յիսուս գնաց գերեզման, քարայրի մուտքը բանալ տուաւ ու ըսաւ Մարթային

- Եթէ հաւատաս՝ Ասուծոյ փառքը պիտի տեսնես:

Յիսուս աչքերը վեր բարձրացուց եւ ըսաւ՝

- Ծնորհակալութիւն Քեզի՝ որ լսեցիր իմ աղօթքս: Գիտեմ որ միշտ կը լսես զիս. բայց այս կ'ըսեմ շուրջի ժողովուրդին համար որ անոնք գիտնան որ դուն զիս ղրկեցիր:



Ապա բարձր ձայնով կանչեց. – Ղազարոս, դուրս եկուր:

Ու Ղազարոս դուրս ելաւ՝ ոտքերն ու ձեռքերը պատանքով փաթթուած եւ երեսը ծածկուած:

Յիսուս ըսաւ.

- Քակեցէ՛ք պատանքը եւ ձգեցէք որ երթայ:



**Եզակի գիրեր**  
Հայերէն գիրերով Sudoku

է	ե	թ	ը	գ	զ	դ	բ	ա
ա	դ	գ	թ	բ	ե	ը	է	զ
բ	զ	ը	դ	ա	է	թ	ե	գ
ե	է	զ	ա	դ	թ	գ	ը	բ
գ	թ	բ	ե	է	ը	ա	զ	դ
դ	ը	ա	գ	զ	բ	ե	թ	է
զ	ա	ե	բ	թ	դ	է	գ	ը
ը	բ	դ	է	ե	գ	զ	ա	թ
թ	գ	է	զ	ը	ա	բ	դ	ե

ա							է	զ
	ե	զ	թ	է	գ			
է		թ		ա	բ			
թ	ա	բ		գ	ե	է	զ	ը
գ		ե	ը	զ				ա
զ		ը			ա	գ	դ	ե
ը	թ		է	ե	զ	դ		գ
բ			ա			զ	ե	է
ե	զ	է	գ		դ		ը	թ

Նախորդ «Եզակի գիրեր» ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

**Ռ՞րն է ճիշդ պատասխանը**

**Յունուար ամսուան պատասխանները**

Մանկապարտէզի անկիւն  
Հովիւներ, հրեշտակը, աւետիս, Փրկիչը,  
Օծեալ, խանձարուրով, խաղաղութի՛ւն,  
հաճութիւն

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. գ. Յունուար 13
2. անուանակոչութիւն
3. ա. Յունուար 6
4. բ. Զուր
5. բ. Յովհաննէս Մկրտիչին
6. գ. խթում
7. դ. Մսուրիւն մէջ
8. ա. Յունուար 6 ի պատարագի արարողութենէն ետք
9. բ. Յունուար 5 ի երեկոյեան
10. բ. Երկուշաբթի՝ Յունուար 21
11. գ. Հինգշաբթի՝ Յունուար 31

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. գ. Յունուար 13
2. ա. ոսկի, բ. կնդրուկ, գ. զմուռ
3. Հերովդէս
4. Օգոստոս
5. ա. Ս. Ծնունդ

6. բ. Շաբաթ, 12 օր առաջ
7. Հինգշաբթի, Յունուար 31
8. Երեքշաբթի, Յունուար 29
9. Ընդհանրական
10. ա. խօսքով, բ. վարմունքով, գ. սիրով, դ. հաւատքով, ե. մաքուր կենցաղով

Երկրորդականի անկիւն

1. ա. Յունուար 6
2. բ. 451 Քաղկեդոնի ժողովին
3. Առաջաւորաց պահք
4. ա. Ս. Ծնունդ, բ. Անուանակոչութիւն, գ. Յովհաննու Կարապետ, դ. Ս. Սարգիս, ե. Ղետնդեանց, զ. Վարդանանց, է. Բուն Բարեկենդան
5. ա. Ս. Ծնունդ, բ. Ս. Յարութիւն, գ. Պաշտօնակերպութիւն, դ. Ս. Աստուածածնի վերափոխում, ե. Խաչվերաց
6. Քրիստոնէական Դաստիարակութեան
7. Վարդանանց
8. Ղետնդեանց
9. Կաթողիկէ
10. ա. խօսքով, բ. վարմունքով, գ. սիրով, դ. հաւատքով, ե. մաքուր կենցաղով

## Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկաատուէտի անկիւն



Յիսուսի տաճար ընծայումը  
«Տեառնընդառաջ,  
Փետրուար 14»

Ամբողջացո՛ւր ըստ  
Ղուկաս 2.22- 32

Տիրոջ, Գուրբուրի,  
տատրակ, աղաւնիի,  
Սիմոն, Սուրբ Հոգիին,  
Օծեալը, Յիսուսը,  
գոհաբանեց

Յովսէփին ու Մարիամը մանուկը Երուսաղէմ տարին ----- ընծայելու  
համար որովհետեւ Տիրոջ Օրէնքին մէջ գրուած է. «Տիրոջ պէտք է -----  
ամէն արու զաւակ, որ մօր առաջին զաւակն է». ինչպէս նաեւ Տիրոջ  
Օրէնքին համաձայն զոհ մատուցանելու զոյգ մը ----- կամ  
----- երկու ձագ:

Այդ ժամանակ Երուսաղէմի մէջ ----- անունով մարդ մը կ'ապրէր:  
Սիմոն արդար եւ աստուածավախ մարդ մըն էր, -----  
իրեն հետ էր եւ վստահեցուցած էր զինք՝ թէ Տիրոջ ----- չտեսած  
պիտի չմեռներ: Արդ, Սուրբ Հոգիէն առաջնորդուած՝ անկա տաճար  
գնաց: Երբ ծնողքը մանուկ ----- տաճար բերին, որպէսզի կատարեն  
այն ինչ որ Օրէնքը կը պահանջէր մանուկին համար, Սիմոն իր գիրկը  
առաւ փոքրիկը եւ ----- զԱստուած:

Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

Անուն: \_\_\_\_\_

- 1.- Յիսուսի ծնունդէն քանի՞ օր ետք զԻնք տաճար բերին Տիրոջ նուիրելու:
- ա.- 8
- բ.- 20
- գ.- 40
- դ.- 451

- 2.- Ո՞ր թուականին տեղի ունեցաւ Վարդանանց պատերազմը:
- ա.- 484
- բ.- 303
- գ.- 301
- դ.- 451

- 3.- Սուրբ Սարգիս ի՞նչ գործ կ'ըներ:
- ա.- Զօրավար էր
- բ.- Զկնորս էր
- գ.- Հովիւ էր
- դ.- Բժիշկ էր

- 4.- Էջ 14-16 ի Յիսուսի ըրած հրաշքին մէջ Յիսուս որո՞նք ըսաւ «Դուրս եկուր»:

-----

- 5.- Սուրբ Վարդանանց տօնին յաջորդող Կիրակին ի՞նչ կը կոչուի:

\_\_\_\_\_

- 6. Վարդանանցէն երկու օր առաջ ի՞նչ կը տօնենք:

- Ա.Սուրբ Սարգիս
- Բ.Սուրբ Սահակ Պարթեւ
- Գ.Սուրբ Ղեւոնդեանց Քահանայից
- Դ.Տեառնընդառաջ

- 7. Ի՞նչ կը նշանակէ Բարեկենդան:
- ա.- Բարի լուր
- բ.- Բարի կեանք
- գ.- Վարդանանք
- դ.- Halloween

- 8. Բուն Բարեկենդանին յաջորդ օրը ի՞նչ կը սկսի:

\_\_\_\_\_

- 9. Պահքի առաջին Կիրակին կը կոչուի Բուն Բարեկենդան: Ի՞նչ կը կոչուի երկրորդ Կիրակին:

Ա-տ-ք-մ-ն

- 10. Պահքի առաջին Կիրակին կը կոչուի Բուն Բարեկենդան: Ի՞նչ կը կոչուի երրորդ Կիրակին:

Ա-ա-ա-ի-

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**  
**Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն**

**Անուն:** \_\_\_\_\_

1.- Հայաստանեայց Եկեղեցին ի՞նչ կը տօնէ Փետրուար 14 ին:

ա.- Տեառնընդառաջ

բ.- Վարդանանք

գ.- St. Valentine

դ.- Գոհաբանութեան օր

2.- ա. Յունուար 6ը հաշուելով որպէս առաջին օր, Փետրուարի ո՞ր օրը Յիսուս առաջին անգամ տաճար բերին:

ա.- 12

բ.- 13

գ.- 14

դ.- 15

3.- Յիսուս իր քարոզչութիւնը սկսելէ առաջ անապատին մէջ քանի՞ օր ծոմ պահեց:

ա.- 8

բ.- 20

գ.- 40

դ.- 451

4.- Մեծ պահքի առաջին շաբաթ օրը ո՞ր սուրբին տօնը կը յիշատակենք:

5. Ո՞վ էր Ս. Վարդան Մամիկոնեանին մեծ հաչրը «մօրը կողմէ»:

6. Ե՞րբ կը սկսի Մեծ Պահքը «երկու շիտակ պատասխան»:

Ա. Վարդանանցի յաջորդող Երկուշաբթին

Բ.Բուն բարեկենդանին յաջորդող Երկուշաբթին

Գ.Վարդանանցի յաջորդող Չորեքշաբթին

Դ.Բուն բարեկենդանին յաջորդող Չորեքշաբթին

7. Ո՞ր շարականը կ'երգենք Վարդանանցին:

8. Ո՞վ գրած է «Վարդանի եւ Հայոց Պատերազմի մասին» երկը:

9. Ի՞նչ կը կոչուի Բուն Բարեկենդանին յաջորդող Կիրակին:

10. Ի՞նչ կը կոչուի Բուն Բարեկենդանէն ետք եկող երկրորդ Կիրակին:

Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Երկրորդականի անկիւն

Անուն: \_\_\_\_\_

1- Վարդանանց ճակատամարտի տարին տեղի ունեցաւ 4րդ տիեզերական ժողովը որ հետագային մերժուեցաւ Հայերուն կողմէ: Ո՞ր տեղի ունեցաւ այդ ժողովը:

-----

2- Վարդանանց ճակատամարտէն 33 տարիներ ետք Վահան Մամիկոնեան Պարսիկներուն հետ ստորագրեց դաշնագիր մը որ Հայ ժողովուրդին տուաւ ինքնավարութիւն, Հայ Եկեղեցիին տուաւ ազատ գործելու իրաւունք եւ քանդելու կառուցուած ատրուշանները: Ո՞ր ստորագրուեցաւ այդ դաշնագիրը

-----

3-Հայ Եկեղեցին Փետրուարի ո՞ր օրը կը տօնէ Յիսուսի Տաճար ընծայումը:

-----

4-Սուրբ Սարգիսի նախորդող Երկուշաբթիէն Ուրբաթ օրերը պահք են: Ի՞նչ կը կոչուի այս 5 օրուան պահքը:

-----

5-Տարուան ո՞ր 4 օրերը Ճաշու գիրք չի կարդացուիր:

-----

6- Թիւ 5 հարցումին մէջ նշուած 4 օրերուն յաջորդող օրը Հին Կտակարանի ո՞ր մարգարէին գիրքն է Ճաշու ընթերցումը:

-----

7- Ե՞րբ տեղի ունեցաւ Տիեզերական այն ժողովը, որուն մասնակից 150 հայրապետներուն տօնը այս տարի կը տօնենք Փետրուար 2 ին:

-----

8- Յիսուս քանի՞ օրուան մանուկ էր երբ Տաճար ընծայուեցաւ:

-----

9.- Ամբողջացուր  
**ՔԱՆԶԻ ՀԱՅՐ ՄԵՐ  
ԶՍՈՒՐԲ**

-----

**ԳԻՏԵՄՔ ԵՒ ՄԱՅՐ  
ԶԱՌԱՔԵԼԱԿԱՆ**

-----

**ԿԱԹՈՂԻԿԷ**

10.- Ո՞ր ականատես սուրբը գրեց Վարդանանց Պատերազմին նկարագրականը:

-----

# Կարճ լուրեր Կիրակնօրեայէն

Փետրուար 3 Ին Կիրակնօրեայ Դպրոցը կը տօնէ Վարդանանք եւ Բուն Բարեկենդան, ուր աշակերտները կը ծափուին Հայկական Տարազներով:

Այս տարուան պահքի առաջարկուած ծոմապահութիւնը հետեւեալն է:

- Փետրուար 4 - 10 Ծամոն
- Փետրուար 11 - 17 Հեռատեսիլ, Համակարգիչ, այլ պաստառով խաղեր
- Փետրուար 18 - 24 Ծաքար
- Փետրուար 25 - Մարտ 2 Կազային խմիչքներ (pepsi, 7up, coke, crush)
- Մարտ 3 - 9 Կոլոնատ, տուրմ
- Մարտ 10 - 16 Chips
- Մարտ 17 - 22 Հակիթ

Այս տարուան պահքի ընթացքին սորվելիքները հետեւեալներն են:

Մանկապարտէզի Ա. Բ. եւ Գ. Եւ Նախակրթարանի Ա.

Անսխալ գոց սորվիլ Խաչակնքել, Տէրունական Աղօթքը եւ Հաւատով Խոստովանիմէն համարներ :

Նախակրթարանի Բ., Գ., Դ.

Անսխալ գոց սորվիլ Հաւատով Խոստովանիմի առաջին 12 համարները:

Նախակրթարանի Ե. եւ Զ.

Գոց սորվիլ Նոր Կտակարանի Գիրքերու շարքը, կարդալ Մարկոսի Աւետարանը Երկրորդական

Գոց սորվիլ Ա. Սաղմոսը, Նոր Կտակարանի Գիրքերու Ծարքը, եւ կարդալ Մարկոսի Աւետարանը

## «ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»Ի

Ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ համացանցի վրայ:  
Այցելեցէ՛ք [www.sourphagop.org](http://www.sourphagop.org) հասցէն եւ ընտրեցէ՛ք Պարբերաթերթ  
բաժանումը:

## ՏԵԱՌՆԸՆԴԻԱՌԱԶ

Հինգշաբթի, 14  
Փետրուար 2007  
Երեկոյեան  
Փամերգութիւն  
Փամը 7:30 ին

## Փետրուար 2008

- 3 Բուն Բարեկենդան
- 4 Ա. օր Մեծ Պահքի
- 9 Ս. Թէոդորոս Զօրավար
- 10 Արտաքսման
- 14 Տեառնընդառաջ
- 17 Անառակի
- 23 Ս. Յովհաննէս Երուսաղիմայ  
հայրապետ, Յովհաննէս  
Օձնեցի, Յովհաննէս  
Որոտնեցի, Գրիգոր  
Տաթևացի
- 24 Տնտեսի
- 27 Միջինք Մեծ Պահքի

# Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցույ Սուրբ Յակոբ Կիրակնորեայ Դպրոցի ամսաթերթ

Մարտ 2008

ՓԵ տարի- թիւ 7

Այս թիւով...

Խմբագրական՝

Հաղորդուիլ՝ Քրիստոսով

Սուրբ Յարութիւն, Մեծ Զատիկ: Էջ 3

Մարտ ամսուան բացատրական տօնացոյց. Անդաստան: Էջ 4

Աւագ շաբթուան օրերը: Էջ 5

Եկեղեցական բառարան: Էջ 6

Խօսքն Աստուծոյ: Վերջին ընթրիքը Էջ 7


Աստուածաշունչը մանուկներու համար. Առաջին Ծաղկազարդը: Էջ 8-9-10

Եզակի գիրեր: Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը: Էջ 12-13-14-15

Ամսուան Տօնացոյց: Էջ 16

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՅ  
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ



Ես եմ աշխարհի լոյսը. ով որ ինձի կը հետեւի՝ խաւարի մէջ պիտի չքալէ, այլ կեանքի առաջնորդող լոյսը պիտի ունենայ:

Յովհաննէս 8.12

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակույթ

Խմբագրական

**Հաղորդուիլ՝ Քրիստոսով**

Հայաստանեայց եկեղեցւոյ հարստութիւններէն մէկն է անոր ծիսակատարութեան գեղեցկութիւնն ու նոյնքան իմաստալից որքան խորհրդանշական ըլլալը: Մեր եկեղեցական արարողութիւնները, ընկերակցութեամբ հրեշտակային շարականներու եւ աղօթքներու երգեցողութեամբ, հաւատացեալը կը փոխադրեն անցիւթեղէն աշխարհ մը ուր ամէն ինչ շինջ է ու խաղաղ:

Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնին նուիրուած ծիսակատարութիւններն ու եկեղեցական արարողութիւնները իսկական եւ տիպար օրինակներ են այս իրողութեան: Ունելուայ, խաւարում, թաղման կարգ ապա Յարութեան օրը նուիրուող Ջատկուան Պատարագ, ահա մի քանին արարողութիւններու շարքի մը որոնք մեր եկեղեցւոյ ամենէն սիրելի տօներէն մէկուն՝ Սուրբ Յարութեան կամ Ջատիկին կը վերագրուին:

Սակայն վերոնշեալ ծիսակատարութիւնները, եւ ամէն ծիսակատարութիւն ընդհանրապէս, պարզ արարողութիւն, թատերական ներկայացման նմանողութեամբ կատարուող խաղարկութիւն պիտի ըլլար եթէ հաւատացեալները անհաղորդ մնային այս ծիսակատարութեանց ետին գտնուող խորհուրդին, այսինքն ծէսի միջոցաւ Քրիստոսի հետ չմիախառնուէին ու անոր կեանքին ու գերագոյն զոհողութեան մասնակից չըլլային: Հոս է տարբերութիւնը սովորութիւնը յարգելով կամ սերունդէ սերունդ աւանդութիւն փոխանցելու նպատակով եկեղեցական արարողութիւններուն ներկայ գտնուելուն եւ Քրիստոսի հետ հաղորդուելու ու Անոր կեանքին մասնակից ըլլալու նպատակով ծիսակատարութեան մասնակցելուն միջեւ: Այլ խօսքով մէկ կողմէն եկեղեցի երթալուն եւ միւս կողմէն՝ հաւատալուն միջեւ:

Եկեղեցի յաճախելու եւ հաւատք ունենալու միջեւ գիծը բազմաթիւ ձեւեր կրնայ ստանալ: Ոմանց համար, մէկը միւսին հետ կապ չունի երբէք ուրեմն կարելի է հաւատալ առանց եկեղեցի յաճախելու կամ եկեղեցւոյ արարողութիւններուն ներկայ գտնուիլ առանց հաւատալու: Ուրիշներ համոզուած են որ առանց մէկուն միւսը անկարելի է որ գոյութիւն ունենայ, այսինքն անկարելի է հաւատացեալ ըլլալ առանց եկեղեցի յաճախելու եւ նոյնպէս անկարելի է եկեղեցի մտնել եթէ հաւատացեալ չենք:

Մեկնաբանութիւններն ու բացատրութիւնները տեսակաւոր են ու անհամար եւ մեզմէ իւրաքանչիւրը, անկասկած, ըսելիք պիտի ունենար այս նիւթին շուրջ: Ինչ որ ալ ըլլայ սակայն մեր տեսակէտը եւ դիտանկիւնը, կարելի է հաստատել թէ եկեղեցական արարողութիւններն ու հաւատքը թերեւս իրարու նախապայմաններ չեն, սակայն անկասկած զիրար ամբողջացնող տարրեր են: Այսպէս օրինակ, նոյնիսկ եթէ ընդունինք թէ կարելի է հաւատացեալ ըլլալ առանց անպայման եկեղեցի յաճախելու, վստահաբար պիտի համամիտ ըլլանք ըսելու թէ մեր հաւատքը կ'ամրապնդուի եւ գերագոյն արտայայտութեան ձեւ կը ստանայ եկեղեցական արարողութեան մը ստեղծած խորհրդաւոր պայմաններուն շնորհիւ: Աւագ շաբթուան ընթացքին ընծայուող բոլոր արարողութիւնները իւրայատուկ կերպով խորհրդաւոր են ու երբ կատարուին իրենց լաւագոյն պայմաններուն տակ, բացառիկ առիթներ են ապրելու հաւատքի խորունկ զգացում եւ Քրիստոսի հետ հաղորդութեան վայրկեաններ:

**ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՅ  
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ**


«Մաշտոցի Արձագանգ»  
Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ:  
Խմբագիր՝ Շողիկ Թորիկեան-Պոյաճեան  
Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը  
Ոսուցիչներ՝ Վէրժին Գիւլթանճեան, Թամար Գիզիրեան, Յասմիկ Նաճարեան, Գարոլ Մանուկեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան:  
Տնօրէն՝ Թորոս Պապիկեան

## Սուրբ Յարութիւն Մեծ Զատիկ

Հայաստանեայց եկեղեցւոյ հինգ մեծ տօներէն կամ տաղաարներէն մեծագոյնն է Սուրբ Յարութեան տօնը: Հայ ժողովուրդը այս տօնը կը կոչէ նաեւ Զատիկ, սուրբ Զատիկ կամ Մեծ Զատիկ: Այս տարի, Սուրբ Զատիկը կը զուգադիպի Մարտ 23-ին:

Զատիկ բառը նման է հրեաներու Պասեք տօնի անունին որ կը նշանակէ Ելք: Ինչպէս հրեաները Պասեքի տօնին մէջ կը յիշատակեն Եգիպտոսի ծանր լուծէն իրենց դուրս գալը, ելքը, այնպէս ալ մենք, Քրիստոնէաներս, Յիսուսի չարչարանքին արդիւնքով եւ հրաշափառ յարութեամբ կը յիշատակենք մարդոց մահուան իշխանութենէն ազատիլը ու երկնքի արքայութեան արժանանալը:

Զատկուան առաւօտ ամէն մարդ ներկայ կը գտնուի Սուրբ Պատարագի եւ բազմաթիւ հաւատացեալներ հաղորդութիւն կը ստանան:



Զատկուայ աւանդութիւններէն ամենէն գլխաւորը հաւկիթ ներկել եւ իբր գնահատանք ու սիրոյ արտայայտութիւն՝ նուիրելն է ծանօթներու եւ այցելուներու: Հայկական գիւղերու մէջ փոքրիկներ երբ կ'այցելէին իրենց ազգականներուն, ծանօթներուն, դրացիներուն, անպայման ներկուած հաւկիթ կը ստանային: Գրիգոր Տաթեւացի հաւկիթը կարմիր ներկելու հայկական այս սովորութեան մասին կ'ըսէ հետեւեալը. Հաւկիթը կը խորհրդանշէ աշխարհը: Անոր դուրսի կարծր կեղեւը երկինքն է, ներքին մաշկը՝ օդը, ներմկուցը՝ ջուրը իսկ դեղնուցը՝ երկիրը: Իսկ հաւկիթին վրայ քսուած կարմիր ներկը կը նշանակէ թէ ամբողջ աշխարհը գնուեցաւ Քրիստոսի արիւնով եւ մենք կարմիր հաւկիթը մեր ձեռքը առնելով կը հոշակենք Քրիստոսի նուիրած արեան շնորհիւ մեր փրկութիւնը: Այս պատճառաւ է որ նախ կարմիր հաւկիթը կ'ուտենք ապա ուրիշ կերակուրներ:

Հայ ժողովուրդին մօտ, Զատիկը շնորհաւորութեան տօն է Յարութիւն, Արթին, Յարութեան անունը կրողներուն համար: Ընտանիքներ զայն կը նշեն ճիշտ սեղաններով եւ ուրախութեամբ, մանաւանդ որ անով կ'աւարտի 48 օրերու վրայ երկարող Մեծ Պահքը:

## Մարտ ամսուան բացատրական տօնացոյց

### Անդաստան

Հայաստանեայց եկեղեցիէն ներս ա ս տ ու ա ծ ա պ ա շ տ ու թ ե ա ն արարողութիւնները բազմաթիւ բաժիններէ կը բաղկանան: Զատկուայ շրջանի նուիրուած եկեղեցական արարողութիւններուն շարքին կայ ծէս մը որ իրայատուկ է իր ձեւին եւ իմաստին մէջ: Այդ Անդաստանն է:

Անդաստանը աշխարհի չորս ծագերու օրհներգութեան նուիրուած արարողութիւն մըն է: Ներկայիս Անդաստանը կը կատարուի եկեղեցիի ատեանէն ներս, այսինքն եկեղեցույ մէջտեղը: Գիրքի ընթերցումէն ետք, բոլոր ներկայ եկեղեցականները շուրջառններով կը զգեստաւորուին: Հանդիսապետը խաչ ու գաւազան կ'առնէ ու կը կենայ եկեղեցիին մէջտեղը: Միւս եկեղեցականները կ'առնեն խաչ կամ Աւետարան, հանդիսաւոր օրերուն նաեւ այլ մասունքներ, եւ կը կենան հանդիսապետին կողքին, դէմքերը դարձած դէպի Արեւելք: Բուրվառակիր սարկաւազը, մոմակալները եւ միւս սարկաւազները վառած մոմեր բռնած կը տեղաւորուին ատեանի եզերքին, եկեղեցականներուն դիմաց դէմքերը դէպի Արեւմուտք: Իսկ դպիրները ձեռքերնին մէկական վառած մոմ՝ կը շարուին բեմին առջեւ, դէմքերը դէպի Արեւմուտք:

Գիտէի՞ր թէ...  
Աւագ ուրբաթ օր որ աւագ շաբթուան ամենէն աւելի սուրբ օրն է պատարագ չի մատուցուիր: Ինչո՞ւ: Որովհետեւ այդ օր Յիսուս ի՛նք «պատարագուեցաւ»՝ այսինքն զոհուեցաւ խաչին վրայ, որպէս կենդանի զոհ:



Գիտէի՞ր թէ...  
Խաւարումի ընթացքին մէկ առ մէկ մարուող մոմերը կը խորհրդանշեն Յիսուսի աշակերտները որոնք մէկ առ մէկ լքեցին զինք, իսկ մէջտեղի մեծ մոմը որ արարողութեան աւարտին կը մնայ վառած՝ Քրիստոսը որ մնացած էր մինակ:

## Աւագ շաբաթուան օրերը

Հայաստանեայց եկեղեցին Չատիկը, կամ Սուրբ Յարութեան տօնը նախորդող շաբաթուան ընթացքին կը յիշատակէ Յիսուսի կեանքի վերջին վեց օրերը որոնց ընթացքին Ան խտացուց ու տարբեր տարբեր ձեւերով արտայայտեց ամբողջ իր առաքելութեան միակ նպատակը՝ մարդոց հանդէպ սէրը: Այս շաբաթը, որ կը նկատուի տարուան ամենէն սուրբը, Աւագ կը կոչուի ու անոր իրաքանչիւր օրը կը կրէ նաեւ աւագ անուն: Այս օրերէն իրաքանչիւրը կը յիշատակէ Յիսուսի կեանքէն առնուած մասնաչափուկ դրուագ մը ու եկեղեցական խորհրդանշական արարողութիւններ կը մատուցուին անոնցմէն իրաքանչիւրին:

### Աւագ Երկուշաբթի

Տերեւազարդ բայց անպտուղ թզենիին անիծման ինչպէս նաեւ տաճարը մաքրելու օրն էր: Այս դրուագներուն մասին կը կարդանք հետեւեալ հատուածներուն մէջ.- Մատթէոս 21.12-23 եւ Մարկոս 11.12-19

### Աւագ Երեքշաբթի

Այս օրուան մասին երկարօրէն կարելի է կարդալ Մատթէոս 21.23-էն սկսեալ: Աւետարանիչը կը ներկայացնէ Յիսուսի առակներէն մի քանին, ինչպէս Երկու որդիներու առակը, չար մշակներուն առակը, հարսանիքի հրաւիրեալներուն առակը: Այս օրուան ընթացքին է նաեւ որ Յիսուս բացատրութիւններ կու տայ հրեաներուն անոնց հարցումներուն շուրջ: Այս ատեն է որ Յիսուս կը փոխանցէ մեծագոյն պատուիրանը «Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ մտքովդ» եւ «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս»:

Հայաստանեայց եկեղեցին Աւագ երեքշաբթի կը յիշէ նաեւ տասը կոյսերու առակը եւ վերջին դատաստանի բացատրութիւնը:

### Աւագ Չորեքշաբթի

Այս օրը Բեթանիայի մէջ կին մը թանկարժէք իւղով կ'օծէ Յիսուս, ինչ որ կը խորհրդանշէ Անոր շուտով հասնելիք մահը: Օծման կը յաջորդէ Յուդայի Յիսուսը մատնելու որոշումը:

### Աւագ Հինգշաբթի

Վերջին ընթրիք, Սուրբ Հաղորդութեան խորհուրդի հաստատում եւ ոտնլուայ: Հինգշաբթի իրիկուն, ժամերգութենէն ետք կը կատարուի «խաւարում» կոչուող արարողութիւնը որուն ընթացքին խորանին վրայ կը վարին 12 մոմեր եւ մէկ մեծ մոմ կը դրուի անոնց կեդրոնը: Աւետարանի իրաքանչիւր ընթերցումէ ետք կը մարուի մէկ մոմ, մինչեւ որ մնայ միայն մէջտեղի մեծ մոմը:

### Աւագ Ուրբաթ

Յիսուսի ձերբակալութեան, խաչելութեան, մահուան ու թաղումի յիշատակի օրն է: Առաւօտեան կը կատարուի ժամերգութիւն ու կը կարդացուին Աւետարանէն հատուածներ որոնք կը բովանդակեն Յիսուսի երկրային կեանքի վերջին ժամերը:

### Աւագ Ծաբաթ

Դժոխքի աներում եւ Ծրագալուցի պատարագի օր: Այդ երեկոյ եկեղեցույ վառած մոմերէն կը վառուին բազմաթիւ մոմեր եւ հաւատացեալներ այդ մոմին լոյսը կը բերեն իրենց տուները իբրեւ խորհրդանշիչ Յիսուսի յարութեան ուրախ անտիսին: Այդ երեկոյ վերջ կը գտնէ նաեւ Մեծ Պահքը:

## Եկեղեցական բառարան

# Ղ ղ

### Ղուկաս

Ղուկաս Յոյն բժիշկ մըն էր, որ աշակերտած էր Պօղոս առաքեալի եւ դարձած անոր հաւատարիմ գործակիցը եւ բազմաթիւ անգամներ անոր հետ ճամբորդած: Ղուկասի Աւետարանը Յիսուսը կը ներկայացնէ որպէս Փրկիչը Իսրայէլի եւ մանաւանդ ամբողջ մարդկութեան: Ղուկասի Աւետարանը նաեւ յատուկ կերպով կ'արտացոլացնէ Աստուծոյ սէրը՝ մանաւանդ խոնարհ դասու մարդոց հանդէպ: Յատկանշականը այն է, որ կարգ մը դրուագներ եւ առակներ միայն Ղուկասի Աւետարանին մէջ կը գտնենք: Օրինակ, Յիսուսի ծնունդին ժամանակ հովիւներուն այցը, պատանի Յիսուսը տանարին մէջ, բարի սամարացիին, անառակ որդիին, փարիսեցիին եւ մաքսաւորը, մեծահարուստն ու աղքատ Ղազարոսը, աշտարակ շինողը եւ ուրիշ առակներ:

# Ճ ճ Մ մ

### Մաս

### Ճգնաւորութիւն

Աստուածապաշտութեան մէջ, ճգնաւորութիւն կը կոչուի ամէն հաւատացեալ քրիստոնէացի թափած ջանքը հեռանալու համար բացասական սովորութիւններէ եւ ձերբազատուելու տկարութիւններէ եւ փոխարէնը ապաշխարելու ու իր կեանքէն ներս շնորհներն ու առաքինութիւնները մշակելու: Ծգնաւորութեան դիմող Հաւատացեալը կը կոչուի ճգնաւոր: Ծգնաւորութեան օրինակ է ծոմապահութիւնը, երկարատեւ աղօթքը, կուսակրօնութիւնը, մեկուսացումը եւ ապաշխարութիւնը:

Եկեղեցւոյ մէջ մաս բաժնելը հնաւանդ սովորութիւն է: Մաս կը նշանակէ օրհնուած բարակ բաղարջ հացի կտոր, որ պատարագի աւարտին կը բաժնուի հաւատացեալ ժողովուրդին պահելու համար նախնական եկեղեցւոյ սիրոյ ճաշի յիշատակը: հաւատացեալներ մասը կը ստանան իրենց աջ ձեռքի երեսին վրայ եւ համբուրելէ ետք բերանին կը դնեն: Մասը խորհրդանիշ է «փշրանք Ս. Սեղանի օրհնութիւններէն» անոր համար մաս բաշխողը կ'ըսէ « սա եղիցի քեզ մաս եւ բաժին ի Ս. Պատարագս», իսկ ստացողը կը պատասխանէ «բաժին իմ եղիցի ի Տէր յաիտեան»: Անոնք որ հաղորդուած են պատարագի ընթացքին՝ մաս առնելու չեն:

## Խօսքն Աստուծոյ Վերջին ընթրիքը՝ Հսկումի ընթերցանութիւն

Հովաս 22.14-23

Երբ ժամը հասաւ, Յիսուս տասներկու առաքեալներուն հետ սեղան բազմեցաւ, եւ ըսաւ անոնց.

- Շատ փափաքեցայ զատկական այս ընթրիքը ձեզի հետ ընել չարչարուելէս առաջ: Բայց կ'ըսեմ ձեզի, թէ այլեւս ասկէ պիտի չուտեմ, մինչեւ որ ճշմարիտ Զատիկը կատարուի Աստուծոյ արքայութեան մէջ:

Ապա գինիի բաժակը առաւ, շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ եւ ըսաւ.


- Առէ՛ք ասիկա եւ իրարու փոխանցեցէք՝ խմելով ասկէ: Կ'ըսեմ ձեզի, թէ ասկէ ետք գինի պիտի չխմեմ, մինչեւ Աստուծոյ արքայութիւնը գայ:

Ապա հաց առաւ, շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ, կտրեց եւ աշակերտներուն տուաւ, ըսելով.

- Ասիկա մարմինս է, որ ձեզի համար տրուած է: Ասիկա կատարեցէք իմ յիշատակիս համար:

Նոյնպէս, ընթրիքէն ետք, բաժակն ալ առաւ եւ ըսաւ.

- Այս բաժակը Աստուծոյ նոր ուխտն է, կնքուած իմ արիւնովս որ ձեզի համար կը հոսի: Բայց ահա զիս մատնողը ինձի հետ սեղան նստած է: Շիշո՞ւ է որ Մարդու Որդին պիտի մեռնի՝ ինչպէս որ Աստուած սահմանած է, բայց վա՛յ այն մարդուն որ զայն կը մատնէ: Անոնք սկսան իրարու հարցնել թէ իրենցմէ ո՛վ պիտի ընէ ատիկա:



# Աստուածաշունչը մանուկներու համար Առաջին Ծաղկազարդը

Երբ Յիսուս մօտեցաւ Բեթանիա գիւղին, որ Ջիթենեաց լերան վրայ կը գտնուէր, իր աշակերտներէն երկուքին ըսաւ՝ «Գացէք այդ գիւղը: Հոն պիտի գտնէք կապուած աւանակ մը, որուն վրայ ոչ մէկ մարդ նստած է: Արձակեցէք զայն, եւ բերէք: Հարցնողին ըսէք՝ Տիրոջը պէտք է»:



Յիսուս հանդիսատեսութեամբ մտաւ Երուսաղէմ, շատեր իրենց հագուստները կը փռէին ճամբուն վրայ ու բարձրաձայն կ'ըսէին՝ «Ովսաննա Բարձեալին . օրհնեալ ըլլաս դուն որ Տէրոջը անունովը կուգաս: Խաղաղութիւն երկինքի մէջ եւ փառք Բարձեալին»:



Յաջորդ օրը Յիսուս իր աշակերտներուն հետ տաճար գնաց: Հոն տեսաւ ապրանք ծախողներ, գնողներ, լումայափոխներ: Այս տեսնելով շատ զայրացաւ եւ բոլորին սկսաւ տաճարէն դուրս վտարել ըսելով՝ «Սուրբ գիրքին մէջ գրուած է՝ տաճարը աղօթքի տուն է, իսկ



դուք զայն աւազակներու տուն  
դարձուցեր էք»:

Այս լսելով աւագ  
քահանաները սկսան Յիսուսը  
սպաննելու միջոցներ փնտռել:  
Սակայն անոնք կը վախնային  
որովհետեւ ամբողջ ժողովուրդը կը  
հետեւէր անոր խօսքերուն:



Յիսուսի աշակերտներէն  
Յուդան, գնաց աւագ  
քահանաներուն քով եւ ընդունեց  
Յիսուսը մատնել երեսուն արծաթ  
դրամի փոխարէն: Անոնք շատ  
ուրախացան:



Զատիկը կը մօտենար:  
Աշակերտները չէին գիտեր ուր  
երթալ, Յիսուսի համար ամէն  
տեղ վտանգաւոր էր: Յիսուս իր  
աշակերտներէն երկուքը  
Երուսաղէմ դրկեց ըսելով՝ «Երբ  
քաղաք մտնէք, պիտի հանդիպիք  
մարդու մը որուն ուսին վրայ  
սափոր մը կայ: Անոր հետեւեցէք  
ու իր գացած տան մէջ հարցուցէք  
թէ ո՞ր է այն սենեակը ուր Յիսուս  
Զատիկի ընթրիքը պիտի ուտէ:  
Հոն պատրաստեցէք սեղանը:»



Երբ Յիսուս եւ իր  
աշակերտները սեղանին շուրջ  
նստան, Յիսուս ըսաւ «Լաւ

գիտցէք, ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ»: Աշակերտները շփոթած իրարու նայեցան: Յիսուս գինի եւ հաց օրհնեց ընթրիքի ընթացքին:

Ընթրիքէն վերջ, Յիսուս իր աշակերտներուն հետ գնաց Գեթսեմանիի պարտէզը, հոն երկար աղօթեց ըսելու «Թող քու կամքդ ըլլայ»: Հրեշտակ մը երեցաւ Յիսուսի եւ զինք քաջալերեց:

Երբ Յիսուս վերադարձաւ եւ աշակերտները քնացած գտաւ, անոնց ըսաւ՝ «Արթուն կեցէք եւ աղօթեցէք որպէսզի փորձութեան չիյնաք»:

Այս միջոցին Յուդան մօտեցաւ իրեն, իր հետ շատ զինուորներ. Յիսուս ըսաւ՝ «Յուդա ինձի համբոյրո՞ւմ մը պիտի մատնես»:

Ապա Յիսուսը բռնեցին եւ մահուան դատապարտեցին:



**Եզակի գիրեր**  
Հայերէն գիրերով Sudoku

ա	բ	գ	ե	դ	ը	թ	է	զ
դ	ե	զ	թ	է	զ	ը	ա	բ
է	ը	թ	զ	ա	բ	ե	զ	դ
թ	ա	բ	դ	զ	ե	է	զ	ը
զ	դ	ե	ը	զ	է	բ	թ	ա
զ	է	ը	բ	թ	ա	զ	դ	ե
ը	թ	ա	է	ե	զ	դ	բ	զ
բ	զ	դ	ա	ը	թ	զ	ե	է
ե	զ	է	զ	բ	դ	ա	ը	թ

	զ			ը	զ			դ
		զ	բ				ը	ե
	ե				դ	զ		
	ը	թ	զ		զ			
զ		զ			ա			ը
ա				է				
	բ	ե		զ				ա
					է		դ	
		դ		թ		ը		զ

Նախորդ «Եզակի գիրեր» ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**

**Փետրուար ամսուան պատասխանները**

Մանկապարտէզի անկիւն  
Տիրոջ, նուիրուի, տատրակ, աղանիի, Սիմոն, Սուրբ Հոգին, Օծեալը, Յիսուսը, գոհաբանեց

Նախակրթարան Ա. Բ. Գ.անկիւն

1. գ. 40
2. դ. 451
3. ա. Զօրավար էր
4. Ղազարոսին
5. Բուն Բարեկենդան
6. գ. Սբ. Ղեւոնդեաց Քահանայից
7. բ. Բարի կեանք
8. Մեծ պահք
9. Արտաքսման
10. Անառակին

Նախակրթարան Դ. Ե. Զ.անկիւն

1. ա. Տեառնընդատաջ
2. գ. 14
3. գ. 40
4. Սբ. Թէոդորոս
5. Սբ. Սահակ Պարթեւ
6. ա. Վարդանանցի յաջորդող Երկուշաբթին բ. Բուն բարեկենդանին

յաջորդող երկուշաբթին

7. Նորահրաշ
  8. Եղիշէ պատմիչ
  9. Արտաքսման
  10. Անառակին
- Երկրորդականի անկիւն
1. Քաղկեդոնի մէջ
  2. Նուարակի մէջ
  3. 14
  4. Առաջատրաց
  5. Առաջատրաց պահքին առաջին 4 օրերը
  6. Յովնան մարգարէի
  7. Կոստանդնուպոլսոյ մէջ 381 ին
  8. 40
  9. Աւետարանք, Եկեղեցին
  10. Սբ. Եղիշէ պատմիչ

# Ո՛րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



**Յիսուսի յաղթական մուտքը Երուսաղէմ  
Այս տարի Ծաղկազարդը Մարտ --- ին է:  
Ամբողջացո՛ւր ըստ Յովհաննէս 12.12- 15**

Երուսաղէմ, Յիսուս, արմատենիի, Ովսաննա՛, Տիրոջ, Սուրբ,  
Զատիկի, աւանակի

Յաջորդ օրը, ժողովուրդի մեծ բազմութիւն մը, որ -----  
տօնին առիթով ----- եկած էր, երբ լսեց թէ ----- Երուսաղէմ  
կու գայ, ----- ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ,  
բարձրաձայն աղաղակելով .

*«-----, օրհնեա՛լ ըլլայ ան՝ որ կու գայ ----- անունով,  
Իսրայէլի թագաւորը»*

Յիսուս էջ մը գտնելով՝ նստաւ անոր վրայ, ինչպէս որ ----- գիրքերուն  
մէջ գրուած է.-

*«Մի՛ վախճար, ո՛վ Երուսաղէմ, Սիոնի՛ աղջիկ. ահա թագաւորը  
քեզի կու գայ իշու մը ----- վրայ նստած»:*

### Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

Անուն: \_\_\_\_\_

1.- Մենք այս տարի Մարտ 8 ին ի՞նչ տօնեցինք:

ա.- Սուրբ Գրիգոր լուսաւորիչի Խոր Վիրապ Մուտքը

բ.- Ղազարոսի Յարութիւնը

գ.- Սուրբ Զատիկ

դ.- Ծաղկազարդ

2.- Գալստեան Կիրակիին յաջորդող Կիրակին կը կոչուի Ծաղկազարդ: Ի՞նչ կը խորհրդանշէ:

ա.- Յիսուսի Երկրորդ Գալուստը:

բ.- Յիսուսի Երուսաղէմ Մուտքը:

գ.- Հրեաներուն Եգիպտոսէն Ելքը:

դ.- Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի Ելն ի Վիրապը:

3.- Ծաղկազարդին յաջորդող Կիրակին ի՞նչ կը կոչուի:

ա.- Սուրբ Զատիկ:

բ.- Կրկնազատիկ:

գ.- Կանաչ Կիրակի:

դ.- Կարմիր Կիրակի:

4.- Ժողովուրդը Յիսուսի Երուսաղէմ մուտքը դիմաւորեց՝

ա.- Վարդերով

բ.- Կաղնիի ճիւղերով

գ.- Մեխակներով եւ շուշաններով

դ.- Արմաւենիի եւ ձիթենիի ճիւղերով

5.- Յուդան ինչպէ՞ս մատնեց Յիսուսը:

ա.- Զինուորներուն հեռուէն մատնանշելով

բ.- Մանրամասնութեամբ նկարագրելով

գ.- Համբուրելով

դ.- Ձեռնուելով

6. Աւագ Հինգշաբթին յիշատակն է:

ա.- Արարչագործութեան

բ.- Տասը կոյսերուն

գ.- Յիսուսի Մատնութեան

դ.- Վերջին ընթրիքին, Ոտնլուայի եւ Խաւարումին:

7. Աւագ Երկուշաբթին յիշատակն է:

ա.- Արարչագործութեան

բ.- Տասը կոյսերուն

գ.- Յիսուսի Մատնութեան

դ.- Վերջին ընթրիքին, Ոտնլուայի եւ Խաւարումին:

8. Աւագ Երեքշաբթին յիշատակն է:

ա.- Արարչագործութեան

բ.- Տասը կոյսերուն

գ.- Յիսուսի Մատնութեան

դ.- Վերջին ընթրիքին, Ոտնլուայի եւ Խաւարումին:

9. Աւագ Չորեքշաբթին յիշատակն է:

ա.- Արարչագործութեան

բ.- Տասը կոյսերուն

գ.- Յիսուսի Մատնութեան

դ.- Վերջին ընթրիքին, Ոտնլուայի եւ Խաւարումին:

10. Յիսուսի խաչելութեան միջոցին ո՞ր աշակերտը ներկայ էր:

ա.- Պետրոս

բ.- Յուդա

գ.- Յովհաննէս

դ.- Թովմաս

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**  
**Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն**

**Անուն:** \_\_\_\_\_

1.- Մենք այս տարի Մարտ 15 ին ինչի՞  
յիշատակը պիտի տօնենք:

Ղազարոսի -----

2.- Գրէ՛ Աւագ շաբթուան օրերուն  
յիշատակը:

ա.- Աւագ Չորեքշաբթի՝ Յիշատակ  
-----

բ.- Աւագ Հինգշաբթի՝ Յիշատակ  
-----

3.- Գրէ՛ Աւագ շաբթուան օրերուն  
յիշատակը:

ա.- Աւագ Ուրբաթ՝ Յիշատակ  
-----

բ.- Աւագ Ծաբաթ՝  
----- Ս. Զատիկի

4.- Գրէ՛ Աւագ շաբթուան օրերուն  
յիշատակը:

ա.- Աւագ Երկուշաբթի՝ Յիշատակ  
-----

բ.- Աւագ Երեքշաբթի՝ Յիշատակ  
-----

5.- Քանի՞ հատ էին իմաստուն կոյսերը:

- ա.- 5
- բ.- 10
- գ.- 7
- դ.- 3

6. Ամբողջացո՛ւր Քրիստոսի խօսքերը  
ըստ Մատթէոս 26.26:

Յիսուս հաց առաւ, օրհնեց, կտրեց եւ  
բաժնեց աշակերտներուն, ըսելով.

- Առէք, կերէք, ասիկա իմ  
----- է:

7. Ամբողջացո՛ւր Քրիստոսի խօսքերը  
ըստ Մատթէոս 26.27:

Ապա առաւ բաժակը, գոհութիւն  
յայտնեց Աստուծոյ եւ տուաւ

աշակերտներուն, ըսելով.  
- Բոլորդ խմեցէք ասկէ. ասիկա իմ  
----- է:

8. Աշակերտներէն ո՞վ չհաւատաց  
Յիսուսի յարութեան:

- ա.- Պետրոս
- բ.- Յուդա
- գ.- Յովհաննէս
- դ.- Թովմաս

9. Ո՞ր աշակերտը ուրացաւ Յիսուսը:

- ա.- Պետրոս
- բ.- Յուդա
- գ.- Յովհաննէս
- դ.- Թովմաս

10. Ո՞ր Աւետարանին մէջ կը  
կարդանք Ղազարոսի Յարութեան  
մասին:

- ա.- Մատթէոս
- բ.- Մարկոս
- գ.- Ղուկաս
- դ.- Յովհաննէս

Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Երկրորդականի անկիւն

Անուն: \_\_\_\_\_

Ո՞ր Աւետարանին շարունակութիւնը կը  
համարուի: \_\_\_\_\_

1.- Ո՞ր Աւետարանին մէջ գրուած է  
տասը կոյսերուն առակը:

ա.- Յովհաննէս, Մարկոս եւ Ղուկաս

բ.- Մատթէոս

գ.- Համատեսական Աւետարաններուն  
մէջ

դ.- Մատթէոս եւ Ղուկաս

6. Որո՞նք են հինգ տաղաւարները:

Գրէ Տօնացոյցի շարքով:

ա.- Սուրբ Ծնունդ

բ.- \_\_\_\_\_

գ.- \_\_\_\_\_

դ.- \_\_\_\_\_

ե.- Խաչվերաց

2.- Յովհաննէս Առաքեալ քանի՞  
ընդհանրական ճամակներ գրեց:

ա. Հինգ

բ. Չորս

գ. Երեք

դ. Երկու

7. Տաղաւարներուն յաջորդող  
Երկուշաբթի օրը Յիշատակն է  
\_\_\_\_\_:

3.- Սուրբ Յարութեան տօնը 35 օրուայ  
շարժականութիւն ունի: Հետեւեալներէն  
որ ժամանակաշրջանին մէջ կարելի է  
Սուրբ Յարութեան տօնը տօնել:

ա.- Մարտ 15 Էն Ապրիլ 18

բ.- Մարտ 22 Էն Ապրիլ 25

գ.- Մարտ 30 Էն Մայիս 3

դ.- Փետրուար 29 Էն Ապրիլ 18

8. Նոր Կտակարանի 27 գիրքերէն  
14ը գրուեցան Պօղոս Առաքեալի  
կողմէ: Թուէ ասոնցմէ այն 4ը որոնք  
ուղուած են անձերու ճշգրիտ  
յաջորդականութեամբ:

ա.- \_\_\_\_\_

բ.- \_\_\_\_\_

գ.- \_\_\_\_\_

դ.- \_\_\_\_\_

4.- Նոր Կտակարանի 27 գիրքերէն  
քանի՞ հատ գրուեցան Յովհաննէս  
Առաքեալի կողմէ:

ա. Հինգ

բ. Չորս

գ. Երեք

դ. Երկու

9. Յիսուս ո՞ր աշակերտին ըսաւ . -  
«Արածէ իմ գառնուկներս»:

ա.- Պետրոս

բ.- Յուդա

գ.- Յովհաննէս

դ.- Թովմաս

5.- Ո՞վ գրեց Նոր Կտակարանի  
հինգերորդ գիրքը:

\_\_\_\_\_

10. Ո՞ր Աւետարանը բոլորէն աւելի  
առաջ գրուած է:

ա.- Մատթէոս

բ.- Մարկոս

գ.- Ղուկաս

դ.- Յովհաննէս

## Ամսուան Տօնացոյց

Մարտ 1: Ծաբաթ՝ Սուրբ Քառասուն Մանկունք Սեբաստիոյ

Մարտ 2: Դատաւորի Կիրակի

Մարտ 8: Ծաբաթ՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ «Մուտն ի Վիրապ»

Մարտ 9: Գալստեան Կիրակի

Մարտ 15: Յիշատակ Ղազարոսի յարութեան

Մարտ 16: Ծաղկազարդ

Մարտ 17: Աւագ Երկուշաբթի Յիշատակ արարչագործութեան

Մարտ 18: Աւագ Երեքշաբթի Յիշատակ տասը կոյսերուն

Մարտ 19: Աւագ Չորեքշաբթի Յիշատակ մատնութեան Տեան

Մարտ 20: Աւագ Հինգշաբթի Վերջին ընթրիք, ոտնլուայ, խաւարում

Մարտ 21: Աւագ Ուրբաթ, կարգ խաչելութեան եւ թաղման

Մարտ 22: Աւագ Ծաբաթ, ճրագալոյց

Մարտ 23: Սուրբ Զատիկ: Յիշատակ յարութեան տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի

Մարտ 24: Երկուշաբթի՝ Յիշատակ Մեռելոց

Մարտ 30: Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ

### «ՄԱՇՏՈՅԻ ԱՐՁԱԳԱՆԳ»Ի

Ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ  
համացանցի վրայ:

Այցելեցէ՛ք

[www.sourphagop.org/mashdots](http://www.sourphagop.org/mashdots)

# Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցույ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Այս թիւով...

Խմբագրական՝

Ինչպէ՞ս ոգեկոչել Մեծ Եղեռնի  
նահատակներուն անմահ յիշատակը:  
Էջ 2

Ապրիլ ամսուան բացատրական  
տօնացոյց: Կանաչ Կիրակի, Կարմիր  
Կիրակի: Էջ 3-4

Նեղութիւններուն օգտակարութիւնը:  
Էջ 5

Եկեղեցական բառարան: Էջ 6

Խօսքն Աստուծոյ: Էջ 7

Աստուածաշունչը մանուկներու համար.  
Յիսուսի Յարութիւնը եւ Համբարձումը:  
Էջ 8-9-10


Եզակի գիրեր: Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը: Էջ 12-13-  
14-15

Ամսուան տօնացոյց, Նկարներ  
Կիրակնօրեայէն: Էջ 16

Ապրիլ 2008

ԺԵ տարի- թիւ 8



Իրարու բերը վերցուցէք եւ  
այդպիսով կատարեցէք  
Քրիստոսի սիրոյ օրէնքը:

Քաղատացւոց 5.13

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակույթ

Խմբագրական

Ինչպե՞ս ոգեկոչել Մեծ Եղեռնի ցախափայտներուն անմահ յիշատակը



## Ապրիլ 24, 1915 - 2008

Ոգեկոչենք Մեծ Եղեռնի ցախափայտներուն անմահ յիշատակը նաե՛լ՝

- Ապրելով Հայադրոշմ կեանք մը,
- Վառ պահելով Հայաստանեայց եկեղեցույ տօներն ու ազգային ավանդույթները,
- Լսելով, մտիկ ընելով ու երգելով մեր Հայանուագ շարականներն ու երգերը,
- Ամուր կառչած մնալով մեր Հայավայել բարի բարքերուն ու սովորույթներուն,
- Կարդալով ու կեանքի վերածելով մեր Հայագրեալ Աստուածաշունչը
- Եւ մանաւանդ՝ ՍԻՐԵԼՈՎ Հայը

Ամբողջ տարուան ընթացքին:

«Պիտի հանեմ ձեզ ձեր գերեզմաններէն . կենդանութեան շունչ պիտի տամ, իմ հոգիս պիտի տամ ձեզի, եւ ձեզի ձեր երկիրը պիտի վերադարձնեմ:» Եզեկիէլ 37.14

**«Մաշտոցի Արձագանգ»**

Հայաստանեայց Եկեղեցույ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ:

Խմբագիր՝ Շողիկ Թորիկեան-Պոլաճեան

Հայաստանեայց Եկեղեցույ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը

Ոստոցիչներ՝ Վերժին Գիւլթանճեան, Թամար Գիգիրեան, Յասմիկ Նաճարեան, Գարուլ Մանուկեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան:

Տնօրէն՝ Թորոս Պապիկեան

## Ապրիլ ամսուան բացատրական տօնացոյց

Հայաստանեայց եկեղեցւոյ տօներէն անոնք որոնք սերտօրէն առնչուած են Սուրբ խաչին եւ եկեղեցիին հետ, կը կոչուին Տէրունի տօներ: Տէրունի տօներուն մէջէն Ս. խաչին վերաբերող բազմաթիւ տօներ կան, ինչպէս Խաչվերացը, Գիւտ խաչը, Վարագայ Սբ. խաչը եւ Խաչի երեսումը: Այս խաչի տօներէն իւրաքանչիւրը առիթ է հաւատացեալներուն համար անդրադառնալու խաչի սրբազան իմաստին ու հաղորդուելու անոր հետ իբր զոհաբերութեան եւ Յիսուսի կեանքին խորհրդանիշ:



Այս տարի, Ապրիլ ամսուան 20-րդ օրը, հայաստանեայց եկեղեցին կը յիշատակէ Ս. խաչի երեսման դրուագը, տեղի ունեցած 351 թուին, այն տարիներուն երբ Կիւրեղ Եպիսկոպոս Երուսաղէմի պատրիարք էր: Այդ տարի, Հոգեգալստեան առտուն ժամը 3-ին, ահաւոր մեծութեամբ լուսաւոր խաչ մը երեցաւ երկինքին վրայ, մէկ ծայրը Գողգոթայի եւ միւս ծայրը Ձիթենեաց լեռան վրայ եւ շատ ժամեր տեսելով՝ տեսնուեցաւ Երուսաղէմի բոլոր բնակիչներէն որոնք զոջումով եւ բարեպաշտութեամբ սկսան եկեղեցիներ վազել, հոն փառք ու գոհունակութիւն յայտնելու համար Աստուծոյ: Այս հրաշալի երեւոյթը անմոռանալի եւ աննախընթաց դէպք մը ըլլալուն համար, այդ թուականէն ի վեր կը մնայ յիշատակութեան արժանի տօն: Հայ եկեղեցին զայն կը տօնէ Ջատկուան յաջորդող 4րդ Կիրակին ու Ջատիկին կապուած ըլլալուն ունի 35 օրերու շարժականութիւն:

Ինչպէս Երուսաղէմի ժողովուրդը 351 թուականին խաչի հրաշալի տեսիլին առջեւ ուղղուեցաւ եկեղեցի փառաբանութեան եւ պաշտամունքի, նոյնպէս ալ մինչեւ այսօր, սովորութիւն կը մնայ այս տօնին առթիւ եկեղեցի երթալ եւ փառք տալ Աստուծոյ:

**Հայաստանեայց  
եկեղեցին  
հարցումներով,  
պատասխաններով**

Հաւատացեալները եկեղեցական ողջոյնը ի՞նչ ձեւով իրարու կը փոխանցեն:


Ողջոյնը եկեղեցականէն կ'առնուի աջահամբոյրով իսկ հաւատացեալներ իրարու կը փոխանցեն հետեւեալ ձեւով.-

Ողջոյն փոխանցողը կը խոնարհի իր դիմացինին ձախ ապա աջ ուսին, այնպէս ինչպէս պիտի ողջագուրուէր եւ ցած ձայնով կ'ըսէ.- «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», իսկ ողջոյն ստացողը կը պատասխանէ .- «Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի»: Եւ այսպէս յաջորդաբար մէկը միւսին:

Ջատկուան Կիրակիներու շարքը:

- Սբ. Ջատիկ
- Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ
- Աշխարհամատրան Կանաչ Կիրակի
- Կարմիր Կիրակի
- Երեսումն Սբ. Խաչի

## Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի



Կանաչ Կիրակի անունը կը տրուի Զատիկուայ Երրորդ Կիրակիին, որ Զատիկէն 15 օր ետք կը հանդիպի եւ Զատիկին հետ 35 օրուան շարժականութիւն ունի:

Աշխարհամատուոն բառը կը գործածուի իբր աշխարհաժողով, բազմութեան յատկացեալ եկեղեցի, եւ այս անունը տրուած է Սիոնի Վերնատան ուր Քրիստոս վերջին զատկական ընթրիքը կատարեց եւ Ս. Հաղորդութեան խորհուրդը հաստատեց, եւ ուր սովորութիւն ըրին առաքեալները հաւաքուիլ Քրիստոսի համբարձումէն ետքը: Այս տեղը հաւանաբար Յովհաննէս Մարկոսի տունն էր՝ ուր աղօթքի կը ժողվուէին նոր հաւատացեալները: Հայոց եկեղեցոյն յատուկ է եկեղեցոյ անուամբ տօներ կատարել. ասոնց գլխաւորն է Աշխարհամատրանը՝ այսինքն Վերնատան քրիստոնէութեան առաջին եկեղեցին ըլլալուն յիշատակը, որ բոլոր քրիստոնէայ եկեղեցիներուն նախատիպն եղաւ եւ եկեղեցոյ նուիրականութեան նշանակը: Աշխարհամատրան օրը Կանաչ Կիրակի ալ կը կոչուի:

## Կարմիր Կիրակի

Այսպէս կը կոչուի յինանց չորրորդ Կիրակին, որ Զատիկէն 22 օր ետքը կու գայ եւ Զատիկն պէս 35 օր շարժականութիւն ունի: Այս անունը բնաւ եկեղեցական ծագում կամ նշանակութիւն չունի, այլ Կանաչ Կիրակի անունին նման զարնանային եղանակէն առնուած ժողովրդական կոչում մըն է, որովհետեւ դաշտերը կանաչնալէն ետքը նախ եւ առաջ կարմիր կակաչներով կը զարդարուին:

## Նեղութիւններուն օգտակարութիւնը

Մեզի համար լաւ է երբեմն կրել նեղութիւններ եւ հակառակութիւններ, որովհետեւ անոնք կը տանին մարդը դէպի իր ներաշխարհը, կը զգացնեն իրեն, թէ պանդուխտ է եւ պէտք չէ իր յոյսը կապէ աշխարհի իրականութիւններուն:

Երբեմն մեզի համար լաւ է կրել հակառակութիւններ եւ կամ մեր մասին խօսին յոռի կամ քիչ նպաստաւոր կերպով, ինչքան ալ բարին ըլլան մեր գործերը եւ դիտաւորութիւնները: Ասոնք կը մարզեն մեզ ըլլալ աւելի խոնարհ եւ զերծ կը պահեն մեզ սնափառութենէ:


Որովհետեւ աւելի եռանդ ունինք ապաւինելու Աստուծոյ մեր սրտին մէջ եւ դուրսը մարդիկ կը խոնարհեցնեն մեզ եւ աննպաստ կը խորհին մեր մասին:

Ասոր համար մարդ պարտական է այնքան ապաւինիլ Աստուծոյ, որ այլեւս չունենայ կարիք փնտռելու մարդկային մխիթարութիւններ:

Երբ բարեացակամ մարդը կը խոովի, կը փորձուի, կը տառապի յոռի մտածումներէն, այն ատեն կ'իմանայ, թէ Աստուած որքան անհրաժեշտ է իրեն, եթէ առանց Աստուծոյ անկարող է բարի գործի:

Այն ատեն տաղտկալի կը թուի իրեն կեանքն երկար, կը ցանկայ որ մահը հասնի որպէսզի մարմինէն ազատ, կարենայ միանալ Քրիստոսի:

Այն ատեն լաւ կը հասկնայ թէ կատարեալ ապահովութիւնը, լիութիւնը խաղաղութան, այս աշխարհէն չեն:



Հատուած՝ «Նմանութիւն Յիսուս Քրիստոսի» գիրքէն, Թովմաս Գեմբացի, Պէլյուս 1997

## Եկեղեցական բառարան

# Յ Ե

### Յայսմաուրք

Յայսմաուրքը մեծածառ գիրք մըն է որ կը պարունակէ սուրբերու վկայութիւնները եւ անոնց վարքերը: Յայսմաուրքէն հատուածներ կը կարդացուին երեկոյեան ժամերգութիւնները սկսելէ առաջ:

Յայսմաուրքի մէջէն կատարուող օրական ընթերցանութիւնները կը սկսին «Յայսմ աուր յիշատակ է» նախադասութեամբ, որ կը նշանակէ «այսօր յիշատակն է»: Այս սկիզբի նախադասութեան կը վերագրուի ամբողջ հատորին կոչումը:

# Ն Ը

### Նշխար

Մասն ու նշխարը եկեղեցու սպասաւորներու կողմէ կը պատրաստուին սպիտակ, մաքուր եւ անխմոր ալիւրով: Նշխարը կ'ըլլայ կլոր ու տափակ որ կը կրէ Յարուցեալ Քրիստոսի պատկերը մինչ մասը բարակ ու կլորակ է երկաթի վրայ եփուած: Տնօրհնէքի եւ այլ առիթներու տրուած նշխարները քահանայէն օրհնուած են:

Համաձայն հին բարեպաշտական սովորութեանց, հաւատացեալները նշխար մը կը կրէին իրենց վրայ ապահով ճամբորդութեան համար, հիւանդութեան պարագային եւ մանաւանդ պահպանուելու համար սատանայական որոգայթներէ:

# Շ 2

### Շուրջառ

Շուրջառը առանց թելերու, կիսաշրջանակաձեւ փայլուն զգեստ մըն է որ կը գետեղուի քահանաներու ուսերուն եւ ճարմանդ կոշուղ Մետաղեայ կապով մը կ'ամրացուի անոնց կուրծքին վրայ:

Շուրջառը քահանային գլխաւոր հանդերձն է: Ան կը ծածկէ քահանային ամբողջ մարմինը, տարածուելով մինչեւ գետին, խորհրդանշելու համար քահանային վրայ երկինքէն իջած պարուրող Աստուածային շնորհն ու զօրութիւնը որ կը պահպանէ զայն ու կ'աջակցի անոր պատարագ մատուցանելու կամ այլ խորհուրդներ կատարելու ընթացքին:

## Խօսքն Աստուծոյ Պօղոս Առաքեալի Կողմէ Կողոսացիներուն գրուած Գամակէն

2.16-3.17

Կարեւորութիւն մի՛ տաք անոնց որոնք ձեզ կը քննադատեն թէ ինչո՛ւ չէք պահեր ուտելու եւ խմելու, տօնակատարութեանց կանոնները. որովհետեւ այդ բոլորը գալիք իրականութեանց շուքն էին, իսկ իրականութիւնը Քրիստոսի մէջ է:

Չըլլայ որ ռեւէ մէկը իր խստակրօնութեամբ, հրեշտակներուն տուած կարեւորութեամբ եւ զանազան բաներու տեսիլքներով ձեզ մոլորեցնէ եւ մրցանակէն զրկէ. որովհետեւ այդպիսիները մարդկային հպարտութենէ տարուած են եւ կ'ուզեն իրենք զիրենք պարտադրել ձեզի: Անոնք կապ չունին Գլուխին՝ Քրիստոսի հետ. մինչդեռ մարմինը՝ Քրիստոսի եկեղեցին, իր բոլոր յօդերով ու կապերով Գլուխին կապուած ու միացած, անկէ կ'առնէ իր աճումը, Աստուծոյ կամքին համաձայն:

Քանի Քրիստոսի հետ մեռաք եւ բնութեան ոյժերու տիրապետութենէն դուրս եկաք, ինչո՛ւ կը շարունակէք ապրիլ այնպէս՝ որպէս թէ ձեր կեանքը աշխարհէն կախում ունենար, եւ կը հնազանդիք մարդոց կողմէ տրուած եւ ուսուցուած պատուիրաններու, ինչպէս. «Մի՛ մօտենար, մի՛ ուտեր, մի՛ դպչիր», եւ այլն: Ասոնք բոլորն ալ բաներ են՝ որոնք գործածութեամբ կը փճանան: Այդպէս պատուիրողները իմաստուն կրնան թուիլ՝ իրենց բարեպաշտական ինքնակամ արտայայտութիւններով, խստակրօնութեամբ եւ մարմինը անխնայ կերպով ճնշելով, բայց այս բաները ռեւէ արժէք չունին եւ միայն մարմինը բաւարարելու կը ծառայեն:

Քանի որ յարութիւն առիք Քրիստոսի հետ, այսուհետեւ ձեր ուշադրութիւնը երկինք դարձուցէք, որովհետեւ հոն է Քրիստոս, Հօր աջ կողմը նստած: Երկնաւոր բաներու մասին խորհեցէք եւ ոչ երկրաւոր բաներու. որովհետեւ դուք այս աշխարհին համար մեռաք, որպէսզի Քրիստոսի հետ միասին ապրիք այն կեանքով որ Աստուած վերապահած է ձեզի: Իսկ երբ Քրիստոս՝ մեր կեանքը՝ յայտնուի, այն ատեն դուք ալ փառքով պիտի յայտնուիք անոր հետ:

Աստուածաշունչը մանուկներու համար

# Յիսուսի Յարութիւնը եւ Համբարձումը

Յիսուս շղթայակապ տարին եւ յանձնեցին Պիղատոսին: Ինչպէս սովորութիւն էր, ամէն Զատիկուայ տօնին, Պիղատոս բանտէն բանտարկեալ մը ազատ կ'արձակէր:

Այդ ժամանակ բանտը Բարաբբա անունով մէկը կար, որ մարդ սպաննած էր:


Պիղատոս հարցուց ժողովուրդին «Ո՞վ կ'ուզէք ազատ արձակել, Յիսուսը թէ Բարաբբան»:

Պիղատոս գիտէր որ Յիսուս անմեղ է բայց քահանաները գրգռեցին ժողովուրդը, որպէսզի պահանջեն Բարաբբայի արձակումը: Այդպէս ալ եղաւ:

Յիսուսը խաչեցին Գողգոթայի լեռան վրայ, ու խաչին վրայ արձանագրեցին «Հրեաներու թագաւորն է»:

Յիսուսի հետ նաեւ խաչեցին երկու աւազակներ: Անոնցմէ մէկը ըսաւ Յիսուսին՝ «Եթէ դուն Քրիստոսն ես, ինքզինքդ ազատէ եւ մեզ ազատէ»:

Իսկ միւսը ըսաւ «Տէ՛ր, յիշէ զիս,



երբ քու թագաւորութեամբդ  
գաս:»

Յիսուս անոր պատասխանեց  
«Վստահ եղիր, այսօր իսկ ինձի  
հետ դրախտի մէջ պիտի ըլլաս»:

Այդ պահուն երկինքը  
խաւարեցաւ, զօրաւոր երկրաշարժ  
մը եղաւ եւ տաճարին վարագոյրը  
պատռեցաւ ու երկու մասի  
բաժնուեցաւ: Յիսուսի դիմաց  
կանգնած զինուորը ըսաւ՝  
«Իսկապէս այս մարդը Աստուծոյ  
Որդին էր»:

Յովսէփ անունով մարդ մը որ  
Արիմաթիա քաղաքէն եկած էր,  
Պիղատոսէն հրաման առաւ, եւ  
Յիսուսի մարմինը պարտէզի  
ժայռափոր գերեզմանի մը մէջ  
դրաւ: Դրան առջեւ զինուորներ  
կեցան:

Կիրակի առտու Մարիամ  
Մագդաղենացին գերեզման եկաւ  
եւ տեսաւ որ քարը վերցուած է,  
ան վազեց աշակերտներուն մօտ  
եւ լուր տուաւ:

Երբ Պետրոս մտաւ գերեզման,  
տեսաւ որ կտաւները որով Յիսուս  
փաթթած էին, այնտեղ են:  
Մարիամ կուլար երբ տեսաւ երկու  
հրեշտակներ որոնք իրեն



հարցուցին «ինչո՞ւ կուլաս», ան պատասխանեց՝ «Տէրս վերցուցեր են գերեզմանէն եւ չեմ գիտեր ուր տարեր են զինք»։ Այն ատեն տեսաւ իր կողքին կանգնած Յիսուսը, բայց կարծեց որ պարտիզպանն է. անոր ըսաւ «Եթէ դուք վերցուցիք զինք ըսէք թէ ուր տարիք»։ Յիսուս ըսաւ «Մարիամ, մի դպչիր ինձի որովհետեւ դեռ Հօրս մօտ՝ երկինք չեմ բարձրացած»։

Այս պատահարէն քիչ ժամանակ ետք Յիսուս երեւցաւ իր աշակերտներուն, բոլորը հաւատացին բացի Թովմասէն որ ուզեց ձեռքերը տեսնել եւ մատները գամերուն տեղերը դնել։ Ութ օր ետք Յիսուս նորէն երեւցաւ եւ Թովմասին ըսաւ՝ «Բեր մատներդ եւ դիր ափերուս վերքերուն վրայ, անհաւատ մի ըլլար այլ հաւատացեալ։ Դուն զիս տեսար ու հաւատացիր, երանի անոնց որոնք առանց տեսնելու կը հաւատան ինձի»։ Անկէ ետք Յիսուս ըսաւ աշակերտներուն «գացէք աշխարհի բոլոր կողմերը եւ վկայեցէք ու քարոզեցէք բոլորին» եւ երկինք համբարձաւ։ Ան բազմեցաւ Աստուծոյ աջ կողմը։ Իսկ աշակերտները ուրախ վերադարձան Երուսաղէմ եւ փառաւորեցին Տէրը։



**Եզակի գիրեր**  
Հայերէն գիրերով Sudoku

բ	գ	է	ե	ը	զ	ա	թ	դ
դ	ա	զ	բ	գ	թ	է	ը	ե
թ	ե	ը	է	ա	դ	զ	գ	բ
ե	ը	թ	զ	բ	գ	դ	ա	է
զ	է	գ	թ	դ	ա	ե	բ	ը
ա	դ	բ	ը	է	ե	զ	գ	թ
գ	բ	ե	դ	զ	ը	թ	է	ա
ը	թ	ա	զ	ե	է	բ	դ	զ
է	զ	դ	ա	թ	բ	ը	ե	գ

գ		բ	է		թ	ը		
դ	ը			գ		թ		
է		թ						
				թ	զ	ա	ը	
			բ		դ		թ	
						զ	ե	
	թ	ա						զ
ե	դ					է		
						ե	դ	ը

Նախորդ «Եզակի գիրեր» ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**

**Մարտ ամսուան պատասխանները**

Մանկապարտէզի անկիւն  
Զատիկի, Երուսաղէմ, Յիսուս,  
արմատենիի, Ովսաննա՛, Տիրոջ, Սուրբ,  
աւանակի

Նախակրթարան Ա. Բ. Գ.անկիւն

1. ա. Սբ. Գրիգոր Լուսաւորիչի խոր Վիրապ մուտքը
2. բ. Յիսուսի Երուսաղէմ մուտքը
3. ա. Սբ. Զատիկ
4. դ. Արմատենիի եւ ձիթենիի ճիւղերով
5. գ. համբուրելով
6. դ. Վերջին ընթրիքին, Ոտնլուայի եւ Խաւարումին
7. ա. արարչագործութեան
8. բ. Տասը կոյսերուն
9. գ. Յիսուսի մատնութեան
10. գ. Յովհաննէս

Նախակրթարան Դ. Ե. Զ.անկիւն

1. Յարութեան
2. ա. մատնութեան, բ. Վերջին ընթրիքին, Ոտնլուայի եւ Խաւարումին
3. ա. Խաչելութեան, բ. Թաղման


4. ա. արարչագործութեան, բ. Տասը կոյսերուն

5. ա. 5
6. մարմինս
7. արիւնս
8. դ. Թովմաս
9. ա. Պետրոս
10. գ. Ղուկաս

Երկրորդականի անկիւն

1. բ. Մատթէոս
2. գ. Երեք
3. բ. Մարտ 22 էն Ապրիլ 25
4. ա. Հինգ
5. Սբ. Ղուկաս Աւետարանիչ, Ղուկասի Աւետարանին
6. Սուրբ Զատիկ, Ալլակերպութիւն, Վերափոխումն Սբ. Աստուածածնի
7. Ա. եւ Բ. Տիմոթէոս, Տիտոս, փիլիմոն
8. Մենելոց
9. ա. Պետրոս
10. Մարկոս

Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր ըստ Ղուկաս 24: 50-53 ի

օրհնեց, երկինք, երկրպագեցին, Երուսաղէմ,  
զԱստուած, Բեթանիա, բաժնուեցաւ

Յիսուսի համբարձումը այս տարի Մայիս ----- ին է:

Ապա տարաւ զանոնք մինչեւ ----- եւ ձեռքերը  
վեր բարձրացնելով՝ ----- զանոնք: Եւ մինչ  
կ'օրհնէր, ----- անոնցմէ, դէպի  
----- բարձրանալով:

Անոնք ----- Յիսուսի եւ մեծ ուրախութեամբ  
վերադարձան ----- : Ամէն օր տաճարին  
մէջ էին՝ գովելով ու օրհնաբանելով ----- :

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

Անուն: \_\_\_\_\_

1.- Ի՞նչ կը կոչուի Կանաչ Կիրակիին յաջորդող Կիրակին:

- ա.- Կարմիր Կիրակի
- բ.- Դեղին Կիրակի
- գ.- Կապոյտ Կիրակի
- դ.- Կրկնազատիկ

2.- Ի՞նչ կը կոչուի Յիսուսի Յարութեան յաջորդող Կիրակին:

- ա.- Բ. Ծաղկազարդ
- բ.- Ծաղկազարդ
- գ.- Զատիկ
- դ.- Կրկնազատիկ

3.- Յիսուս իր յարութենէն քանի՞ օր ետք համբարձաւ:

- ա.- 3
- բ.- 48
- գ.- 30
- դ.- 40

4.- Յիսուսի Համբարձումը շաբթուան ո՞ր օրը տեղի ունեցաւ:

- ա.- Հինգշաբթի
- բ.- Երկուշաբթի
- գ.- Երեքշաբթի
- դ.- Չորեքշաբթի

5.- Հաղորդութիւն ստանալէ առաջ պայման է որ:

- ա.- Մոմ վառենք:
- բ.- Մեր մեղքերը խոստովանինք եւ ծոմ պահենք:
- գ.- Լաւ ճաշ կերած ըլլանք:
- դ.- Ցած ձայնով երգենք

6. Այս տարի Ապրիլ 20 ին ի՞նչ կը տօնենք:

- ա.- Խաչվերաց
- բ.- Երեւումն Սուրբ Խաչի
- գ.- Գիւտ Խաչի
- դ.- Վարագայ Խաչ:

7. Պատարագի ընթացքին երբ ո՞ր երգը երգուի իրարու ողջոյն կու տանք:

- ա.- Սուրբ Աստուած
- բ.- Մարմին Տէրունական
- գ.- Քրիստոս ի մէջ մեր
- դ.- Հաւատամք

8. Ողջոյն տուողը ի՞նչ կ'ըսէ:

Քրիստոս -----

9. Ողջոյն ստացողը ի՞նչ կ'ըսէ:

Օրհնեալ է -----  
-----

9. Վերի նկարին մէջ գծիկով մը նշէ Խաչին Բունը

10. Գրէ՛ Սուրբ Զատկուան յաջորդող կիրակիներուն շիտակ շարքը:

- ա.- Սուրբ Զատիկ
- բ.- Նոր -----
- գ.- Կ----- Կիրակի
- դ.- Կ----- Կիրակի
- ե.- Ե----- Սբ. Խաչի

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**

**Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն**

**Անուն:** \_\_\_\_\_

1.- Յայտնաւորքը կ'ընդգրկէ «Աւուր» բառը: Աւուր ի՞նչ կը նշանակէ:

-----

2.- Ի՞նչ կը կոչուի Յիսուսի Յարութեան յաջորդող Կիրակին:

----- կամ  
--- -----

3.- Յիսուս իր յարութենէն քանի՞ օր ետք համբարձաւ:

-----

4.- Յիսուսի Համբարձումը շաբթուան ո՞ր օրը տեղի ունեցաւ:

-----

5.- Հաղորդութիւնը կը պատրաստուի . . . . .

Ն-----ով եւ անապակի -----ով

6. Այս տարի Մեծ Եղեռնին քանի՞երորդ ամեակն :

-----

7. Ո՞վ օգնեց Յիսուսի խաչը մինչեւ Գողգոթա բարձրացնելու ընթացքին:

- ա.- Սիմոն Կիրենացի
- բ.- Յովսէփ Արիմաթեացի
- գ.- Բարաբաս
- դ.- Պօղոս

8. Ո՞վ նոր փորուած գերեզման մը տուաւ որպէսզի Յիսուսը անոր մէջ թաղուի:

- ա.- Սիմոն Կիրենացի
- բ.- Յովսէփ Արիմաթեացի
- գ.- Բարաբաս
- դ.- Պօղոս

9. Ո՞ր ոճրագործը ազատ արձակուեցաւ եւ Յիսուս դատապարտուեցաւ մահուան:

- ա.- Սիմոն Կիրենացի
- բ.- Յովսէփ Արիմաթեացի
- գ.- Բարաբաս
- դ.- Պօղոս

10. Ո՞վ «Հեթանոսաց Առաքեալ» կոչուեցաւ :

- ա.- Սիմոն Կիրենացի
- բ.- Յովսէփ Արիմաթեացի
- գ.- Բարաբաս
- դ.- Պօղոս

**Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Երկրորդականի անկիւն**

**Անուն:** \_\_\_\_\_

1. Պօղոսի ո՞ր նամակը կը պարունակէ Սիրոյ գլուխը:

- ա.- Հռոմայեցիներուն 13
- բ.- Կորնթացիներուն Ա. 13
- գ.- Կորնթացիներուն Բ. 13
- դ.- Տիտոս 13

2. Հետեւեալէն ո՞ր մէկը անձի մը անունն է:

- ա.- Կորնթոս
- բ.- Թեսաղոնիկէ
- գ.- Փիլիպպէ
- դ.- Տիտոս

3. Հետեւեալ առաքեալներէն ո՞վ գրած է Նոր կտակարանի 27 գիրքերուն մեծ ամասնութիւնը:

- ա.- Պետրոս
- բ.- Պօղոս
- գ.- Յակոբոս
- դ.- Յովհաննէս

4. Հետեւեալներէն ո՞վ ընդհանրական նամակ չէ գրած:

- Ա ) Պետրոս
- Բ ) Պօղոս
- Գ ) Յակոբոս
- Դ ) Յովհաննէս

5. Ի՞նչ է ընդհանրական նամակներուն թիւը:

- ա.- 5
- բ.- 6
- գ.- 7
- դ.- 8

6. Հետեւեալներէն որո՞նք միայն մէկ

հատ ընդհանրական նամակ գրած են:

- ա.- Յակոբոս եւ Յուդա
- բ.- Պետրոս եւ Յովհաննէս
- գ.- Պետրոս եւ Յուդա
- դ.- Յակոբոս եւ Յովհաննէս

7. Պօղոսի 14 նամակներէն քանի՞ հատը ուղղուած է անձերու:

- ա.- 5
- բ.- 6
- գ.- 7
- դ.- 4

8. Նոր Կտակարանի վերջին գիրքը գրող առաքեալը քանի՞ ուրիշ գիրքեր գրած է նոր կտակարանի մնացեալ 26 գիրքերէն:

- ա.- 5
- բ.- 6
- գ.- 7
- դ.- 4

9. Ո՞ր գրուած է «հաւատքը առանձինն՝ առանց գործերու՝ մեռած է»:

- ա.- Յակոբոս 2.17
- բ.- Յուդա 2.17
- գ.- Ա. Պետրոս 2.17
- դ.- Բ. Պետրոս 2.17

10. Ո՞վ ըսաւ «Գալով ինձի, քա՛ւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծեմամ»:

- ա.- Պետրոս
- բ.- Պօղոս
- գ.- Յովհաննէս
- դ.- Յակոբոս

# Ապրիլ Ամսուան Տօնացոյց

**6:** Կիրակի՝ Աշխարհամատրան Կանաչ Կիրակի

**7:** Երկուշաբթի՝ Աւետումն Սբ. Կոյսին

**13:** Կիրակի՝ Կարմիր Կիրակի

**20:** Կիրակի՝ Երեւումն Սբ. Խաչի

**24:** Հինգշաբթի՝ **93**-րդ Տարեդարձ Հայոց Ցեղասպանութեան



Նկարներ՝

Մեր Դպրոցի Զատիկուան օրուան խաղերէն



«ՄԱՇՏՈՅԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ համացանցի

վրայ:

Այցելեցէ՛ք

[www.sourphagop.org/mashdots](http://www.sourphagop.org/mashdots)

# Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցույ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ

## Այս թիւով...

Խմբագրական՝

Առաւելագոյնէն մէկ աստիճան անդին... Էջ 2

«Երկնաւոր Գահատակ եւ կոյսեր իմաստուն ... » Մայիս 19-20: Էջ 3

Ինչո՞ւ հայեր խաչը կը համբուրեն միշտ: Էջ 3

Հոգեգալուստ կամ Սուրբ Հոգիի գալստեան տօն՝ Մայիս 11: Էջ 4

Յիսուսի համբարձումը: Էջ 5

Եկեղեցական բառարան: Էջ 6

Խօսքն Աստուծոյ: Էջ 7

Աստուածաշունչը մանուկներու համար. Յիսուս կը քալէ ջուրին վրայէն: Էջ 8-9-10

Եզակի գիրեր: Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը: Էջ 12-13-14-15

Կարճ լուրեր կիրակնօրեայէն: Էջ 16

Մայիս 2008

ԺԵ տարի- թիւ 9



Հաստատ կեցիր քու սորված բաներուդ վրայ, որոնց ճշմարտութեան վստահ ես:

Բ. Տիմոթէոսի 3.14

Խմբագրական

Առաւելագոյնէն մէկ աստիճան անդին . . .

Մարդ արարածին ծանրաբեռնուած եւ երբեմն բնականէն աւելի լեցուն առօրեան մշտական փորձի մը կարելի է նմանցնել, փորձ մը որուն ընթացքին անհատը կը կանչուի չափելու եւ կշռելու ինքն իր անհատական զանազան տեսակի սահմանները: Այսպիսով, առօրեայի ընթացքին, փորձի կ'ենթարկուին մեր համբերութեան սահմանները, մեր դիմադրականութիւնը, մեր նեղութիւններու դէմ դնելու կարողութեան տարողութիւնը, մեր տարբերութիւններ ընդունելու կարողութիւնը, եւայլն:

Մեզմէ իւրաքանչիւրը ունի իրեն յատուկ սահմաններ որոնք կու գան ուրուագծելու մեր ամէնօրեայ գործունէութեան, մտածելակերպի եւ գոյութեան ոճը: Թէեւ մեզմէ իւրաքանչիւրին սահմանները տարբեր են, բոլորս ալ կ'ընդունինք թէ անպատճառ եւ անխուսափելիօրէն ունինք, անխտիր, մեր սահմանները: Երբ կացութիւն մը մեզ կը դնէ դէմ առ դէմ մեր անձնական սահմաններէն մէկուն հետ, մենք կանք կ'առնենք, մեր գործը, ճիգը, կացութիւնը կը դադրեցնենք ու պատճարաբանելով թէ «ասկէ աւելին չենք կրնար», կը կենանք ճիշդ հոն, մեր սահմանին առջեւ:

Ընդունելով մէկտեղ իբրեւ մարդ արարածներ մեր սահմանաբակուած ըլլալը, մեզի այնպէս կը թուի թէ Աստուած մեզ կարծես պարգեւած է նոյն ատեն, մեր մարդկային սահմանները ամէն անգամ մէկ փոքր չափով անդին հրելու եւ մէկ փոքր չափ աւելին ընելու զոյգ շնորհներով:

Մայիս ամսուան ընթացքին յիշատակուող Մայրերու օրը, առանց միակը ըլլալու, վերոյիշեալ իրողութիւնը լաւապէս մարմնացնող օրինակ մըն է: Այսպէս, մայր մը իր բազմաթիւ պարտականութիւնները եւ պատասխանատուութիւնները ամբողջացնելու ընթացքին շատ յաճախ կը հասնի իր մարդկային սահմաններուն ճի'շդ առջեւ, բայց կարծես մղուած աստուածատուր յատուկ շնորհով մը, մի'շտ ալ կը յաջողի մէկ չափ աւելին ընել, մէկ անգամ ե'ւս համբերել, մէկ անգամ ե'ւս դիմանալ: Ոչ միայն մայրերը, անշուշտ, բայց մայրերը յատկապէս:

Մարդկային սահմանները գերազանցելու բարի փորձերը մեզմէ իւրաքանչիւրին տրամադրութեան տակ կը գտնուին: Մեզմէ իւրաքանչիւրին կը մնայ գիտակցիլ թէ Աստուած մեզ ստեղծած է բարին գործելու եւ խորհելու համար եւ կեանքի այս երկու ուղեգիծները իրականացնելու համար բոլորս ալ փորձելու ենք, օրինակ առնելով մայրերէն, մի'շտ մեր լաւագոյնէն մէկ չափ աւելին տալ, մեր առաւելագոյնէն մէկ չափ անդի'ն թեւակոխել:

«Մաշտոցի Արձագանգ»  
Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ:  
Խմբագիր՝ Շողիկ Թորիկեան-Պոյաճեան  
  
Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը  
Ուսուցիչներ՝ Վէրժին Գիւլթանեան, Թամար Գիւլիբեան, Յասմիկ Նաճարեան, Գարոլ Մանուկեան, Շողիկ Նաճարեան, Յասմիկ Գանաճեան:  
Տնօրէն՝ Թորոս Պապիկեան

« Երկնաւոր նահատակ  
եւ կոյսեր իմաստուն . . . »  
Մայիս 19-20

Մեզմէ ով ծանօթ չէ Հռիփսիմեանց ու Գայանեայց կոյսերու նահատակութեան պատմութեան: Անոնք իրենց նահատակութեան շնորհիւ դարձած են քրիստոնէական հաւատքի վկայութիւններն ու տօնելի նահատակները:

Հռիփսիմեանց կոյսերը առաքինազարդ վանական կեանք կը վարէին Հռոմի մէջ, իրենց հոգեւոր մայրապետ Գայիանէ կոյսի առաջնորդութեամբ: Խուսաբելով հռոմէացի Դիոկղետիանոս կայսրի հալածանքներէն եկած ու հաստատուած են Հայաստան, Վաղարշապատի Հնձանք կոչուած վայրը: Սակայն հոն ալ հալածանքի ենթարկուելով, այս անգամ օրին տակաւին կոապաշտ Տրդատ թագաւորի հրամանով ու անոր իսկ հրահանգով՝ նահատակուած:

Կ՛ըսուի թէ սրբուհիներու մահէն 9 օր վերջ Գրիգոր Լուսաւորիչ դուրս եկաւ խոր Վիրապէն ու ինք ամփոփել տուաւ անոնց մարմինները: Անոնց յիշատակին է որ կառուցուած են Էջմիածնի Սուրբ Հռիփսիմէ եւ Սուրբ Գայիանէ վանքերը:



**Հայաստանեայց եկեղեցին  
հարցումներով, պատասխաններով**

Ինչո՞ւ հայեր խաչը կը համբուրեն միշտ:

Հայ քրիստոնէաներ կը մեծարեն Սուրբ Խաչը, որովհետեւ անով մեր փրկութիւնը իրագործուեցաւ: Պօղոս Առաքեալ կը գրէ.- « Գալով ինձի, քա՛ն լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ...»

Քրիստոսով խաչը դարձաւ զոհողութեան եւ փրկագործութեան խորհրդանիշ: Հայ եկեղեցու սուրբ Խաչի նուիրուած շարականները այնքան գեղեցկօրէն կը բանաձեւեն այս ճշմարտութիւնը, որ Հայ հաւատացեալը իր սէրն ու երկիրաւորութիւնը ֆիզիքապէս եւ զուգորդելով անոր՝ կը համբուրէ խաչը:

## Հոգեգալուստ Կամ Սուրբ Հոգիի գալստեան տօն Մայիս 11

«Բայց Միսիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ հայրս ձեզի պիտի դրկէ իմ անունովս, անհկա ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի:»

Այսպէս կը խոստանար Քրիստոս իր աշակերտներուն վերջին ընթրիքի ընթացքին: Ըստ Առաքեալներու գործերը գիրքին, այս «գալուստը» իրականացած է Քրիստոսի յարութենէն յիսուն օր վերջ: Նշա՞նք. «Բոլոր ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:»

Հոգեգալստեան տօնը կը գուգադիպի հրեաներուն Պենտէկոստէ տօնին հետ, որ յունարէնով կը նշանակէ «յիսուն օր»: Իրապէս ալ հրեաները, իրե՛նք եւս, Սուրբ Զատիկէն յիսուն օր վերջ տասնաբանեայ օրէնքներու ստացման առթիւ յատուկ յիշատակութեան օր ունին՝ Պենտէկոստէն:

Հոգեգալստեան ամենէն աւելի իւրայատուկ դէպքը լեզուափոխութիւնն է, կամ Քրիստոսի աշակերտներուն տարբեր տարբեր լեզուներ խօսելու կարողութիւնը: Աւետարանը այսպիսի լեզուափոխութեան երկու դրուագներ կը պարունակէ:

Առաջինը Հին Կտակարանին մէջ երբ Բաբելոնի աշտարակի շինութեան ընթացքին գործաւորներու լեզուները կը խառնուին ու անոնք այլեւս զիրար չեն հասկնար: Երկրորդ դրուագը Նոր Կտակարանին մէջ յիշատակուող, երբ մարդիկ կը սկսին տարբեր տարբեր լեզուներ խօսիլ բայց բոլորն ալ կը վկայեն Աստուծոյ մեծագործութիւններուն մասին:



**«Հոգեգալուստ»  
Մանրանկար 13-րդ դարի  
կէսին Կիլիկիոյ մէջ  
ընդօրինակուած «Սմբատ  
Սպարապետի Աւետարան»  
էն**

### Յիսուսի համբարձումը

*«Ապա տարաւ զանոնք մինչեւ Բեթանիա եւ ձեռքերը վեր բարձրացնելով՝ օրհնեց զանոնք: Եւ մինչ կ'օրհնէր, բաժնուեցաւ անոնցմէ, դէպի երկինք բարձրանալով: Անոնք երկրպագեցին Յիսուսի եւ մեծ ուրախութեամբ վերադարձան Երուսաղէմ: Ամէն օր տաճարին մէջ էին գովելով ու օրհնաբանելով զԱստուած:»*

Ահա թէ ինչ ձեւով կը պատմուի Յիսուսի համբարձման դրուագը Ղուկասի աւետարանի վերջին տողերուն մէջ:

Համբարձում կը նշանակէ «բարձրացում»: Համբարձումը Յիսուսի յարութիւն առած ու փառաւորուած մարմնով երկինք բարձրանալու եւ Հայր Աստուծոյ աջ կողմը բազմելու յիշատակման տօնն է, որ կը զուգադիպի Սուրբ Յարութեան կամ Զատիկէն քառասուն օր վերջ, Հինգշաբթի օրով: Հայաստանեայց եկեղեցոյ եւ հայ ժողովուրդի կողմէ ամենէն աւելի ուրախ տօներէն մէկը կը նկատուի այս որովհետեւ անով Յիսուս անգամ մը եւս կը հաստատէր յաիտենական կեանքի գոյութիւնը ու կը համբարձար, կը բարձրանար երկնաւոր հօր մօտ բարեխօսելու մարդկութեան համար:

Յարութենէն ետք, Յիսուս քառասուն օրերու ընթացքին կը յայտնուի Իր աշակերտներուն, վերստին կը հաստատէ Իր յարութիւն առած ըլլալը ու կը խօսի անոնց երկնքի արքայութեան մասին ու կ'ուսուցանէ թէ ինչպէս պէտք է քարոզեն Աւետարանը: Քառասուներորդ օրը Տէրը կը աշակերտներուն հետ կը բարձրանայ, անգամ մը եւս, ձիթենեաց լերան գագաթը ու կը յայտնէ անոնց թէ «երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուիք եւ իմ վկաներս պիտի ըլլաք, Երուսաղէմի, Հրէաստանի եւ Սամարիային մէջ, եւ մինչեւ աշխարհի ծայրամասերը»: Երբ ան այս խօսքերը կ'արտասանէր, աշակերտները ապշահար կը նային թէ ինչպէս Յիսուս երկինք կը բարձրանայ մինչեւ որ ամպերը կը ծածկեն զինք աշակերտներու տեսողութենէն:


Համբարձման օրով Քրիստոսի տուած այս պատուիրանին համաձայն է ահա, որ անոր առաքելներէն երկուքը՝ Թադէոսն ու Բարթողիմէոսը կու գան Հայաստան քարոզելու եւ հոն հիմնելու մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին:



**«Համբարձում»  
Մանրանկար 1287-ի  
Կիլիկիոյ «Ակներ»  
պատկերազարդուած  
Աւետարանէն**

## Աղօթք յաջողութենէ մը ետք

Բարերար Աստուած, միայն դո՛ւն ես որ զիս քու բարիքներովդ կ'ողողես: Կ'օրհնաբանեմ քեզ եւ շնորհակալութիւն կը յայտնեմ այն բոլոր բարիքներուն համար որ առատօրէն անարժանիս կը պարգեւես քու սիրոյ գանձերէդ: Կը փառաւորեմ քեզ եւ ամբողջ սրտովս գոհութիւն կը յայտնեմ, միշտ եւ ամէն բանի համար, եւ ամէն բանէ աւելի կը խնդրեմ որ, քու արքայութիւնդ, արդարութիւն եւ իմաստութիւն շնորհես ինձի, որպէսզի կարենամ լաւապէս մատակարարել ձրիօրէն քու տուած պարգեւներդ կանուխէն խորհելով եւ պատրաստուելով ապագայ ձախորդութեանց, եւ ըստ այնմ յօժարակամ ուրախութեամբ կարօտեալներուն տամ ինչ որ պէտք է իրենց, ինչպէս դուն կը բաւարարես իմ բոլոր պէտքերս:



Միշտ քու երկիւղիդ, սուրբ օրէնքիդ եւ արդարութեանդ մէջ պահէ զիս, որպէսզի չըլլայ որ հպարտանամ եւ անհաւատ դառնամ այս անցաւոր հարստութիւններով, որովհետեւ այս կեանքի մէջ չկայ կայուն բան եւ վիճակ, եւ չե՛մ գիտեր թէ վաղը ինձի ի՞նչ կը բերէ: Հետեւաբար կ'աղաչե՛մ, քու բարի պարգեւներովդ հետ միասին, նաեւ խոնարհ, հեզ եւ գթասիրտ հոգի մը տուր ինձի, որպէսզի քու կամքիդ եւ սուրբ օրէնքիդ համաձայն ապրիմ, եւ նոյնիսկ երբ ձախորդութեան եւ չքաւորութեան, վիշտերու եւ տագնապներու մատնուիմ, կարենամ տոկալ եւ կրել քաջութեամբ, անտրտունջ եւ գոհունակ սրտով, միշտ շնորհակալութիւն յայտնելով քու սուրբ կամքիդ համար. որովհետեւ քեզմէ՛ է ամէն բան, եւ դո՛ւն է որ կը հատուցանես, մեր գործերուն եւ մտածողութեան համաձայն: Քեզի փառք յաիտեանս: Ամէն:

### Խոնարհութիւն խնդրելու աղօթք

Սորվեցո՛ւր մեզի, ով Տէր, որ տեսնենք եւ օգտագործենք ծառայութեան ամէն պատեհութիւն. տանք՝ առանց փոխարժէքը հաշուելու, պայքարինք՝ առանց վիրաւորելու, աշխատինք՝ առանց հանգիստ փնտռելու, ծառայենք՝ առանց վարձատրութիւն ակնկալելու. այն գիտակցութեամբ՝ թէ քու կա՛մքդ է որ կը կատարենք: Ամէն:

*Ս. Բարսեղ Կեսարացի*

## Խօսքն Աստուծոյ

### Մի՛ վատնէք Աստուծմէ ձեր ստացած շնորհքը...

*Բ. Կորնթացիներուն 6.1-10*

Արդ, որովհետեւ Աստուծոյ գործակիցներն ենք, կ'աղաչենք ձեզի, մի՛ վատնէք Աստուծմէ ձեր ստացած շնորհքը: Որովհետեւ Աստուած կ'ըսէ. -

«Երբ յարմար ժամանակը եկաւ՝ լսեցի քեզ,  
երբ փրկութեան օրը հասաւ, օգնեցի քեզի»:

Ահա հիմա՛ է այդ յարմար ժամանակը. հիմա՛ է փրկութեան օրը:

Ոեւէ բանով պատճառ մի՛ ըլլաք որ Աստուծոյ գործը խափանուի կամ վարկաբեկուի. այլ՝ բոլոր պարագաներուն ալ դուք ձեզ ցոյց տուէք որպէս Աստուծոյ պաշտօնեաներ, մեծ համբերութեամբ յանձն առնելով նեղութիւնը, վիշտը, չարչարանքը, ծեծը, բանտը, խոտարարներու վայրագութիւնները, յոգնութիւնը, անքնութիւնը, անօթութիւնը: Այս բոլորը տարէք՝ մաքուր սրտով, գիտակցօրէն, համբերատարութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, ճշմարտութիւնը քարոզելով, Աստուծոյ զօրութեամբ եւ արդարութեամբ զինուած՝, չարին դէմ յարձակելու եւ ինքզինք պաշտպանելու համար: Մի՛ այլայլիք՝ ո՛չ փառքէն եւ ո՛չ անարգանքէն, ո՛չ գովասանքէն եւ ո՛չ մեղադրանքէն:

Մարդիկ մոլորած թող ըսեն մեզի.

մենք գիտենք թէ ճշմարտութենէն չենք շեղած:

Թող չուզեն մեզ ճանչնալ.

մենք գիտենք թէ մեզ լաւ կը ճանչնան:

Թող մեզ պատժապարտ համարեն.

մենք գիտենք թէ մահուան դատապարտութենէն ազատած ենք:

Թող մեր կեանքը տխուր կարծեն.

մենք միշտ ուրախ ենք:

Աղքատ թող սեպեն.

մենք շատերու կեանքերը կը ճոխացնենք:

Այո՛, կը թուի թէ ոչինչ ունինք,

մինչդեռ ամէն ինչ ունինք:

# Աստուածաշունչը մանուկներու համար Յիսուս կը քալէ ջուրին վրայէն

Յիսուս 5000 մարդ կերակրեց հինգ հացով եւ երկու ձուկով։ Այնչափ ժողովուրդ կար շուրջը, որ ան ստիպեց աշակերտներուն որ անմիջապէս նաւակ ելլեն եւ լիճին միւս կողմը անցնելով զինք հոն սպասեն։

Լիճին վրայ աշակերտները մեծ փոթորիկի մը հանդիպեցան եւ զօրաւոր հովերուն դէմ նաւարկելու դժուարութիւն ունեցան։

Այս տեսնելով Յիսուս ջուրին վրայէն քալելով անոնց քով գնաց։



Երբ աշակերտները ջուրին վրայէն քալող շուքը տեսան, կարծեցին որ ուրուական մըն էր եւ շատ վախցան: Սակայն Յիսուս անմիջապէս խօսեցաւ եւ ըսաւ՝ «Քաջ եղէք, ես եմ, մի վախնաք»:



Պետրոս ըսաւ՝ «Տէր, եթէ դուն ես՝ հրամայէ որ ջուրին վրայէն քալելով քովդ գամ:»



Յիսուս ըսաւ «Եկուր»: Պետրոս նաւակէն իջաւ եւ ջուրերուն վրայէն քալելով սկսաւ երթալ դէպի Յիսուս: Բայց տեսնելով հովին սաստկութիւնը՝ վախցաւ ու բարձր ալիքներուն սկսաւ նայիլ վախով: Ան հազիւ գլուխը դարձուցած էր եւ



ալ չէր նայէր Յիսուսի  
 սկսաւ ընկղմիլ ու  
 պռուաց՝  
 «Տէր ազատէ զիս»:  
 Յիսուս անմիջապէս  
 ձեռքը երկարեց, զինք  
 բռնեց ու ըսաւ  
 «Թերահաւատ, ինչո՞ւ  
 կասկածեցար»:

Այն ատեն հովը  
 դադրեցաւ, նաւակի մէջ  
 գտնուող աշակերտները  
 երկրպագեցին Յիսուսի  
 եւ ըսին «Իսկապէս որ  
 դուն Աստուծոյ Որդին  
 ես»:



**Եզակի գիրեր**  
Հայերեն գիրերով Sudoku

գ	ա	բ	է	դ	թ	ը	զ	ե
դ	ը	զ	ե	գ	բ	թ	է	ա
է	ե	թ	ը	զ	ա	դ	բ	գ
բ	է	ե	գ	թ	զ	ա	ը	դ
ա	զ	ը	բ	ե	դ	գ	թ	է
թ	գ	դ	ա	ը	է	զ	ե	բ
ը	թ	ա	դ	է	ե	բ	զ	գ
ե	դ	գ	զ	բ	ը	է	ա	թ
զ	բ	է	թ	ա	գ	ե	դ	ը

ա	գ		է		թ			
դ			ե	բ	ը	ա		
ե	ը					դ	է	թ
թ		ը						
	դ		գ		զ		ը	
						բ		զ
ը	ա	է					բ	դ
		ե	դ	ը	բ			ա
			զ		ա		թ	ը

Նախորդ «Եզակի գիրեր» ուն  
լուծումը

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**

**Ապրիլ ամսուան պատասխանները**

Մանկապարտէզի անկիւն

1. Բեթանիա, օրհնեց, բաժնուեցաւ, երկինք, երկրպագեցին, Երուսաղէմ, զԱստուած
- Նախակրթարան Ա. Բ. Գ.անկիւն
1. ա. Կարմիր Կիրակի
2. բ. Բ. Ծաղկազարդ
3. դ. 40
4. ա. Հինգշաբթի
5. բ. Մեր մեղքերը խոստովանինք եւ ծով պահենք
6. բ. Երեւումն Սուրբ Խաչի
7. գ. Քրիստոս ի մէջ մեր
8. Ի մէջ մեր յայտնեցաւ
9. յայտնութիւնը Քրիստոսի
10. Կիրակի, Կանաչ, Կարմիր, Երեւումն

Նախակրթարան Դ. Ե. Զ.անկիւն

1. օր
2. Կրկնազատիկ կամ Նոր Կիրակի
3. 40
4. Հինգշաբթի
5. Նշխարով եւ անապակ գինիով

6. 93
  7. ա. Սիմոն Կիրենացի
  8. բ. Յովսէփ Արիմաթեացի
  9. գ. Բարաբաս
  10. Պօղոս
- Երկրորդականի անկիւն
1. բ. Կորնթացիներուն Ա. 13
  2. դ. Տիտոս
  3. բ. Պօղոս
  4. բ. Պօղոս
  5. գ. 7
  6. ա. Յակոբոս եւ Յուդա
  7. դ. 4
  8. դ. 4
  9. ա. Յակոբոս 2.17
  10. բ. Պօղոս

### Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր ըստ Ղուկաս 10.27 ին  
 սրտովդ, մտքովդ, հոգիովդ, զօրութեամբդ, քու անձիդ  
 պէս

Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ -----, ամբողջ  
 -----, ամբողջ ----- եւ ամբողջ  
 ----- եւ Սիրէ՛ ընկերդ  
 ----- :

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

Անուն: \_\_\_\_\_

1. Յարութենէն ետք Յիսուս քանի՞ օր աշակերտներուն հետ մնաց:

- ա.- 3 օր
- բ.- 40 օր
- գ.- 50 օր
- դ.- 30 օր

2.- Յիսուսի ո՞ր աշակերտը Յիսուսի յարութեան չհաւատաց:

- ա.- Պետրոս
- բ.- Յովհաննէս
- գ.- Թովմաս
- դ.- Յակոբոս

3.- Յիսուսի խաչելութեան ընթացքին, իր աշակերտներէն ո՞վ ներկայ էր:

- ա.- Յովհաննէս
- բ.- Յուդա
- գ.- Մատթէոս
- դ.- Թովմաս

4.- Ո՞ր օրն էր առաջին Սուրբ Հաղորդութեան օրը:

- ա.- Յիսուսի ծով ու հացը շաւոցուցած օրը:
- բ.- Հրաշալի ձկնորսութեան օրը:
- գ.- Վերջին ընթրիքին օրը:
- դ.- Յարութիւնէն ետք Յիսուսի աշակերտներուն երեւցած օրը:

5.- Ե՞րբ Սուրբ Հոգին կրակէ լեզուներու նման եկաւ եւ հանգչեցաւ Յիսուսի աշակերտներու վրայ:

- ա.- Յիսուսի յարութեան օրը:
- բ.- Յիսուսի խաչելութեան ընթացքին:
- գ.- Պենտէկոստէի տօնին:
- դ.- Յիսուսի Համբարձման օրը:

6. Պենտէկոստէ «Pentecost» ո՞ր թիւին կը համապատասխանէ:

- ա.- 5
- բ.- 40
- գ.- 50
- դ.- 30

7.- Պենտէկոստէ Հայերէնով ո՞ր տօնին կը համապատասխանէ զոր այս տարի Մայիս 11 ին տօնեցինք:

Հ-----

8.- Հոգեգալուստին յաջորդող Կիրակին Հին Կտակարանի ո՞ր մարգարէին տօնն է:

- ա.- Յովհաննէս
- բ.- Եղիսէ
- գ.- Մատթէոս
- դ.- Եղիա

9.- Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի Ելն ի Վիրապի տօնը շաբթուան ո՞ր օրը կը զուգահիսի:

- ա.- Հինգշաբթի
- բ.- Ուրբաթ
- գ.- Ծաբաթ
- դ.- Կիրակի

10.- Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի Ելն ի Վիրապին յաջորդող օրը ի՞նչ տօն է:

Կաթուղիկէ Սուրբ Է-----

### Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1. Երկրորդ Ծաղկազարդը Համբարձումի յաջորդող Կիրակին է: Այս տարի ե՞րբ էր Երկրորդ Ծաղկազարդը:

-----  
-----

2. Ո՞րն է շիտակ շարքը հետեւեալ Կիրակիներուն:

- ա.- Երկրորդ Ծաղկազարդ, Հոգեգալուստ, Յիշատակ Եղիա մարգարէին, Տօն Ս. Էջմիածնի
- բ.- Երկրորդ Ծաղկազարդ, Տօն Ս. Էջմիածնի, Հոգեգալուստ, Յիշատակ Եղիա մարգարէին
- գ.- Երկրորդ Ծաղկազարդ, Յիշատակ Եղիա մարգարէին, Տօն Ս. Էջմիածնի, Հոգեգալուստ
- դ.- Հոգեգալուստ, Երկրորդ Ծաղկազարդ, Տօն Ս. Էջմիածնի, Յիշատակ Եղիա մարգարէին

3. Ս. Էջմիածնի տօնին նախորդող Երկուշաբթին տօնն է:

-----

4. Ս. Էջմիածնի տօնին նախորդող Երեքշաբթին տօնն է:

-----

5.- Նոր Կտակարանի 27 գիրքերէն որ գիրքին մէջ կը կարդանք Հոգեգալուստին մասին:

-----

6. Սուրբ Հոգին ի՞նչ ձեւով հանգչեցաւ առաքեալներուն վրայ:

7. Առաքեալները ի՞նչպէս որոշեցին թէ ո՞վ պիտի փոխարինէ Յուդան:

Աղօթեցին եւ  
-----  
ձգեցին:

8. Ո՞վ փոխարինեց Յուդան:

- ա. Մատաթիա
- բ. Բարսաբա
- գ. Յովսէփ
- դ. Արդար

9. Այս տարի երբ է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Ելն ի Վիրապէն տօնին յիշատակը:

-----

10. Ի՞նչ տօն է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի Ելն ի Վիրապին յաջորդող Օրը:

-----

Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Երկրորդականի անկիւն

1- Յիսուս իր յարութենէն քանի՞  
օր ետք համբարձաւ:  
- ----- օր

2- Հոգեգալուստը՝ կամ  
Պենտէկոստէն Յիսուսի յարութենէն  
քանի՞ օր ետք տեղի ունեցաւ:  
----- օր

3. Աստուածաշունչի ո՞ր գիրքին մէջ  
կը կարդանք Հոգեգալուստին  
մասին:  
-----

4. Առաքեալներու Գործերը գիրքին  
Ա. գլուխին մէջ կը կարդանք թէ  
Առաքեալները փոխարիներէն  
Յուդան : Որո՞ւ հետ:  
ա. Մատաթիա  
բ. Բարսաբա

5. Առաքեալները ի՞նչ միջոց  
գործածեցին հաւատացեալներուն  
կողմէ երկու ներկայացուած անձերէն  
մէկը զատելու:  
-----  
-----

6. Չորս Աւետարաններէն ո՞ր  
երկուքին մէջ կը կարդանք Յիսուսի  
համբարձումին մասին:  
-----  
-----

7. Հետեւեալ գիրքերէն ո՞ր մէկուն  
մէջ կը կարդանք Հոգեգալուստի  
մասին:  
ա- Մատթէոս  
բ- Մարկոս  
գ- Ղուկաս  
դ- Առաքեալներուն Գործերը

8. Ո՞վ գրած է Առաքեալներուն  
Գործերը գիրքը:  
ա- Մատթէոս  
բ- Մարկոս  
գ- Ղուկաս  
դ- Յովհաննէս

9. Այս տարի ո՞ր տօնը կը տօնենք  
Մայիս 25 ին:  
-----  
-----

10. Հին կտակարանի ո՞ր դէպքը  
մաս կը կազմէ Հայաստանի  
Հանրապետութեան զինանշանին:  
-----  
-----

# Մայիս Ամսուան Տօնացոյց

- 1: Հինգշաբթի՝ Տօն Համբաձման Քրիստոսի
- 4: Կիրակի՝ Բ. Ծաղկազարդ
- 11: Կիրակի՝ Հոգեգալուստ
- 18: Կիրակի՝ Յիշատակ Եղիա Մարգարէին
- 19: Երկուշաբթի՝ Ս. Հռիփսիմեանց Կոյսեր
- 20: Երեքշաբթի՝ Ս. Գայիանեանց Կոյսեր
- 24: Ծաբաթ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ելն ի Վիրապ
- 25: Կիրակի՝ Տօն Կաթուղիկէ Սուրբ Էջմիածնի
- 28: Չորեքշաբթի՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան 90րդ Տարեդարձ
- 31: Ծաբաթ՝ Մեծն Ներսէս Հայրապետ

## Կարճ լուրեր Կիրակնօրեայէն

Կիրակնօրեայ Դպրոցի

## Ամապերջի Հանդէսը

տեղի կ'ունենայ

Կիրակի **8** Յունիս կ.ե. ժամը

**1:30** ին

Բասդրմաճեան Սրահին մէջ

Մուտքը Ազատ

Ներկայս ընդունիլ իբրեւ

անձնական հրաւեր

«ՄԱՇՏՈՅԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

Գերկայ եւ Գախկին թիւերը կը գտնուին Գաւել համացանցի վրայ:

Այցելեցէ՛ք

[www.sourphagop.org/mashdots](http://www.sourphagop.org/mashdots)

# Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցույ Սուրբ Յակոբ Կիրակցորեայ Դպրոցի ամսաթերթ

Յունիս 2008

ԺԵ տարի- թիւ 10

Այս թիւով...

Աստուածաշունչը մանուկներու համար.  
Յովհաննէս Մկրտիչ: Էջ 2-3-4

Եզակի գիրեր: Էջ 5

Ո՞րն է ճիշդ պատասխանը: Էջ 5

Կիրակցորեայ Դպրոցի կամաւոր խմբակը:  
Էջ 6



Զգեցէք որ  
մանուկները ինծի  
գան, արգելք մի՛  
ըլլաք անոնց,  
որովհետեւ  
այդպիսիներուն է  
Աստուծոյ  
արքայութիւնը:

Մարկոս 10.14

Վարդավառ «Այլակերպութիւն կամ  
Պայծառակերպութիւն», մանրանկար 13-  
րդ դար ընդօրինակուած «Սմբատ  
Սպարապետի Աւետարան»էն  
Մատենադարան ձեռագիր թիւ 7644

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակույթ

# Աստուածաշունչը մանուկներու համար Յովհաննէս Մկրտիչ

Զաքարիա անունով քահանայ մը կար որ Եղիսաբէթ անունով կին մը ունէր:

Անոնք երկուքն ալ Աստուծոյ կը հնազանդէին եւ բարի կեանք մը կ'ապրէին: Երկուքն ալ ծեր էին բայց օր մը, երբ եկեղեցիին մէջ շատ մարդիկ խմբուած աղօթք կ'ընէին, Զաքարիա խունկ կը վառէր, հրեշտակ մը երեւցաւ իրեն: Զաքարիա շատ վախցաւ, բայց հրեշտակը իրեն ըսաւ «Աստուած աղօթքդ լսեց եւ դուն մանչ գաւակ մը պիտի ունենաս որու անունը պիտի դնես Յովհաննէս: Ան Տիրոջ աչքին մեծ պիտի ըլլայ, Սուրբ Հոգիով պիտի լեցուի եւ քեզի ուրախութիւն պիտի պատճառէ»:

Զաքարիա ըսաւ «Ինչպէ՞ս կարելի է, ես եւ կինս շատ ծեր ենք եւ



զաւակ չենք կրնար ունենալ»:

Հրեշտակը ըսաւ «Ես Գաբրիէլն եմ, տէրը զիս ղրկեց որ քեզի այս լուրը աւետեմ: Բայց որովհետեւ չհաւատացիր խօսքերուս, համր պիտի մնաս մինչեւ այն օրը երբ ըսածս կատարուի»:

Երբ Զագարիա եկեղեցիէն դուրս ելաւ համր էր, եւ չէր կրնար խօսիլ:


Ամիսներ ետք, զաւակը ծնաւ եւ անունը դրին Յովհաննէս:

Երբ Յովհաննէս մեծցաւ, ան կը պտտէր Յորդանան գետին եզերքը գտնուող բոլոր շրջաններուն մէջ եւ կը քարոզէր, ան ջուրով կը մկրտէր մարդոց եւ կ'ըսէր «Պատրաստեցէք տիրոջ ճանապարհը, ինծմէ հզօրը պիտի գայ շուտով եւ ձեզի Սուրբ Հոգիով եւ կրակով պիտի մկրտէ»:



Աւելի ուշ, երբ ամբողջ ժողովուրդը մկրտուեցաւ, Յովհաննէս Յիսուսի ալ մկրտեց: Այն ատեն երկինքը բացուեցաւ եւ Սուրբ Հոգին տեսանելի կերպարանքով աղաւնիի պէս իջաւ անոր վրայ: Երկինքէն ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր «Դուն ես իմ սիրելի Որդիս. քեզի հաճեցայ»:

Յիսուս անկէ ետք 40 օր անապատ գնաց եւ երբ վերադառնաւ իր առ արելութիան սկսաւ:



գ	թ	զ	դ	ը	է	ե	բ	ա
դ	ե	ը	ա	բ	զ	թ	գ	է
է	բ	ա	թ	ե	գ	զ	ը	դ
ա	է	բ	ե	զ	ը	դ	թ	գ
զ	գ	թ	բ	դ	ա	ը	է	ե
ե	ը	դ	է	գ	թ	ա	զ	բ
ը	զ	ե	գ	է	դ	բ	ա	թ
թ	դ	է	ը	ա	բ	գ	ե	զ
բ	ա	գ	զ	թ	ե	է	դ	ը

Էջ 5 ի «Եզակի գիրեր» ուն լուծումը

**Եզակի գիրեր**  
Հայերեն գիրերով Sudoku

ա	գ	զ	է	դ	թ	ը	ե	բ
դ	է	թ	ե	բ	ը	ա	զ	գ
ե	ը	բ	ա	զ	գ	դ	է	թ
թ	զ	ը	բ	ա	է	գ	դ	ե
բ	դ	ա	զ	ե	զ	թ	ը	է
է	ե	գ	ը	թ	դ	բ	ա	զ
ը	ա	է	թ	գ	ե	զ	բ	դ
զ	թ	ե	դ	ը	բ	է	գ	ա
գ	բ	դ	զ	է	ա	ե	թ	ը

գ		զ	դ	ը		ե	բ	
դ				բ				
					գ			
		բ	ե				թ	
զ	գ						է	ե
	ը				թ	ա		
			գ					
				ա				զ
	ա	գ		թ	ե	է		ը

Նախորդ «Եզակի գիրեր» ուն  
լուծումը

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

**Ո՞րն է ճիշդ պատասխանը**

Մայիս ամսուան պատասխանները

Մանկապարտէզի անկիւն  
սրտովդ, մտքովդ, հոգիովդ,  
գորութեամբդ, քու անձիդ պէս  
Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. բ. 40
2. գ. Թովմաս
3. ա. Յովհաննէս
4. գ. Վերջին ընթրիքին օրը
5. գ. Պենտէկոստէի օրը
6. գ. 50
7. Հոգեգալուստ
8. դ. Եղիա
9. գ. Շաբաթ
10. Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի  
Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն
1. Մայիս 4
2. ա. Բ. Ծաղկազարդ, Հոգեգալուստ,  
Յիշատակ Եղիա մարգարէի, Տօն Ս.  
Էջմիածնի
3. Ս. Հոփսիսմեանց
4. Ս. Գայիանեանց
5. Առաքելներուն Գործերը

6. Կրակէ լեզուներու
7. Վիճակ ձգեցին
8. ա. Մատաթիա
9. Մայիս 24
10. Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի  
Երկրորդականի անկիւն
1. 40
2. 50
3. Առաքելներուն Գործերը
4. ա. Մատաթիա
5. Աղօթեցին եւ Վիճակ ձգեցին
6. Մարկոս եւ Ղուկաս
7. դ. Առաքելներուն Գործերը
8. գ. Ղուկաս
9. Կաթողիկէ Ս. Էջմիածնի
10. Նոյեան Տապանը

# ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

## ԺԵ. Տարի

### Խմբագիր՝ Շաղիկ Պոյանճեան

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ  
համացանցի վրայ:

**[www.sourphagop.org/mashdots](http://www.sourphagop.org/mashdots)**

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ  
Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը.-

Ուսուցիչներ՝	Թամար Գիզիրեան
	Վերժին Գէպթանճեան
	Յասմիկ Նաճարեան
	Գարոլ Մանուկեան
	Աշխէն Իշխանեան
	Շողիկ Նաճարեան
	Յասմիկ Գանաճեան
Պարբերաթերթ՝	Շաղիկ Պոյանճեան
Տնօրէն՝	Թորոս Պապիկեան